



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՀԻՇՏԱՐԸ ԿՈՒԹԻՒՆ Ե. Մ. ՄԱԼԽՈՍԵԱՆՅԻ

Ա Շ Ը Ղ-Ղ Ա Ր Ի Բ Լ

ԵՒ

Ձ Ա Հ-Ս Ա Ն Ա Մ Ի


Հ Ե Բ Ե Ա Թ Ը

Հ Ա Յ Ե Ր Ե Ն ԵՒ Թ ՈՒ Ի Բ Ե Ր Ե Ն Ե Ր Գ Ե Ր Ո Վ



Փոխադրեց քուրքերեկից

Ս. Ղ. Է. Բ. Մ. Ե. Ի. Թ. Ա. Բ. Ն. Ն.





ԱՇՐԴ—ՂԱՐԻՅԻ և ՅԱՀ—ՍԱՆԱՄԻ

Հ Ե Ք Ե Ա Թ Ը

Հեքեթաբանների ասելով ժամանակոց պարսկաստանի թավրիզ քաղաքում խօջա Ահմատ անունով մի խիստ հարուստ վաճառական է եղել, որի կարողութիւնն ու հարստութիւնը չափ ու սահման չեն ունեցել: Նա ունենում է Րասուլ անունով մի տղայ ու 13-14 տարեկան մի աղջիկ, որը այնքան գեղեցիկ է լինում, որ կարծես թէ տասնուհինգ օրուայ բոլորած լուսին լինէր... Նրան տեսնողը կարծում է թէ, ոչ թէ հոգեղէն արարած է, այլ գրախօից լետ եկած մի հրեշտակ, որ թող է տուել իրան մարդկային ցեղի հետ միասին հաւասար ապրելու:

Կարճ խօսքով ասենք. մի օր յանկարծ այդ վաճառականը սաստիկ հիւանդանում է ու օրերով անկողնում տառապում: Ոչ բժշկական միջոցները, ոչ ընտանեկան պահպանութիւնն ու հոգատարութիւնը և ոչ որ և է խնամք չեն կարողանում նրան օգնել ու հիւանդութիւնը բուժել... Վերջ ի վերջոյ մի օր էլ ընկնում մեռնում է:

Հաւաքվում են ազգականներն ու բարեկամները, լաց են լինում ողբում են նրա անակնկալ մահը և յուզարկաւորութեան համար բոլոր պատրաստութիւնը տեսնելով, գենպետին իրան հոգևորական դասի հետ հրաւիրելով, աղօթում են ու թաղման կարգ կառուցում, մարմինը տանում հողին են յանձնում, և իբրև սգաւորներ հրադառնում տուն:

Дозволено Цензурою, 2 Ноября 1904 г. г. Тифлисъ.



Բայց այդ քաղաքում քառասնի չափ ձրիակեր ու պորտորոյձ սրիկաներ են լինում, որոնց պարապմունքը, հոգսն ու մտածութիւնը ընդհանրապէս միմիայն այն է եղել, որ փողոցէ փողոց պտտելով առիթներ են փնտռում մի գործի մէջ միջամտելու և նրանից անուղղակի կերպով օգտուելու:

Լսելով Ահմատ խօջայի մահը, րօպէաբար մէկը միւսին հաղորդում են և իրար գլխի հաւաքուած, մի և նոյն օրը երեկոյին գնում են նրանց տունը ու իրանց ձեւացնելով նրա շատ մտերիմ ու ցաւակից բարեկամներ... մանաւանդ թէ խիստ բարիքներ են տեսած ու վայելած լինում նրանից. լաց ու կոծով սկսում են ձէն ձէնի տուած սուգ ու շիւան անել, դառնապէս ողբալ նրա անժամանակ մահը և սեւեր հագած երկար սուգ պահել:

Խօջայի միամիտ տղան սրանց այդքան ողբն ու ցաւակցութիւնը տեսնելով, խղճում է նրանց վրայ ու ասում... „մի փոքր էլ հանգստացէք բարեկամներ... Հազիւ հազ իմ հօր ճըշմարիտ բարեկամներին գտայ. յոյս ունիմ որ ինձ էլ բարեկամ կը լինիք... Այսուհետև այլ ևս այստեղից չէք հեռանայ— միշտ ինձ մօտ կը լինիք ու մեր ընտանիքին կը մխիթարէք“:

Հէնց նրանց էլ այդքանն էր պէտք... „Աստուած ողորմած է. թող քոյ սրտովդ Աստուած քեզ տայ, ասում են... մենք յոյս ունինք, որ քեզ շատ օգտակար կը լինինք ու ասածներդ կատարելով յոյսդ կարդարացնենք... և մեր գլխի թագ ու պսակ հոգելոյս Ահմատ խօջային էլ հանդերձեալի մէջ կուրախացնենք, որ այսուհետև իւր փոխարէն, որդուն ենք ծառայում ու ձեռնտու լինում“:

Քոյրն այս խօսքերն ու խոստումները նրանցից լսելով, առաջ է գալիս ու ասում.— „Պաշոններ, թող Աստուած ձեզ երկար կեանք տայ, որ մեր այս դառն ու տխուր օրերին մեզ մխիթարում էք... Աստուծուց կը խնդրեմ, որ ձեզ ոյժ ու կարողութիւն տայ, որպէս զի, թէ ներսը, թէ դուրսը և թէ ամեն ձեռնարկութեանց մէջ աստուծոյ օգնութեան ձեռք կարկառէք... այնպէս որ հայրս օգուցեալների մէջ իրան

ձաղդաւոր զգայ, որ բարեկամները իւր որդուն շրջապատած քարձի թողի չեն անում... Լաւ կը լինի, որ երբեմնապէս եղբօրս հետ գնաք գերեզմանատուն, հօրս հոգու համար աղօթէք, խնդրուածք անէք, որ արդարաց դասը դասուի... Կարծեմ սա մի գեղեցիկ և աստուածահաճոյ գործ կը լինի ու ձերի հետ մեր սրտերն էլ մի քիչ կը բացուին“:

Այս առաջարկութիւնը լսելով ու սիրով ընդունելով, երիտասարդները նրանց հետներն առած, վեր են կենում գնում են գերեզմանատուն, նորից այնտեղ սգում-ողբում են ու ննջեցեալի հոգու համար աղօթելուց յետոյ, գերեզմանին երկրպագում... Վերէն վար թամաշա անողները մնացել էին զարմացած սրանց արարմունքի վերայ... բայց տղայի մայրը մօտենում է նրանցից մէկին ու խնդրելով ասում.— «որդուս տխուր սիրտը բացուելու համար, մի քիչ տարէք դէպի մի ուրախ կողմ»:

Շատ բարի—ասում է, ու վեր են առնում հետները տանում մի պարտէզ:

Մտնելով սլարտիզը ու նրա գեղեցկութիւնը տեսնելով, երիտասարդն ասում է.— „ես այստեղ շատ սիրեցի“:

Այդ պարտիզի մի անկիւնում մի փոքրիկ, բայց խիստ գեղիցիկ մի շէնք կար, որի մօտ իրանք էլ նստում են... միայն այդ շէնքի գեղեցկութիւնն և զարդն ու զարդարանքը լեզուով պատմել չէր լինի... այնպէս որ վարդերն ու հարիւրաւոր գոյնզգոյն ծաղիկներ մի կողմն էին բացուել. սոխակներն և ուրիշ երգող թռչունները միւս կողմը երգում... ինչ և իցէ, այդտեղ մի կատարեալ դրախտ էր, ուր այդ զուարճասէր պարոններն ընկան ու շատ գոհ մնացին:

Մի քիչ զբօսնելուց յետոյ, այդ սրիկաներից մէկը ծածկաբար գնում է փողոց մի քանի շիշ գինի ու կարակուր բերում, որ փոքր ինչ ժամանակ անցկացնեն: Իերելուց յետոյ սեղանը կարգին պատրաստում են ու շիշերը մէջտեղը շարում:

Երիտասարդն այս բանը նկատելով հարցնում է.— „կարո՞ղ եմ

գիտենալ, թէ այդ ինչ էք անում”:

„Յարգելի պարոնս, ասում են, տեղի դրութիւնն ու գեղեցկութիւնը այնպէս են պահանջում. . . Դեռ նախ շնորհ արէք ինքներդ սեղանին մօտ գալու“... և անմիջապէս թեւից բռնած հրաւիրում են ու սեղանի վերին ծայրը նստացնում... Այնուհետեւ շիշերը բաց անելով, լցնում են բաժակին ու մատուցանում նրան ասելով, „համեցէք այս բաժակը վայելէք“:

Երիտասարդը սկզբում խմելուց հրաժարվում է, պատճառաբանելով որ բնաւ խմելու սովորութիւն չունի. բայց երբ այս ու այն կողմից ստիպում ու հարկադրում են, յակամայից ստիպուած է լինում մի երկու բաժակ ընդունելու... Այդքանն էլ բաւական էր այն անսովոր գլխին: Այնուհետեւ կատարը տաքնալով ու քէֆը գալով, մեռած հօրն էլ է մոռանում ու նրա համար որոշած սուգ պահելն էլ... մի քանի բաժակ էլ որ խմում է, ամեն ինչ մոռացութեան է տալիս... ինչպէս ասում են— „դար ու փոս առաջին հաւասարում է...“: Այնուհետեւ խելքը գլխից գնալով, սկսում է ոսկին ու արծաթը բռնելով այս ու այն կողմ շաղ տալ և լցնել աւազանի մէջը... Այսպէս թէ այնպէս, դեռ երեկոյ չեղած, այդ օրը „խառնուհիւս“ — ուղիղ հազար բուբլի փող է վատնում:

Երեկոյեան պահուն այդ քառասուն հոգի բարի պտուղ ընկերների հետ վերադառնում է տուն ու դրսի պակաս թողածը մինչև կէս գիշեր տանը լրացնում...: Դեռ այդ բաւական չէ, ամեն ինչ մոռացած ու այդ օրուայ անցուցած կեանքից գոհ... „արդեօք երբ պիտի լուսանայ, որ քէֆը նորոգենք ու բարեկամներիս դարձեալ իրանց արժանաւոր պատիւը տամ“ ասում է ու վեր ընկնում քնում:

Այս խօսքերն անմոռաց մտքերն ունենալով... դեռ լոյսը նոր էր բացուել, որ այդ յորովայնէ ընտրեալ սրիկայ բարեկամները քներից զարթնում են ու իրանց վայել առանձին

պատրաստութիւնով աճապարում քէֆի տեղը...: Այդ օրն աւելի շուալ ծախսեր է անում թշուառ երիտասարդն ու ևս առաւել չսփազանց փողեր վատնում:

Այսպէս համարեա ամեն օր գինետներում և ուրիշ գուարճութեանց տեղերում ուտում խմում ու հների վերայ նորանոր ընկերներ աւելացրած քէֆ ու ա՛ւ ու թ՛ւ է անում...: Կարճ միջոցում ձեռքի եղած գուճարի գլխից մտնում, տակից գուրս է գալիս— վատնում է ու հայրական ահագին ժառանգութիւնից խալառ դատարկ նստում և օրական հացի կարօտ մնում... Մինչև անգամ մօր ու քրոջ ձեռքում եղած փողերն էլ մի կերպ համոզելով կորցում վատնում է և այնուհետեւ ամեն բանից զրկուած, մնում դառն աղքատ:

Իսկ նրա քառասուն սրիկայ ընկերները օգտուելով իւր անխելքութիւնից, դառնում են մեծ հարստութեան տէր վաճառականներ: Նրանցից իւրաքանչիւրն սկսում է մի քանի գործակատարների ձեռքով գործ վարել ու դարձնել...: Եւ այնուհետեւ տեսնելով որ այլ ևս երիտասարդի երակներում արիւն չը մնաց ծծելու, հեռանում են— երեսները նրանից շուռ են տալիս ու էլ բնաւ չեն ճանաչում, թէ գուճով ես:

Այդ ժամանակ երիտասարդը խելքը գլուխը հաւաքած նոր տեսնում է որ ինքը խաբուած է, այդ սրիկաները իւր հօր բարեկամները չեն... „Հէյ վա՛խ, մի՞թէ նրանք իմ կարողութեան գլխին էին պտտում, որ յափշտակեն ու փորները քաշեն... Բայց այլ ևս ինչ օգուտ, երբ ձեռնիցս թռել գնացել է. ուրեմն էլ ինչ կարող եմ անել... „ասում է ու սկսում ձիւ առուտուր անել և առաւօտնից մինչև երեկոյ հազիւ հազ մի ցամաք հացի գին կարողանում է ձեռք բերել, որ ապրում են:

Մի օր էլ ինքն իրան մտածում է, թէ— „այս գործով ոչինչ չի լինի, որովհետեւ ես սրանից կարգին բան չեմ հասկանում, գոնէ մեզ ապրեցնելու համար, մի արհեստ պէտքէ սովորեմ, որ անկարօտ ապրենք“: Այսպէս խորհելով երբ թա-

h 596

փառումէր... մի անգամ մի պղնձագործի խանութի մօտից անցնելիս, տեսնում է որ մեծ ու փոքր միասին աշխատում են, կանգնում նրանց նայում է և ապա վարպետի ձեռքը համբուրելով խնդրում, որ իրան աշակերտ վերցնէ:

Վարպետը տեսնելով նրա վստահութիւնը, համաձայնում է արած առաջարկութեան հետ...: Մի անգամ վարպետն աւում է նոր աշակերտին, թէ գնա մի գաւ ջուր բեր: Բայց երիտասարդը մուրճերի ձայնից վարպետի ասածը չի լսում: Վարպետը մի քանի անգամ խօսքը կրկնում է. բայց դարձեալ չի լսում: Այն ժամանակ նեղանալով ու մի քանի ապտակ խփելով, մօտից արձակում է:

Այս անգամ նա գնում դերձակի մօտ է աշակերտ մըտնում...: Մի անգամ նկատում է, որ վարպետը միայն ձևում ու կարում է: Նրա արածը հեշտ բան կարծելով, մտքումը դնում է որ մի օր վարպետը տեղ գնալիս, գուքանում գտնուած բեհեզներէից (աթլաս) մի թօփ վեր բերէ ձևէ ու կարէ, որ վարպետը գալով տեսնի ու ասէ, թէ ինչ շուտ սովորեց արհեստը, և գովէ ու վարձատրէ իրան:

Այդպէս էլ անում է... երբ մի անգամ վարպետը 'տեղ է գնում, թանկագին բեհեզներէից մի թօփ վեր է բերում գցում առաջն ու իւր խելքի կտրածի պէս, իբր թէ ձևում, բայց իսկապէս մանրում կոտորում է ու կարում:

Վարպետը գալով ու եղածը տեսնելով բարկացած հարցնում է... „այ տղայ այս թնչ օյին ես բերել թանկագին աթլասի գլխին“:

„Ինչպէս տեսնում ես, վարպետ, քեզ համար ձևել, կարել ու պատրաստել եմ, համարձակ պատասխանում է:

Այս միամիտ ու յանդուգն պատասխանը լսելով, բարկութիւնից վարպետի խելքը գլխից գնում է ու „ես վարպետ տեղովս հագիւ և դժուարութեամբ եմ կարողանում այսպիսի հագուազիւտ աթլասները ձևել ու կարել“ ասում է և մօտից արտաքսում անմիտ աշակերտին:

Ինչ և իցէ, մի խօսքով պէտքէ ասել, որ կարճ ժամանակամիջոցում երեսուն և երկու արհեստի է գնում ու բոլորից էլ դատարկ նստում— ոչ մէկից չի օգտվում... ամեն մի արհեստի մէջ մի պակասութիւն անելով, առանց սովորելու արտաքսվում է:

Այս կերպ տարտամ ման եկած ժամանակ, մի օր տեսնում է որ մի սրճարանի դրան առաջ ժողովուրդը հաւաքուած լսում է:— „Արդեօք սա թնչ բան է, ասում է ու առաջ գնալով տեսնում է, որ երկու երգիչներ երգում են և ուկնդիրներին զբաղեցնում: Ուղիղ գնում է երգիչների մօտ ու ձեռքերը համբուրելով խնդրում, որ իրան աշակերտ վերցնեն:

Երգիչները նրա երեսին նայելով— „սա աշխարհ եկած մի լոյսի կտոր է, կամ ծնունդ առած մի հրեշտակ. թող հազար տարիներ ապրի“ ասում են և ընդունում աշակերտ:

Երիտասարդը մի քանի օր վարպետներին ծառայելով, խիստ աչքի է ընկնում ու ամեն կողմից լաւ ընդունելութիւն գտնում: Նրա մաքին լսողները կամաց կամաց սկսում են յաճախել սրճարան ու իրանց մէջը խորհուրդ են կազմում թէ.— „եթէ այս երիտասարդը քնար ածէ ու երգէ, միւսանգամ դարձեալ կգանք սրճարան...“:

Վարպետներն այս բանը իրանց ականջներով լսելով— „շատ բարի, ասում են, այս երեկոյ քնար ածելու մէջ դեռ մի փոքր էլ վարժեցնենք, վաղը համեցէք լսելու նրա ածելն ու երգելը“:

Սրճարանի մարդիքն ուրախութեամբ լսում ու ընդունում են վարպետների ասածները և գնում իրանց գործին:

Վարպետները նոյն օրը երեկոյեան իրանց աշակերտին սազ ածելու մէջ մի փոքր վարժեցնելուց յետոյ, կէս գիշերին մօտ ամեն մինը մի կողմ թէք ընկած քնում են...: Իսկ երիտասարդ աշակերտի քնած միջոցին, երազում գալիս է սուրբ Սարգիսն ու մի բաժակ գինի խմացնում նրան Թիֆլիզեցի Խօջա—Սինանի Շահ-Սանամ անունով աղջկայ կենացը

ու նրան „բռնա“ տալիս... մի և նոյն բանը Թիֆլիզում, հէնց նոյն րոպէին, պատահում է Շահ-Սանամին... որոնք միաժամանակ երազներում միմեանց պատկերը տեսնելով, իրար վերայ սիրահարվում են...: Հէնց այդ միջոցին երկու նոր սիրահարներից իւրաքանչիւրին, նշանի համար մի մի ոսկէ թաս է տալիս ու մէկին Աշըղ-Ղարիպ և միւսին Շահ-Սանամ մականունները կնքելով, ինքն իսկոյն նրանց աչքից անյայտանում է:

Երիտասարդը քնից արթնացած միջոցին, սիրտը սիրոյ կրակից այրվում էր և յուզուած ծովի ալիքների նման տակուվրայ լինում... մանաւանդ երբ կշտին դրած է տեսնում նշանի համար տուած ոսկէ թասը, ևս առաւել այրվում ու բորբոքվում է...: Ինչ և իցէ, թասը ծոցը դնելով ուղղակի գալիս է սրճարան ու մի քիչ երգ ու նուագ լսելուց յետոյ, այնտեղ գտնուած ծերունիներից մէկին խնդրում է, որ վարպետի ձեռնից սազը առնի իրան տայ: Ծերունին խընդրելով ու աղաչանքով վարպետից սազն առնում ու տալիս է երիտասարդին:

Սազը ստանալուն պէս առնում է ձեռքը, մի լաւ քօքում—պատրաստում, ու դէմ անելով կուրծքին և սրտից մի խոր ախ քաշելով սկզբում մի երգ երգում...: Վարպետները լսելով նրա երգն ու նուագը, մնում են զարմացած և ասում են, թէ—«այս գիշեր մեր աշակերտը նոր վարպետութիւն է ստացել...»: Մի և նոյն ժամանակ ստիպում են նրան որ շարունակէ երգելը:

Նրան հէնց մի այգպիսի պատճառ էր պէտք: Վարպետներից հրաւէր ընդունելուն պէս, սկսում է նորից երգել.—

Ղատրը Հախտան բան բիր դիլակ դիլատըմ,
Շիւքիւր միւրատըմի վերտի ահ բանըմ,
Բիր դիլակ դիլատըմ՝ Հախտա եարաթտի,
Եարանլար երըշտի նազարկեահ բանըմ:

Գեանճ եաշըմտա գեօրտիւմ դիւնեա դամընի,
Բու ջահըր զատտարըն սարանճամընի,
Սուենտուլար դըրիւլար դաստի ջամըմի,
Բոյնումա թախըլտի տօղրի րահ բանըմ:

Խըսում—ղովում եղլտըլար գեալտըլար,
Այըրտըլար տաղտան տաղա սալտըլար,
Եարանլար վէրտիկի սըրրի բիլտիլար,
Գիլիմ էտար Ֆիքրու զիքը շահ բանըմ:

Արգու չաքիպ գեալտըմ ուստատ էօկիւնա,
Բիմսա բախմազ բու Ղարիբն հալընա,
Գեօնուլ զուշ գեօնտուրուր եարն գիւլընա,
Էթմաք Փարեատու զար տայմա ան բանըմ:

Եարանլար Բասուլա ենկի գէտիլար,
Օնլարտա բիր բիրըն տութա դէտիլար,
Թիֆլիզտա Սանամի արա դէտիլար,
Իշըմ գիւճում օլտի դըսլա գեահ բանըմ:

Հայ քարգ.

Տէր Արարչից մի խնդրուածք արեցի,
Փնօք, որ իմ փափագին նա ինձի հասուց,
Ինչ որ սրտով ես նրանից խնդրեցի,
Նա իմ մօտս բնտիր ընկերներ բուսուց:

Մտտալ հասակումս ցաւեր շատ տեսայ,
Գեռ բանից համ չառած, հոգսի մէջ ընկայ,
Ձեռքս տուին մաքուր գինով լի կթխայ,
Որ իմ վզիս հոգսեր բերեց ծանրացուց:

Բարեկամ, ազգական հաւաքուան եկան,
Բաժանմանս համար սաստիկ լաց եղան,
Ընկերներիս տուած գաղտնիքն իմացան,
Այս բանը իմ խելք ու միտքս ցաւեցուց:

Կարօտ քաշած հասայ այս դրութեանը,
Մարդ չի նայում Ղարիպի ասութեանը,
Սիրտս միտք է անում սիրուհուս բանը,
Մտածմունքը մաշեց, սխ, ինձի լացուց:

Ընկերները Բասուլիս նոր ասին,
Ամեն մինը առնելու խորհուրդ տուին,
Թիֆլիզում որոնէ դու Շահ—Սանամին,
Գործս վատ գնալով ինձի դառնացուց:

Այս երգերը մի այնպիսի աշխուժով ու եռանդով է ասուում, որ բոլոր լսողները մնում են զարմացած: Իսկ վարպետները նախանձից դրդուած ու խռոված ասում են.—«բեր որդի, սազը բեր, մի քիչ էլ նստող պարօններին մենք զբաղեցնենք»:

Ներկայ երգիչները իսկոյն վրայ են բերում.—«վարպետներ, մենք ձեզ ամեն օր լսում ենք, թողէք մի քիչ էլ Բասուլին լսենք»:

Այս խօսքի վերայ վարպետները միմեանց երեսի նայելով, քաշվում են մի անկիւն ու խորհուրդ անում, որ Բասուլին իրանցից մի կերպ հեռացնեն. որովհետեւ, մտածում են, եթէ բանը այսպէս գնայ, նա մեր հացը ձեռներիցս կը խլէ:

Մի քանի օր անցնելուց յետոյ, վարպետները խաբելու նպատակով, երիտասարդին ասում են.—«մենք տեսնում ենք որ այստեղ գործ չկայ, մտածել ենք որ օտարութեան մէջ բազդ որոնելու գնանք... Ասում են որ Թիֆլիզում մի երգ երգելուն Ծ—Յ օսկի են տալիս... դու ինչ կասես, մեզ հետ կգաս թէ ոչ»:

«Ես ձեզ հետ ուրախութեամբ կգամ, պատասխանում է բայց մայր ու քոյր ունիմ, նրանց քնչ անեմ»:

„Նրանց էլ հետներս կը տանենք, ասում են վարպետները. Աստուած ողորմած է, մէկ մէկու օգնելով—միմեանց

օգնութեան ձեռք կարկառելով, ամեն բան կարելի է անել» ասում են ու սկսում իբր թէ ճանապարհի պատրաստութիւն տեսնել: Իսկ միամիտ ու անփորձ Բասուլը սազը հետը վեր առած գնում է մօր մօտ ու ամեն ինչ նրան մանրամասն պատմում: Բայց մայրը խիստ փորձուած կին լինելով ասում է,—«ինչո՞ւ ես փտած ու դատարկ բաների ետեւից ընկել որդի...»: Իեւ խօսքը չը վերջացրած,—«սպասիր դրութիւնս սրան մի կերպ հասկացնեմ, մտածում է Բասուլն ու սազը ձեռքն առած երգում:—

Բաշընա դօնտիւկիւմ գիւլ իւզլի անամ,
Անա բան Թիֆլիզա վարմալի օլտում,
Բիր շիվանըն աշգի դիւշտի սարըմա,
Անա բան Թիֆլիզա վարմալի օլտում:

Սանըն իլա էտիմ մուհապալաթ սազի,
Դիլարամ դուատան ունութմա բիզի,
Թիֆլիզտա գեօրիւնտի բիր ալա գեօզի,
Անա բան Թիֆլիզա վարմալի օլտում:

Բու սավտա Բասուլա դիւշտի սարըմա,
Քիմսալար րահմ էթմազ ահուզարըմա,
Գիտար օլտում շիմտի նազլի եարըմա,
Անա բան Թիֆլիզա վարմալի օլտում:

Բու սավտա տըր դիւշտի Ղարիպ բաշըմա,
Բախմազմիսան բանըմ գեօզըմ եաշընա,
Բիր գէճայ զավուշտում նազլի աշըմա,
Անա բան Թիֆլիզա վարմալի օլտում:

Աթէշըմա տաղլար տաշլար տաեանմազ,
Դարտըմ չօխ տըր, հալըմ քիմսալար բիլմազ,
Շիմտան զայրի բու եր բիզա ալ վէրմազ,
Անա բան Թիֆլիզա վարմալի օլտում:

Հայ. թարգ.

1 Գլխովդ պտոյտ զամ սիրելի մայրիկ,
Մայրիկ ես զէպ Թիֆլիզ գնալու եղայ,
Մի գեղեցկի սէրը սիրտս ընկաւ անուշիկ,
Մայրիկ ես զէպ Թիֆլիզ գնալու եղայ:

2 Քեզ հետ ես խօսումեմ որոշ խօսքերով,
Խնդրումեմ անմոռաց լիշես աղօթքով,
Թիֆլիզում ցոյց տուին ինձ մէկին սիրով,
Մայրիկ ես զէպ Թիֆլիզ գնալու եղայ:

Այդ սէրը տարածուեց-հասաւ իմ սրտին,
Ոչ ոք չի մտածում բնաւ իմ մասին,
Գնումեմ տեսնելու ես իմ սիրուհին,
Մայրիկ ես զէպ Թիֆլիզ գնալու եղայ:

Ինձ սպանեց թողեց այս սիրոյ բուքը,
Չէք տեսնում աչքերիս դառն արտասուքը,
Ինձ համար խիստ ծանր է սիրուհուս թուքը,
Մայրիկ ես զէպ Թիֆլիզ գնալու եղայ:

Իմ կրակիս սար ու քար չեն դիմանայ,
Յաւս շատ է, մարդ չի կարող իմանայ,
Այսուհետեւ այս երկիրը ձեռք չի տայ,
Մայրիկ ես զէպ Թիֆլիզ գնալու եղայ:

Այս երգերից մայրը հասկանում է որդու օտարութիւն գնալու բուն նպատակը և ասում է. — „որդի, երգդ ու նուագըդ շատ գեղեցիկ էր, բայց ժամանակը ցուրտ է— աշնանային է, մենք այժմ չենք կարող գալ, դու մենակ գնա: Եթէ ողջ մնացինք, գարնանն էլ արի մեզի տար... բայց եթէ ինձ լսես, այստեղ մնաս ու աշուղութիւնով պարապես, աւելի օգտաւէտ է“:

Մօրից այս բանը լսելով, Բասուլը նորից երգում է. —

ու պայման տուինք որդի... բայց ինչպէս տեսնում ես ձմեռը վրայ հասաւ, բանը դժուարացաւ... Երբ գարունը կը բացուի, տաքութիւնը կընկնի, սար ու դաշտ կը կանանչեն սառն աղբիւրները կը բլրակեն, վտակները կարկաչելով կը հոսեն, գիւղացիք ամառանոց դուրս կգան, այն ժամանակ ճամբայ կընկնինք և գառան խորոված ուտելով, քէֆ ուրախութիւն անելով կը գնանք ապահով տեղ կը հասնենք... Բայց եթէ դուք պատրաստուել էք, գնացէք, Աստուած ձեզ հետ, մենք էլ գարնանը կգանք... Առ այժմ ձեզ համար աղօթող ենք... ողջ գնաք ու առողջ վերադառնաք“:

Միամիտ Բասուլը չհասկանալով նրանց ներքին խարդախ նպատակը, խօսքը վերջացնելուց լետոյ, կրկնում է «ամէն». ու նորից պայման դնելով նրանց հետ, որ գարնանը գնան, ձեռներն համբուրում է, օրհնութիւններն առնում... և «մարդիս հաց տուողն Աստուած է» ասելով, վերադառնում է մօր ու քրոջ մօտ ու այդտեղից ճանապարհ են ընկնում... Սակայն այդ օրը այնպէս սաստիկ ձնախառն անձրև է անում, որ աշխարք ջրի մէջ կորչում է... և իրանք ցեխակոյտի ու թռչուած ուժուկուղ անելով, գնում հասնում են մի կարաւանի:

Կարաւանի գլխաւորը սրանց այս դրութեան մէջ տեսնելով՝ հարցնում է. — „այս անձրևին ու ցուրտ եղանակին այստեղրանք ինչ էք շինում. կամ թէ դուք ո՞վ էք և ո՞ւր էք գնում“:

Մայրն իսկոյն պատասխանում է. — „ես Թաւրիզեցի Խօջա Ահմատի վաճառականի կինն եմ, իսկ սրանք էլ իմ որդիքս են ... Սմուսինս մեռնելուց լետոյ, այս որդիս չար ընկերների պատահելով, իրան արբեցութեան տուեց և նրա թողած ահագին գանձերն ու կարողութիւնը, ունեցած չունեցած տուն ու տեղը վառնել— փչացնելուց լետոյ, այժմ գնում է Թիֆլիզ աշուղութիւն անելու ... Ահա թէ ինչու համար այս օրին ենք մնացել“:



„Միթէ դուք Ահմատ Խօջայի կինն էք ... Աստուած
Հոգին լուսաւորէ...: Նա իմ մեծ բարերարս էր“ ասելով
նրանց բոլոր իրեղենները բառնում է գրաստներին, իրանց
էլ նստեցնում է նրանց վերայ ու հասցնում մինչեւ Թիֆլիզ:

Քաղաքի մօտ վեր բերելով, ասում է. — „դէ գնացեք
որդի քաղաքում մի տուն վարձիր ու ձեզ համար ապրէք“:

Քաղաք մտնելով, Բասուլը մօրն ու քրոջը տանում է մի
մըզկիթի բազում վեր դնում, ինքը գնում է տուն գտնելու,
որ նրանց այնտեղ փոխադրէ:

Այդ միջոցին նրա աչքին է ընկնում մի մեծ շքեղ
ապարանք, որի տէրը դրանք նստած գրգլակ (նարկիլէ) էր
ծխում: Մօտենում է նրան ու ձեռքը համբուրելով ասում. —
„մեծագոր իշխան, օտարականներ ենք ու այսպիսի ձմեռ
ժամանակ մօրս ու քրոջս հետ մնացել ենք դուրսը— մզկիթի
բակումը... խնամք արա ու մեզ հիւր ընդունիր քոյ շէն
յարկի տակ“:

Բայց քարասիրտ իշխանը բնաւ ուշք չի դարձնում նրա
խնդրուածքին և հիւր չի ընդունում:

Բասուլը տեսնելով որ իւր վերայ բնաւ ուշադրութիւն
չը դարձրեց, ինքն իրան մտածում է. — „Գուցէ երգով ու
նուագով սրան խղճի բերեմ, ասում է, ու սազը ձեռքն
առնելով՝ հետեւեալ խղճահարական երգը երգում. —

Բաշընա դօնտիւկիւմ գիւլ իւզլի խօջա,
Ջանըմ խօջա, նանամ ջամիտա ղալտի,
Նա գիւնըմըզ գիւն տըր, նա գէճամ գէճա,
Ջանըմ խօջա, նանամ ջամիտա ղալտի:

Բանտա գեալտըմ, բանա բիր եր վերարսան,
Գիւշմիշլարըն հալի սանտա բիլիրսան,
Նանամ էօլուր, սան գիւնահտա ղալըրսան,
Ջանըմ խօջա, նանամ ջամիտա ղալտի:

Ետըրտըմ մալըմի, էլլատըմ զարար,
Նա գիւնըմ գիւն օլտի, նա գէջամ ղարար,
Նանամ իլա ղըզղարտաշըմ բարաբար,
Ջանըմ խօջա, նանամ ջամիտա ղալտի:

Եաղարըր բիր եանտան եաղմուր իլա ղար,
Նանամ գեօզլարընտան ղանլի եաշ թօքեար,
Փուլնճա էլ տըր, բանըմ ղահրըմի չեաքեար,
Ջանըմ խօջա, նանամ ջամիտա ղալտի:

Հայ. թարգ.

Գլխիդ մատաղ լինիմ սիրելի հայրիկ,
Սիրուն հայրիկ, մայրս մըզկիթում մնաց,
Ջօր ու գիշեր չունինք. մի տեղ տուր փոքրիկ,
Սիրուն հայրիկ, մայրս մզկիթում մնաց:

Ես եմ եկել, որ դու ինձի մի տեղ տաս,
Ընկածների դրութիւնը կը հասկանաս,
Մայրս մեռնի դու մեղապարտ կը մնաս,
Սիրուն հայրիկ, մայրս մզկիթում մնաց:

Ունեցածս կերայ, արի մեծ վնաս,
Աշխարքումը էլ ես չունիմ բաժին—մաս,
Մայրս ու քոյրս պահէ, մեծ վարձք կստանաս,
Սիրուն հայրիկ, մայրս մզկիթում մնաց:

Մի կողմից անձրև, ձիւն է վալը դլորում,
Մայրս աչքերիցը, արտասուք թափում,
Երկար ժամանակ է, իմ հոգսն է քաշում,
Սիրուն հայրիկ, մայրս մզկիթում մնաց:

Երգն էլ այդ խստասիրտ մարդի վերայ բնաւ չի ազդում...
բայց մի խումբ երիտասարդներ կալին այնտեղ կանգնած...
Բասուլն ինքն իրան մտածում է. — „գուցէ իմ երգը սրանց

վերայ ազդէ. սպասիր մի տուն էլ սրանց համար երգեմ“
ասում է. ու խօսքն ուղղելով նրանց, սազը ձեռքն առած
երգում է.—

Ուստալարտան օլտի բանա բու իշլար,
Սիգտան հիւմմաթ էտըն տուրան ղարտաշլար,
Գեօզլարըմտան ախտըմ ղան իլա եաշլար,
Ջանըմ խօջա, նանամ ջամիտա ղալտի:

Խօջա սան ջաննաթա գիրուլիմ դէրսան,
Ջաննաթըն լիպասըն գիլայիմ դէրսան,
Բու ղարիպ Բասուլի հեջ դինկլամազսան,
Ջանըմ խօջա, նանամ ջամիտա ղալտի:

Հայ. քարգ.

Վարպետներից հասաւ ինձի այս բանը,
Նրանք դարձան տարագրելուս խթանը,
Աչքերիցս թափած արտուռք արեանը,
Սիրուն հայրիկ, մայրս մզկիթում մնաց:

Խօջա, տեսնեմ քեզ դրախտում երկնային,
Եդեմի պատկերը վերագ նկարուին,
Մի քիչ լսէ խօսքը խեղճ Բասուլին,
Սիրուն հայրիկ, մայրս մզկիթում մնաց:

Այս երգերից երիտասարդները զգածուելով, գրգռուած
յարձակվում են իշխանի վերայ.— „այ անիրաւ մարդ, ուղիղ
երեք ժամ է այս խղճալին առաջիդ չոքած սազ է ածում,
խնդրում— աղաչում և հասկացնում է, թէ մայրս ու քոյրս
մզկիթի դրանն են մնացել, իսէր Աստուծոյ խնամքիդ տակ
ընդունիր... բայց սիրտդ այնքան քարացած է, որ ուշադրու-
թիւն անգամ չես դարձնում սրա խօսքին... քեզ սպանողը
արքայութեան բաժին կլնի „ասում են ու դանակ-

ները քաշած վրայ վազում, որ սպանեն... բայց դրացիներն
նրանց ձեռքից ազատելով հարցնում են.— „խօջան ձեզ թնչ է
արել. կամ թէ թնչ գործ ունիք սրա հետ, որ յարձակվում էք
վերան սպանելու“:

Ինչ գործ պիտի ունենանք, համարձակ պատասխանում
են, ձեր խօջան ամբաւ հարստութեան տէր է ու այս խղճա-
լեաց հիւր չի ընդունում. և խնամք չի տանում. էլ թնչ
կուզէք որ ունենանք“:

Դրացիներն այս բանը լսելով, իրանք էլ են նրա
արարքից վշտանում ու ցաւում և խօսքերով յարձակվում նրա
վերայ թէ.— „այս նահանգում դու էլ որ հիւր չընդունես.
Հապա էլ ո՞վ պիտի ընդունէ“ ասելով, իրանք մարդ են ու-
ղարկում և մզկիթի բազից Բասուլի մօրն ու քրոջը բերել
են տալիս:

Խօջան մի կողմից հարեւանների երկիւղից և միւս
կողմից սրանց թշուառ դրութիւնը տեսնելով, խղճի է գա-
լիս ու հիւրընկալում է իւր տան մի անկիւնում:

Հետեւեալ օրը Բասուլը խօջայից հարցնում է.— „ար-
դեօք այստեղ երգեցողներ, կամ երգ ու նուագ սիրողներ
կան թէ ոչ“:

„Սլիւրի մէյտանը, մեր Դալի Մահմուտի սրճարանում
մի քանի աշուղներ հանելուկ (մաամմա) են կախել միմեանց
հետ մրցում ու փորձվում են՝ պատասխանում է:

Միւս առաւօտ Բասուլը խօջայի հետ միասին գնում են
Դալի Մահմուտի սրճարանը նստում:

Նստողներն ու երգիչները երիտասարդի սազը տեսնե-
լով, հարցնում են— «որ երկրից ես»:

„Թավրիզեցի եմ“ պատասխանում է:

„Ես Թաւրիզում շատ եմ կացել և նրա քունճ ու պու-
ճախը լաւ էլ ուսումնասիրել եմ... եթէ կարելի է, Թաւրի-
զը նկարագրէ լսենք՝ ասում է երգիչների գլխաւորը:

Այս խօսքերից Բասուլը սրտապնդուելով ու եռանդի

գալով, սաղն առնում է ձեռքն ու տեսնենք թէ ինչ է
ասում.—

Գինկլային աղալար թարիֆ էտայիմ,
Աչըլըր բահարտա գիւլի թաւրիզըն,
Գիւկիւնտա, բայրամտա աթլաս գիյարլար,
Փօզուլմագ եշիլի, ալի թավրիզն:

Թավրիզն աթրաֆի տաղ տըր, մէշա տըր,
Իչընտա օթուրան, բագ տըր, փաշա տըր,
Սաքիզ բին մահլա տըր, իւզ բին քեօշա տըր,
Չարսուսի—բազարի, եօլի թավրիզն:

Փահլէվանլար քիսվաթ գիյար եաղլանըր,
Ջիւմլա բագիրկեանլար օնտա աղլանըր,
Իւչ իւզ ալթմիշ իւքի բիրդան բաղլանըր,
Ալտան ալա գեազար մալի թավրիզն:

Հայ. քարգ.

Լսեցէք պարօններ, պատմութիւնն անեմ,
Բացվում է գարնանը վարդը թավրիզի,
Հարսանիքի, տօնի հագածներն ասեմ,
Չի խունանում շքեղ զարդը թավրիզի:

Թավրիզի բոլորը սար է, անտառ է,
Միջի նստող դատաւորն անկաշառ է,
Ութ հագար թաղ ունի, մի մեծ գաւառ է,
Փողոցներում լիքն է մարդը թաւրիզի:

Ըմբիշները ծպտում, իւզով օծվում են,
Վաճառական դասը նրանց զբազեցնում են,
Հագարաւոր բեռներ մէկէն կապվում են,
Չեռքից ձեռք է անցնում բուրդը թավրիզի:

Մարդիս գործը որ աջողէ, բաղդը նրան մօտ կգայ...
Գու մի ասիլ Խօջա Սինանի ապարանքը սրճարանին խիստ
մօտ է լինում. երիտասարդի անուշ ձայնը Խօջա Սինանի
ականջն ընկնելուն պէս, մարդ է ուղարկում, որ իմանան
թէ ով է երգողը:

Մարդիք գալիս տեսնում են, որ մի նորահաս գեղեցիկ
երիտասարդ սազ է ածում ու երգում է: Գնում Խօջա Սի-
նանին ասում են.— „մեծապատիւ տէր, մի սիրուն նորա-
հաս երիտասարդ է. այնպէս անուշ ու աշխուժով է ածում
և երգում, որ ներկայ եղողներն ու մրցող աշուղները բե-
րանները բաց, զմայլած ապշել մնացել են“:

Այս տեղեկութիւնն առնելուն պէս, Խօջա Սինանը պատ-
րաստվում է ու ձի նստած գնում սրճարան: Տեսնում է որ
արդարև երիտասարդը իւր մարդկերանց պատմածից էլ գե-
րազանց է: Այն աստիճան զրաւվում է այդ երիտասարտով,
որ սիրահարվում է նրա վերայ ու օրից օր սկսում է աւելի
յարգանք ու պատիւ տալ նրան...: Մինչև անգամ խորհում
է իւր մէջ թէ.— „եթէ այս երիտասարդը աղջկանս ուզէ, ու-
րախութեամբ կտամ նրան“:

Իսկ այդ միջոցին Շահ—Սանամը որ Աղճա—Ղըզ անու-
նով նաժիշտի հետ իւր սենեակների դահլիճում ճեմում էր,
երիտասարդի ձայնը ականջին է հասնում:—Աղճա—Ղըզ,
ասում է, այս ձայնը ինձ այրում է... մանաւանդ թէ երա-
զումս տեսած երիտասարդի ձայնին շատ նման է“:

„Շատ կարելի է“ ասում է Աղճա—Ղըզը:

Մենք հիմա գանք երգիչներին:— „Ապրիս որդի, ասում
են. երկու տուն մնաց, այն էլ ասա, քեզ Աշըղ—Ղարիբ
մականունը տանք...: Ղարիբն իսկոյն շարունակում է.—

Իփակի Հինդտան բիւքիւլըր գեալըր,
Բուղտայի, փիրինճի աքիլըր գեալըր,
Ղօյին Մուղանտան չաքըլըր գեալըր,
Գիւրճիստանտան գեալըր պալի թավրիզն:

Փիրլար տօլուսընի իչտըմ սօյլարամ,
 Ենըպ աշգըն դարեասընա բօյլարամ,
 Աշըղ—Ղարիբըն մատտայի այլարամ,
 Բանըմ շիմտի Բիւսթամ Զալի Թավրիզն:

Հայ. քարգ.

Մետաքսն Հնդկաստանից մանվում գալիս է,
 Յորենը, բրինձը ցանվում գալիս է,
 Ոչխարը Մուղանից գընվում գալիս է,
 Վրաստանից կգայ բուրդը Թավրիզի:

Երկնային բաժակը խմած խօսում եմ,
 Սիրոյ ծովը ընկած ես տառապումեմ,
 Աշըղ—Ղարիբիս կամքը կատարումեմ,
 Այժմ ես քաշումեմ դարտը Թավրիզի.

Երգիչները նրա ասածներին խիստ հաւանութիւն տալով գովաբանում են ու Աշըղ-Ղարիբ մականունը կնքում նրան... Իսկ նրանց հիւրընկալ Խօջան չափազանց ուախ էր, որ այդպիսի հիւր ունէր... Ուստի հետն առած գնում է տուն և իւր սրտի ուրախութիւնը յայտնելուց յետոյ, երիտասարդին մօրն ու քրոջը մի մի ձեռք հագուստ է ընծայում և ծախսելու համար էլ փող է տալիս:

Այդ միջոցին Խօջա Սինանը սրճապան Դալի—Մահմուտին կանչում է իւր մօտ ու նրանից հարցնում, — «այս Աշըղ—Ղարիբը սրտեղացի է»:

„Թավրիզեցի Խօջա Ահմատ վաճառականի որդին է“ պատասխանում է թէ չէ, իսկոյն վեր է կենում գնում է տուն:

Շահ—Սանամը հօրը տեսնելուն պէս, — „սիրելի հայրիկ, ասում է, այսօր այս մօտիկ սրճարանից ականջիս մի դուրեկան ձայն հասաւ, արդեօք նա սլւմ ձայնն էր“:

„Թավրիզեցի Խօջա Ահմատ վաճառականի Բասուլ անու-

նով որդու ձայնն էր, որին այսօր այստեղ մեծ վարպետները Աշըղ—Ղարիբ մականունը կնքեցին“ պատասխանում է:

Հօրից այս բանն իմանալուն պէս, Շահ—Սանամի սրտի մէջ մի կրակ է ընկնում... և դառնալով դէպի հայրը խնդրում է. — „Սիրելի հայրիկ, շնորհ արա այդ աշուղին գօնէ մի անգամ հրաւիրէ մեր տուն, թող գայ մի քիչ էլ մեզ զբաղեցնէ, մենք էլ լսենք նրա քաղցր երգեցողութիւնը“:

„Այդ բանը իմ մտքովս էլ է անցկացել“ ասում է հայրը:

Յանկարծ նոյն օրը երեկոյեան Աշըղ—Ղարիբը Խօջա Սինանից հրաւեր է ստանում իրանց տունը գնալու... Խօջի տանը երբ մի քանի հիւրեր հաւաքվում են ու խօսակցութիւնն սկսվում է, Աշըղ—Ղարիբն ի միջի այլոց առաջարկում է. — «շատ ցանկութիւն ունիմ մի պահուստ կախելու, որպէս զի ես էլ երգիչներին հետ մի քիչ մըրցեմ ու փորձուեմ»:

Ներկայ եղողներն ասում են. — «Թէ որ դու այդ շնորհքն ունիս, Աստուած ողորմած է... դու հաւանիր այն շալը, որի վերայ պահուստը պէտքէ կախ տալ, մենք փողը կը վճարենք“:

Այս խօսքի վրայ, նոյն ըոպէին տան տէրը մտնում է իւր առանձնասենեակն ու մի թանկագին քաշմիրի շալ բերում տալիս է նրան:

Աշըղ—Ղարիբը շալը որ ստանում է թէ չէ, իսկոյն գօտկածալից գրիչն հանում գրում է. — «Խօջայի Աշըղ—Ղարիբի պահուստն է» ու շուլալելով շալի վերայ, առաւօտեան տանում յանձնում է Դալի Մահմուտին... և իւր գաղտնի խորհուրդն ու նպատակը յայտնում նրան:

Ամեն բան լսելով, Դալի Մահմուտը նրան ասում է... տես որդի, թէ որ քեզանից յոյս ունիս, պահուստդ կախէ... այդ երգիչներից ինձ ոչ մի վնաս չի հասնի. մանաւանդ թէ, ես նրանցից սաստիկ զգուած եմ».

«Հօրս ծնող մայրը թող ամաչէ» վրայ է բերում Աշըղ-

Ղարիբը:

Այսպիսի վտառ ու համարձակ պատասխան ստանալով, վեր է առնում Դալի Մահմուտը պահուստը սրճարանի պատի երեսով կախում ու Աշըղ—Ղարիբի սազն էլ բոլոր երգիչների սազերից բարձր քաշ անում:

Երգիչները սրճարան մտնելով, տեսնում են որ իրանց սազերի վերայ, մի ուրիշ սազ է քաշ արած... տրտնջալով՝ Դալի Մահմուտից հարցնում են.—Այս սազն ո՞ւմն է... կամ թէ այս երկրում մեզանից բարձր ո՞վ կայ, որ մեր սազերի երեսից բերէ ուրիշ սազ քաշ անէ ու մեզ չիմաքնների կարգը դասէ“:

Դալի Մահմուտը պատասխանում է.—«Երեկ ձեզ զարմացնող Թավրիզեցի Աշըղ—Ղարիբը բերեց այդ սազն ու պահուստը քաշ արաւ ու գնաց“:

Երգիչների գլխաւորը այս բանն իմանալով, վշտացած ասում է.—տեսնո՞ւմէք այդ անզգամին, մենք նրան խնամք արինք, իբր թէ օտարական է՝ պատիւ ու յարգանք տուինք, բարձրացնելու համար Աշըղ—Ղարիբ մականունը շնորհեցինք... բայց նա մեզ չիմար անասուն է համարում...: Կանչեցէք այդ ստահակին ու ստոր արարածին որ հետը մրցենք ու սազը գլխին փշրելով ճանապարհ ձգենք» տաքացած ու կրակ կտրած սպառնում է:

Այդ միջոցին Աշըղ—Ղարիբը գալով տեսնում է, որ վարպետների գլխաւորը սաստիկ չարաչառ է, ասում է նրան.— «վարպետ, ինչու ես քեզ տանջում. մի՞ թէ ձեռքը ձեռքից վեր չեն բռնի կամ բարձրացնի“:

«Դեռ սպասիր, մի քիչ յետոյ յայտնի կլինի, պատասխանում է վարպետը... մենք եօթը հոգի ենք, ամեն մինս մի խօսք ասենք, քեզ աշխարքից դուրս կը հանենք“:

Աշըղ—Ղարիբը սրանց անպէտք ու սպառնալից դատարկ խօսքերին այլ ևս ականջ չը կախելով և ուշադրութիւն չը դարձնելով, իսկոյն սազն ձեռքն է առնում ու սկսում աշխուժով երգել.—

Դինկլէին ուստալար սիզա խապար սօրայիմ,
Աճապա սազի սիզ նէճա չալարսրզ,
Գեօկտաքի ելտըզլար բանըմ տավարըմ.
Սիզի չօպան էթսամ նէճա գիւտարսրզ:

Օ նասը՛լ քիլա տըր տօլար բօշանըր,
Բուզկեար աստիքճա երա դօշանըր,
Էմիրլար եշիլի քիմտան զուշանըր,
Խապար վէր քի զալսըն բաշըն աղըրսրզ:

Աշըղլար ասմիշլար թիւրլի լիպասըն,
Ղըսմաթըն արարքեան բուլտի բուլասըն,
Ղըրիս սաքիզ շահարըն իքի զալասըն,
Ղանթարսրզ, միզանսրզ նէճա տարթարսրզ:

Օ քիմտըր քի շու ազրայէլի եօրան,
Օ քիմտըր քի դարեա իւթիւնտա, տուրան
Նէճա ջանլարըն իմտատընա արան,
Սիզ օնըն մաքեանըն նէրտա տուլարսրզ:

Ղարիբըն սըվալի դինկլար հափըսի,
Օ նասըլ բինատըր զուտրաթ եափուսի,
Աշքեարատըր օ օն իքի զափուսի,
Սիզլար օնտան հալպաթ բիր գիւն գէչարսրզ:

Հայ. քարզ.

Լսեցէք վարպետներ ձեզնից հարցանեմ,
Արդեօք այդ քնարը դուք ի՞նչպէս կածէք,
Երկնքի աստղերը թէ ոչխար անեմ—
Ու ձեզ հովիւ կարգեմ, ի՞նչպէս կարածէք:

Ի՞նչ անօթ է, որ լցվում դատարկվում է,
Ի՞նչ բան է որ ցմահ անմեռ մնում է,

Ո՛վ է ծիրանին անարգել հագնում է,
Ասացէք որ գլուխներդ չը ցաւէք:

Երգիչը իւր մտքում պահած բան ունի,
Որոնող չը գտնողն մեծ պատիժ ունի,
Քառսուն ութը քաղքին երկու բերդ ունի,
Առանց քար ու նժար, քնչպէս կը կշռէք:

Այն ո՛վ էր որ հայր Աբրահամին փոձեց,
Կամ թէ ո՛վ էր, որ ծովի վերայ նստեց,
Ո՛վ էր որ պարզ ջուրը գինի փոխարկեց,
Արդեօք նրանց տեղը քնչպէս կը գտնէք:

Ղարիբիս խօսքերը դէպ ձեզ է ուղղած,
Ի՛նչ շինուածք է, որ ձրի է կառուցած,
Յայտնի է որ տասներկու դրան հասած,
Մի օր անշուշտ դուք նրանցից պիտ անցնէք:

Այսպէս երգելով՝ երգիչներին հրաւիրում է պատասխանելու: Բայց նրանք մէկը միւսի երեսին նայելով մնում են մոլորուած... միայն այնպէս են ձևացնում, իբր թէ այդ հարցերի պատասխանները թէպէտ շատ դժուար չէ, բայց ինքեանք դիտմամբ լռում են:

Միայն սրճապան Գալի Մահմուտը հասկանալով թէ բանն ինչու՞մն է, նրանց սազերը ձեռներիցն առնելով յանձնում է Աշըղ—Ղարիբին ու նորից խնդրում, որ ինքը բացատրէ իւր առաջարկած հարցերը. որպէս զի ժողովուրդը լսէ:

Ղարիբը դարձեալ սազն առնում է ձեռքն ու տեսնենք թէ այս անգամ ինչ է ասում.—

Ոկեար արիֆսընը բունտան էտըն հիսսա,
Ալսըզ սազ չալմաղա քեաման դէտիլար,
Գեօկըն իւզիւնտաքի ելտըզ իւսթիւնա,
Օնիտա բիլմասի եաման դէտիլար:

Բու դունեա դաչ քեարա տօլտի բօշանտի,
Րիւզկեարլար աստիքճա երա դօշանտի,
Էմիրլար եշիլի գէյտի դուշանտի,
Ձիպրայէլ ջաննաթտան չըխան դէտիլար:

Մէյտանի հիւնարտա ենտըրմաք մարամ,
Արաեան ղըսմաթըն բուլուր հափ թամամ,
Ղըրիս սաքիզ հաֆթատըր, իքիսի միւտամ,
Ախըլ թարազիսի միզան դէտիլար:

Ազրայէլի էմիր Այեար տըր եօրան,
Խըզըր էլեաս դարիեա իւսթիւնտա տուրան,
Հախտան դուլլարընա իմտատա արան,
Անըն մասքեանընա իւմման դէտիլար:

Դինկլէին, Ղարիպտան սիզ բու նիտայի,
Քեաֆը նունտան խիւտա դուրտու բինայի,
Օն իքի դափու տըր սօրմա դիւնեայի,
Էօմրիւմըզ գէչմաքտա համան դէտիլար:

Հայ. թարգ.

Թէ հասկացող մարդ էք, կրնաք գիտենալ,
Անձեռ սազ ածելուն, քեաման են ասում,
Երկնքի երեսը եղած աստղերին,
Ծանօթ չեղող մարդին, անբան են ասում,

Աշխարհն է որ միշտ լցվում դատարկվում է,
Ժամանակն է որ միշտ անմահ մնում է,
Թագաւորն է որ ծիրանին հագնում է,
Ձիմացողին դատարկաբան են ասում:

Ենորհք ունեցողը հրապարակ կգայ,
Որ մի խօսքի համար պատիժ չստանայ,

Քառսուն ութը շաբթուն գիշեր ցերեկ կայ,
Իսկ խելքի կշեռքին միզան են ասում:

Հրեշտակը հայր Աբրահամին փորձեց,
Մեծ առաքեալ Պետրոսը ծովին նստեց,
Քրիստոսն էր ջուրը գինի փոխարկեց,
Դիտեցողին իսկ բանական են ասում:

Ղարիբըս պարզ խօսքեր եմ ձեզի ասած
Գիտցէք երկինքը ձրի է կառուցած,
Տասներկու ամսուայ դռներին հասած,
Մարդկանց, դատարկ—լոկ դամբարան են ասում:

Ղարիբի այս ասացուածքներին ու տուած բացատրու-
թիւններին ներկայ եղողները խիստ հաւանում ու գովում
են. իսկ երգիչները մի առ մի սկսում են հեռանալ: Բայց
Աշըղ—Ղարիբը Դալի Մահմուտին ասում է.— „դրանց յետ
կանչիր սագերը իրանց տուը թող կորչին գնան: Ես դրանց
լաւ ճանաչեցի թէ ինչեր են“:

Դալի Մահմուտը վարպետներին յետ կանչելով, վեր է
առնում սագերը կրկին յանձնում է նրանց:

Մի փոքր յետոյ Խօջա—Սինանը Դալի Մահմուտին կան-
չում է իւր մօտ ու ասում.— „արդեօք այս Աշըղ—Ղարիբին
մեզ մի փոքր զբաղեցնելու համար մեր տունը որ հրաւիրենք
կգա՞յ թէ ոչ... Այս բանը մի լաւ տեղեկացիր և ինձ հաղորդէ“:

Դալի Մահմուտը— „գլխիս վերայ, ես ձեր հրամանը
կաջողացնեմ ու կը կատարեմ“ ասելով, վեր է կենում գա-
լիս է Աշըղ—Ղարիբի մօտ ու եղածն յայտնում նրան:

Լսելուն պէս Ղարիբը պատասխանում է.— „շատ բարի“:

Դալի Մահմուտը Ղարիբից համաձայնութիւն ստանա-
լով, եղածը տեղեկացնում է Խօջա Սինանին: Իսկ նա— „շատ
բարի. ժամը երեքին միասին համեցէք մեզ մօտ ասելով,
գնում է տուն ու Շահ—Սանամին կանչում յայտնում է, որ

այսօր ժամը երեքին նոր երգիչը մեզ մօտ հիւր կը լինի:

Հօրից այս լուրն առնելուն պէս, Շահ—Սանամը լու-
սամուտի առաջ եսիր դառած, երբ սրտատրոփ ու անհամ-
բեր սպասում էր թանկագին հիւրի գալստեանը... Մէկէլ
յանկարծ հայրը, Դալի Մահմուտն ու Աշըղ—Ղարիբը հան-
դէպից երևում են... ուրախութիւնից քիչ է մնում որ խեղ-
ճը կաթուածահար լինի ու լուսամուտից վայր գլորի:

Տուն մտնելուն պէս, բարձրանում են պատշգամբն ու
մի քիչ հանգստանալով սուրճ վայելում:

Այնտեղ պատշգամբի առաջին մի աւազան կար... Աշըղ-
Ղարիբը երբ գնում է նրա մօտ ձեռները լուանալու, ջրի
մէջ մի սոււեր է տեսնում... Գու մի ասիլ Շահ—Սանամի
լուսաթաթախ պատկերն է ընկել ջրի մէջ... Գլուխը վեր
բարձրացնելով, երբ լուսամուտի հանդէպ կանգնած Շահ—
Սանամին տեսնում է, քիչ է մնում որ ինքն էլ կաթուա-
ծահար լինի... Մի փոքր ինքն իրան հաւաքելուց ու խելքը
զլուխը ժողովելուց յետոյ...— «այ անիրաւ, սիրոյդ համար
ինձ պանդխտութեան մէջ ձերացրիր» ասելով, սրտից մի
խոր ախ է քաշում ու ձեռքերը սրբելով վերադառնում
պատշգամբը:

Սուրճը խմելուց յետոյ, Խօջա Սինանն Աշըղ—Ղարիբին
ասում է.— «այսուհետև որդի, գործը քեզ մնաց. մի քիչ
մեզ ուրախացրու, որ սրտերս բացուի»:

Այս հրաւերն ընդունելուն պէս, Աշըղ—Ղարիբը սազն
առնում է ձեռքն ու տեսնենք թէ ինչ է ասում.—

Դարեա քեանարընտա սամաք տուլթարքեան,
Գեօրիւնտի գեօզումա մայա դաշլարըն,
Դարեայա դարայի դապլատի շաֆղըն,
Բանդարտըր իւչ գիւնլիք այա դաշլարըն:

Հիւսնուն բու ջըհանտա վերտի նուր զավղի,
Եազ գեալանտա արթար բիւլբիւլըն զավղի,

Երտի դարունիմի ջամալըն զավղի,
Ախլըմի օղրաթտի զայա զաշլարըն:

Բաշընա դօնտիւկիւմ էյ ահլի իրֆան,
Ձէշմըմըն էշխի տըր միսալի իւմման,
Եարալարսըն բանի հար գիւն էյ ջիվան,
Բանգայօր զուրուլի եայա զաշլարըն:

Ղաշլարըն բազիրկեան, գեօզլարըն խօջա,
Բախըշըն գիւլիսթան, ըուխլարըն իւճա,
Սավինտիր Ղարիբի բարի բիր գէճա,
Սալմասըն դիւշկիւնի փայա զաշլարըն:

Հայ. քարգ.

Գետակի մօտ ման եկածս ժամանակ,
Երեւացին աչքիս շքեղ ունքերդ,
Նրա վճիտ փայլը—կորուց հակառակ,
Երեքօրեայ լուսին աղեղ ունքերդ:

Երեսդ լոյս կտայ ինչպէս երկինքը,
Լսումեմ միշտ սոխակիդ դալլալիկը,
Խնամք արան, մի կտրեր իմ շինքը,
Խելքըս առան գլխէս ահեղ ունքերդ:

Գլխովդ պտոյտ զամ, ո՛վ դու գիտնական,
Քեզի համար խեղճ աչքերըս ծով դառան,
Ամեն օր վէրք են տալիս ինձ ո՛վ ջիվան.
Երկասյրի սուր, անգուլթ, ուժեղ ունքերդ:

Ունքերդ կէս լուսին, աչքերդ աստղեր,
Խօսքերդ մարգարիտ—անձրև բարեբեր,
Սիրիր դու Ղարիբին գօնէ մէկ գիշեր,
Ցոյց տուր նրան կանանչ բաղեղ ունքերդ:

Խօջա Սինանը փորձուած ու խելահաս մարդ լինելով,
Աշըղ—Ղարիբի այս խօսքերից իմանում է, որ աղջիկը լուսամուտում կանգնած է, ուստի մի կերպ հասկացնում է, որ այնտեղից հեռանայ:

Աշըղ—Ղարիբը նկատելով որ Եահ—Սանամին լուսամուտից հեռացրին, դարձեալ իւր ալախօսիկ սազը ձեռքն է առնում ու երգում է.—

Ղաշլարըն զուրուլի եայ օլմիշ էյ ջան,
Բիր քեարա ըահմ էթսըն բանա սան էյ ջան,
Բան Ղարիպամ չօխ չաքմիշամ սարանճամ,
Գօնտիւրտի գեօզլարըմ չայա զաշլարըն:

Հայ. քարգ.

Ունքերդ պատրաստի նետ է ոսկեպատ,
Ինձ ողորմիր, մի չարչարիր շատ ու շատ,
Ես Ղարիբն եմ, շատ տանջուեցայ տարապարտ,
Թող որ տեսնեմ անգին հաղեղ ունքերդ:

Երգը վերջացնելով, սազը մի կողմ է ձգում: Իսկ Խօջա Սինանն ասում է.— «ապրիս որդիս, քեզ շատ սիրեցի, այսուհետեւ մեծ պատիւ ու յարգանք կը վայելես մեր կողմից...: Գեռ երեկոյ չեղած, միմեանց հետ պայման են անում... և Խօջան, Գալի Մահմուտն ու ինքը վեր են կենում սրճարան գնալու:

Տանից մի քիչ որ հեռանում են, Աշըղ—Ղարիբն ասում է...— «դուք գնացէք, ես էլ գնամ մի փոքր մօրս ու քրոջս տեսնեմ ու կգամ սրճարան»: Այդտեղ ընկերներից բաժանուելով, ուղղվում է դէպի հիւրընկալ Խօջայի տունը թէ չէ, ճանապարհին պատահում է մօրն ու նրա պատառուտած շորերը տեսնելով հարցնում է,— «մայր՛իկ, այդ թնչ է քո դրուլթիւնը»:

Մայրը պատմում է, որ տան տէր Խօջան իրան ասել է թէ, շքոյ երկտասարդ որդիդ մեր տունը ոտ դրած օրից, իմ տունս միշտ խռովութեան մէջ է, շուտ կորէք հեռացէք... և նրա ժառանգներն էլ ինձ ու քրոջդ ծեծելով այս օրը գցեցին ու տանից դուրս արին”:

Ստիպողական միջոցով հիւր լինողը, ի հարկէ այդ օրին կը մնայ... Դու այստեղ կանգնիր մի քիչ սպասէ, մինչև ես վերադառնամ» ասում է և ուղղակի գնում դէպի Խօջա Սինանի տունն ու իրանց դրութեան մասին մանրամասն տեղեկութիւն հաղորդում նրան:

Լսելով նրա պատմածները.— „շուտ գնա՛ մօրդ ու քրոջդ“ բեր այստեղ” ասում է Խօջա Սինանը:

Աշըղ—Ղարիբն իսկոյն գնում մօրն ու քրոջը բերում է այնտեղ:

Իսկ Խօջա Սինանը իւր ապարանքի մէջ նրանց համար մի երկու մաքուր ու յարմարաւոր սենեակ յատկացնելով, կահաւորում է ու յանձնում նրանց: Այնուհետև նրանք անվերջ մնում են այնտեղ:

Աշըղ—Ղարիբն իւր տարտամ դրութիւնից դուրս գալով, այնուհետև սկսում է իւր երգն ու նուագը առաջ տանել:

Մի օր Խօջա Սինանը Թիֆլիզում ինչքան որ հարուստ ու աչքի ընկնող երեւելի մարդիք կային, հրաւիրում է իւր տունը խնջուիք...: Ետհ—Սանամն այդ օրը Աշըղ—Ղարիբի ասացուածքները լաւ լսելու ու ըմբռնելու համար, հանդիսարանում մի լուսամուտ է ընտրում ու նստում այնտեղ:

Հրաւիրեալները հեռզհեռէ գալով հաւաքվում են: Գալիս է և Աշըղ—Ղարիբը: Սուրճ խմելուց յետոյ ժողովականներն ասում են Աշըղ—Ղարիբին.— „այսուհետև շնորհքը մնաց քեզ որդի, որ մեզ մի քիչ ուրախացնես“:

Այս հրաւերն ու առաջարկութիւնն ընդունելուց յետոյ, տեսնենք մեր կրակուած Ղարիբն ինչ է ասում.—

Բիր սօղ իլա բան տուգաղա տութուլտում,
Բու զարիբ էլլարտա եախտի նար բանի,
Հասրաթլըղ նարընա եանտըմ քիւլ օլտում,
Ահու գեօղլում, նա հալտայամ, գեօր բանի:

Նա սապրա թաղաթմ վար, նա դիլտա զարար,
Գեօնուլ Մաճնուն օլմիշ, Լէլլասըն արար,
Վազ գէչարսամ, սանի եար էլլար սարար,
Գեօրիւնճա ապտալ էլլատի ար բանի:

Բան սատըղ աշըղամ, հիլլա բիլմագամ,
Հարճայի դայիլամ, իւզա գիւլմագամ,
Բան Ղարիբամ բու սավտատան դօնմագամ,
Սաֆտարունում էշիս եօլունտա գեօր բանի:

Աշըղ—Ղարիբ իտի գեօնուլ ուղրուսի,
Գէչմագ իմիշ բու սավտանըն ալբրսի,
Սանա բան սօլլայիմ սէօղլն տօղրուսի,
Ալ աֆանտըմ, գեալ աֆանտըմ սար բանի:

Հայ. քարգ.

Մի խօսքով ես որոգայթի մէջ ընկայ,
Օտար երկրում կրակը վառեց ինձի,
Քոյ կարօտից այրուեցի մոխիր դառայ,
Ո՛վ սև աչեր, սէրդ կրակեց ինձի:

Համբերանք չը մնաց, ոչ սրտի դադար:
Մաճնուն դառայ Լէլլուդ համար խելագար,
Թէ անցկենամ, քեզի կառնի մի օտար,
Տեսնելիս պիտ ասես խորովեց ինձի:

Անկեղծ սիրահար եմ, գիտցիր խարդախ չեմ,
Խնդում երես մարդ եմ ու անձիճաղ չեմ,

Ես Ղարիբն եմ իմ սիրուց յետ կացող չեմ,
Մի ասիր սիրոյ ճամբուս թողեց ինձի:

Ես Ղարիբն եմ, մարդկանց միջի առույգը,
Ինձ կը խեղդէ մշտապէս սիրոյ բուքը,
Ես քեզ ասեմ ահա խօսքի ստուգը,
Թող որ կրկնեմ, թէ նա միշտ սիրեց ինձի:

Այս քանն ասելով, սազը վեր է դնում: Իսկ հրաւիրեալները՝
„միայն այդքան“ ասում են... սուրճ խմում և մի քիչ խօսք
ու գրոյց անելուց յետ, ամեն մինը գնում է իւր տունը:

Բայց Ծահ—Սանամը Աղճա—Ղըզին ասում է.— „գիտեմ,
հիմա մեր Աշըղ—Ղարիբն էլ կերթայ, վար իջիր դրան մօտ
սպասիր և յետոյ առ ինձ մօտ բեր“:

„Գլխիս վերայ, ասում է ու գնում դրան մօտ կանգնում,
մինչև Աշըղ—Ղարիբը գալիս է... Ծառ—Սանամի հրաւերն
առաջարկելով, վեր է առնում նրան ու տանում ներս:

Ծահ—Սանամը նրան տեսնելով, կարծես աշխարհն իրան
են տալիս:— „Ա՛հ, սիրելիս, դու բարով հազար բարի եկար,
համեցէք նստի, ասում է ու հրաւիրում իւր մօտ նստելու: Միմեանց
հետ բաւականին երկար խօսելուց և փոխադարձ
ձայլէս պատիւ տալ առնելուց յետոյ, Ծահ—Սանամը Աշըղ—
Ղարիբի պանդխտութիւն գնալու վերայ խօսք բաց անե-
լով ասում է.— „Սիրելիս, լսել եմ որ դու գնում ես դէպի
օտարութիւն... բայց սիրոյ և կարօտի կրակին դիմանալու
ինձանում ոյժ ու կարողութիւն չի մնայ... Լաւ է որ մօրդ
ուղարկես հօրս մօտ իմ ձեռքը խնդրելու համար... գի-
տեմ, հայրս այդ բանի եղելութիւնն ինձ կը յայտնէ...
Ես էլ նրան կասեմ, որ դու գիտես... Այն ժամանակ հայրս
միտքս ու նպատակըս կը հասկանայ, և վերջը շատ գեղե-
ցիկ կը լինի...“:

Նոյն ժամանակ Ղարիբը գնում է տուն ու բոլոր եղելու-
թիւնը մի առ մի մօրը պատմում ու կարգին հասկացնում է:

Հետեւեալ առաւօտ մայրը պատրաստվում ու գնում է
Խօջա Սինանի ապարանքը և ներկայանում է նրան: Իսկ
Խօջա Սինանը նրան տեսնելով հարցնում է.— „աղջիկս, թնջ
խնդրուածք ունիս, ասա“:

„Ազնիւ տէր... կասկածոտ հայեացք ձգելով նրա վերայ...
Աստուծոյ ամենակարող զօրութեամբ եկել եմ ձեր դստեր
Ծահ—Սանամի ձեռքը, իմ որդի Աշըղ—Ղարիբի համար
խնդրելու“ պատասխանում է տիկինը:

„Շատ բարի, աղջիկս... բայց դուստրս, գիտցէք որ ձեզ
վերայ շատ ծանր կը նստի“:

Աստուած ողորմած է, ասում է պարզամիտ տիկինը,
կաշխատենք ու պարտքերս կը վճարենք“

Այն ժամանակ Խօջա Սինանը հարսանիքի ծախքի հա-
մար «քառասուն քիսա» փող է ցոյց տալիս ու պահանջում
վճարելու:

Մայրը շփոթուած վերադառնում է տուն ու բոլոր
եղելութիւնը պատմում Աշըղ—Ղարիբին:

«Օտարութիւն գնալով կաշխատեմ վճարել այդքան փողն
ու դարձեալ նպատակիս կը հասնեմ, ասում է Ղարիբը:

Մի օր էլ յանկարծ այդ խօսքն ու առարկան հասնում է
Գալի Մահմուտի ականջը... Նա էլ մի անգամ յարմար առիթ
համարելով, սրճարանում եղելութիւնը պատմում է ներ-
կայ եղողներին, թէ Աշըղ—Ղարիբը Խօջա Սինանի աղջ-
կայ ձեռքը խնդրել է... Նա էլ թէպէտ կամաւորութիւն է տա-
լու, բայց հարսանիքի ծախքի համար, քառասուն քիսա
փող է առաջարկել ու ցոյց տուել... Հիմա այս խեղճ օտա-
րկան տղան այդքան մեծ գումարը սրտեղից պիտի վճարէ...
եկէք սրա գործը մենք մի կերպ գլուխ բերենք» ասում է:

Այս առաջարկութիւնը լսելուն պէս, սրճարանում գտնուող
ներից ամեն մինը, այդ գումարը լրացնելու համար, որո-
շեալ քանակութեամբ փող են վեր գալիս ու գնում Գալի
Մահմուտի գործը (չաքմածէն) պահեստի... Մի և նոյն ժա-

մանակ Աշըղ—Ղարիբի ետևից մարդ են ուղարկում կանչելու:

Ղարիբը գալիս է թէ չէ, ժողովականները նրան լայտնում են.— «Ո՛վ Ղարիբ, լսել ենք որ դու նպատակ ես դրել Խօջա Սինանի աղջիկն ուզելու... նա էլ թէպէտ կամաւորութիւն է տալ, բայց հարսանիքի ծախքի համար առաջարկել է քեզ քառասուն քեսա փող վճարել... Իսկ դու էլ որոշել ես զնալ օտարութիւն և այդքան գումարը աշխատել բերել տալ ու աղջիկն առնել... Վերջապէս առանց երկար խորհրդածելու, մենք մեր մէջը այդ գումարը հաւաքեցինք ու տուինք պահեստի... Վեր առ այդ փողն ու տար հարսանիքի պատրաստութիւն տես... Այնուհետև Աստուած ողորմած է. երբ աջողութիւն ունեցար, կամաց կամաց կը վճարես... ստիպող ոչ ոք չկայ:

«Չեմ ուզում կարճ խօսքով պատասխանում է Ղարիբը: «Ինչո՞ւ չես ուզում, հարցնում են նրանից:

«Որովհետև, ասում է, աշխարք է, ով գիտէ, հիւանդանալ, նեղութեան ու ձախորդութեան մէջ ընկնել... և վերջապէս մեռնել կայ... Կարող է պատահել որ մէկի կամ միւսին մի օր էլ ես ենթարկուիմ... Այնուհետև ինչ կարծիք կարող են ունենալ իմ մասին... Ամենից լաւն այն է, որ ես զնամ օտարութիւն, աշխատեմ ու իմ գործը իմ սեփական աշխատանքով գլուխ բերեմ, և ոչ ոքի վերայ չը ծանրանամ:

Այս վճռական որոշումը նրանից լսելով, ամեն մարդ թողնում գնում է իր գործին... Բայց մի ծերունի պատահելով Ղարիբին, նրանից հարցնում է— «Ո՛ր ես գնալու որդի»:

«Օտար երկիր, հայրիկ, պատասխանում է:

Երբ ծերունին օտարութիւն գնալու պատճառը հարցնում է, — «Սիրելի հայրիկ, Խօջա Սինանի աղջիկը առնելու միտք ունիմ. նա ինձանից քառասուն քեսա ծախքի փող է պահանջում. այդ գումարը ձեռք բերելու համար, նեղութիւն պիտի կրեմ օտար երկիր գնալու, պատասխանում է:

«Ոչինչ չունիմ ասելու, որդի ասում է ծերը. բայց

աղջկայ հետ ուխտ ու պայման դրել էք:

«Ոչ ուխտ ենք արել, ոչ պայման. բայց խօսքներս մէկ է. պատասխանում է:

«Աղջկան, որդի, կրկնում է ծերը, քառասուն հոգի քար կը գցէ, բայց նրանցից մէկը կառնի: Քոյ օգուտը պահանջում է, որ նրա հետ նախ մի որոշ ժամանակով պայման դնես ու վերջը պատասխանատու չը մնաս»:

«Ծնորհակալ եմ, շատ լաւ էք հրամայում ասում է ու միտքը դնում որ զնայ դէպի Շահ—Սանամի մօտը... բայց դռնապանները արգելում—ներս չեն թողնում:

«Ախար, սիրելիք, ասում է, ես Աշըղ—Ղարիբն եմ, եկել եմ Շահ—Սանամին լայտնելու, որ օտարութիւն պիտի զնամ, ո՛վ գիտէ, զնալ գալ՝ և գալ ու չը գտնել կայ աշխարքումս... գոնէ թողէք մի աղ ու հաց հալալ անեմ նրա հետ, ասում է ու ներս մտնում... Պարտեզը մտնելով տեսնում է որ ինչ տեսնի... Աղճա—Արզը նրբաշէն ու գեղեցիկ նայեցող (փայտեայ ոտնաման) հագած, այդտեղ ճեմելով ման է գալիս... նոյն ժամայն— «օգնիր Տէր Աստուած» ասելով՝ սաղն առնում է ձեռքն ու տեսնենք թէ ինչ է ասում.—

Սանի դեօրտիւմ օլտի ախլըմ փերուշան,
Էրիտի իւրակըմըն եաղի Աղճա—Արզ,
Բան էօզ միւրատըմի ալտըղըմ զաման,
Թանըմագսըն սօլի սաղի Աղճա—Արզ:

Աշգ իլա դիւշմիշամ բան բու սավտայա,
Եալվարըրամ գէճա գիւնիւզ Մէվլայա,
Չունքի Մաճնուն օլտում սաչի Լէյլայա,
Բիր զաման բաքլայիմ տաղի Աղճա—Արզ:

Գեարտանընտա թանա—թանա Ֆիւլֆիւլի,
Քիմս աղնատայիմ բան բու միւշկիւլի,
Աչըլմագ գիւլարի, էօթմագ բիւլբիւլի,
Գէշմիշ բու բաղչանըն չաղի Աղճա—Արզ:

Բան Ղարիպամ դարտըմ եազ զալամ իլա,
Բիր երա ջամ էթտըմ դիւզ ալըմ իլա,
Բանտան Ծահ—Սանամա չօխ սալամ էլլա,
Բան բուրտա բաքլայիմ բաղի Աղճա—Ղըզ:

Հայ. քարզ.

Քեզ որ տեսայ խելքս եղաւ ցիրուցան,
Հալուեցաւ իմ սրտիս եղը Աղճա—Ղըզ,
Երբ իմ իղձս կը կատարուի, պատուական,
Կը ճանաչես դու անմեղը, Աղճա—Ղըզ:

Մ

Սիրոյ Համար ես եղել եմ տարագիր,
Գիշեր ցերեկ Տիրոջն ունիմ մի խնդիր,
Սէրը գիտես ինչ է, սիրուն, ինձ լսիր,
Շատ մի գցիր դու ինձ նեղը, Աղճա—Ղըզ:

Կուրծքին փռուած թուխ ծամը ծածանում է,
Ում ասեմ թէ նա իմ հոգիս հանում է,
Ոչ վարդն է բաց, ոչ սոխակը երգում է,
Անցաւ ծաղիկների ցեղը, Աղճա—Ղըզ:

Մ

Ես Ղարիբն եմ ցաւս կը գրեմ գրչով,
Մի տեղ գումար կանեմ յատուկ իմ ձեռով,
Ինձնից Ծահ—Սանամին արա շատ բարով,
Կսպասեմ այգում այստեղը, Աղճա—Ղըզ:

Երբն աւարտելուց յետոյ, ասում է.— „ով Աղճա—Ղըզ,
ես օտարութիւն եմ գնալու. Ծահ—Սանամին կանչէ մի
խնդրուածք ունիմ նրան անելու... Աշխարքումը, ով գիտէ,
գնալ չը գալ՝ և գալ չը գտնել կայ:“

Աղճա—Ղըզը իսկոյն նրա խօսքն ընդհատելով հարցնում
է.— «Ինչո՞ւ պարոնս, ինչ է պատահել:“

„Ծահ—Սանամի հայրը հարսանիքի ծախքի համար

քառասուն քեսա փող է պահանջել ինձանից. ես այդ
փողը աշխատելու համար ստիպուած եմ գնալ օտարութիւն
պատասխանում է:

«Դուք միամիտ ու ապահով կացէք, պարոնս, մենք
հարսանիքի օրը այդ փողը կը վճարենք քեզ, ասում է
Աղճա—Ղըզը:

Այդպէս բան չի լինի, կրկնում է Ղարիբը... խնդրում
եմ դու միայն իմ սիրուհուն կանչէ այստեղ, ես նրան մի
առաջարկութիւն ունիմ անելու:“

Նոյն ժամայն Աղճա—Ղըզը վազ տալով ներս է մտնում
Ծահ—Սանամի մօտ... Իսկ Ղարիբը պարտեզում մէջքը դէմ
անելով մի նոճի ծառի քնում է: Երբ Աղճա—Ղըզը մօտե-
նում է Ծահ—Սանամին, նա քնից նոր զարթած է լինում...
նրան տեսնելուն պէս, Սանամն հարցնում է.— „ախչի,
էլի մի բան ունիս ասելու, ասա տեսնեմ թնչ է“:

Առանձին ոչինչ չկայ, տիրուհիս... Հիմա պարտիզումն
էի, վարդերն սկսել են բացուել, սոխակները ձայները
գցած՝ այրուած սրտով երգում են... Եկայ քեզ իմաց տալու
որ գնանք մի քիչ զուարճանաս ու թարմանաս“:

«Ախչի, ինչո՞ւ ինձ շուտ տեղեկութիւն չը տուիր... գո-
նէ, մի փոքր սպասիր, յետոյ գնանք»:

«Եթէ մի փոքր յետոյ գնանք, ասում է Աղճա—Ղըզը,
այն ժամանակ գեղեցիկ վարդերը կը թառամին ու սոխակ-
ները անուշ երգելուց կը դադարին“:

Այս խօսքերը լսելով, Ծահ—Սանամը շտապօք մի քօղ է
ծածկում երեսին ու Աղճա—Ղըզի հետ ձեռք ձեռքի տուած
նազաճեմ գնացքով ուղղակի դիմում են դէպի պարտեզ և
սկսում վեր վար ճեմել ու ման գալ... Բայց Աղճա—Ղըզը
առանձնապէս նկատելով, որ Աղը—Ղարիբը մէջքը նոճի ծա-
ռին դէմ արած անձնատուր է եղել քնին... Նրան մի կերպ
զարթեցնելու նպատակով... իբր թէ միամտաբար, Ծահ—Սա-
նամին առաջարկում է.— „սէ տիրուհիս, այժմ մի սազ լինէր

Աշըղ—Ղարիբի երգերից մի քանիսը երգէինք, ինչ լաւ բան
կը դառնար“:

Նոյն ըոպէին Շահ—Սանամը հրամայում է մի սաղ
բերել: Սաղը բերելուն պէս, Աղճա—Ղըզը առնում է ձեռքն
ու Ղարիբին զարթեցնելու համար տեսնենք ինչ է ասում.—

Սարայտան ենտի իւրիւտի,
Ուլյան ավճի ավըն գեալտի,
Շավղի ալամի բիւրիւտի,
Ուլյան ավճի ավըն գեալտի:

Սիյա գիւֆըն թօքմիշ իւզա,
Գիւզալլարի սիւզա սիւզա,
Սարայտան ենտըրտըմ գիւզա,
Ուլյան ավճի ավըն գեալտի:

Ալի, ալաղի խընալի,
Գեօքսընի թուրինճ մամալի,
Եանաղլարըն չիֆտա բանկլի,
Ուլյան ավճի ավըն գեալտի:

Ղալտըրըմլար ուֆախ տաշլի,
Աշըղըն գեօզլարի եաշլի,
Ալ զուշանմիշ եշիլ բաշլի,
Ուլյան ավճի ավըն գեալտի:

Սարայտան ենտի նազ իլա,
Սօհպաթի թիւրլի սազ իլա,
Ղըրիս ինճա բէլլի զըզ իլա,
Ուլյան ավճի ավըն գեալտի:

Հավուզ բաշընտա օթուրուր,
Դաստընի սուլյա բաթըրըր,
Գեօրանլար ախլըն շաշըրըր,
Ուլյան ավճի ավըն գեալտի:

Աչտըմ բաղչան ղափուսընի,
Էօնիւմ ղաթտըմ հափըսընի,
Տո՛ւլտո՛ւն եարըն ղօղուսընի,
Ուլյան ավճի ավըն գեալտի:

Հայ. քարզ.

Աղարանքից իջաւ ճեմեց,
Զարթիր որսորդ որսդ եկաւ,
Ողջ աշխարհին լոյս տարածեց,
Զարթիր որսորդ որսդ եկաւ:

Սե մազեր երեսին փռուած,
Գեղեցիկ դէմքը տխրամած,
Եպարանքից դաշտն է իջած,
Զարթիր որսորդ որսդ եկաւ:

Զեռք ու ոտքը հինայած է,
Ծոցուճը նուներ պահած է,
Սյտերը խալով նաշխած է,
Զարթիր որսորդ որսդ եկաւ:

Սանդուխները մանրիկ քարով,
Աչքը լիքն է արտասունքով,
Ման է գալիս կարմիր կապով,
Զարթիր որսորդ որսդ եկաւ:

Պալատից իջաւ ճեմելու,
Մի քիչ երգ նուագ լսելու,
Աղջիկներին հետ ման գալու,
Զարթիր որսորդ որսդ եկաւ:

Շատրուանի մօտը նստաւ,
Զեռքը ջրի մէջը տարաւ,

Տեսնողները խելքը կորաւ,
Զարթիր որսորդ որսդ եկաւ:

Եկանք պարտէզ մենք քո մօտը:
Տրորեցինք կանանչ խոտը,
Զառնր դու սիրուհուդ հոտը,
Զարթիր որսորդ որսդ եկաւ:

Աղճա—Արզի այս խօսքերից Շահ—Սանամը կասկածա-
ւորում ու ենթադրում է, որ մի դաղտնիք կայ այստեղ: Եւ
դառնալով դէպի նրան ասում է.—Ախչի, զգուշացիր որ
այս պարտիզում մէկին թագցրած չը լինիս... որովհետև
ասացուածքներդ քեզ մատնում են... Այդպէս երգելուդ նպա-
տակն քնչ էր, շուտով ինձ ասա:

Տիրուհիս, ասում է Աղճա—Արզը, ահա ճշմարիտն ասեմ..
Այս առաւօտ որ իջայ պարտէզ, տեսայ որ Աշըղ—Ղարիբն
այստեղ է և խնդրում է քեզ տեսնել: Ես էլ եկայ քեզ
կանչելու: Մինչև մեր այստեղ գալը, նա մէջքը դէմ է
սրել նոճի ծառին ու քնել է: Նրան զարթեցնելու համար
այս երգերը երգեցի“:

Այս խօսքերը լսելուն պէս, Շահ—Սանամը դիտմամբ
ընկերներից բաժանվում — հեռանում է ու թփերի մէջ
ծածկվում: Իսկ Աղճա—Արզը դարձեալ սազը ձեռքն է առ-
նում ու երգում է.—

Բաշըն դալտըր բախ հար եանա,
Ույան հէյ գիւլ իւզլի Ղարիպ,
Գարտընտան օլտում դիվանա,
Ույան հէյ գիւլ իւզլի Ղարիբ:
Ալթուն բիլագուկ զօլունտա,
Չավահիր քեամար բէլընտա,
Սանամըն գեօզի եօլունտա,
Ույան հէյ գիւլ իւզլի Ղարիբ:

Բէլլա սօյլար Աղճա—գեալին,
Նատը բու ղաֆլաթտա հալին,
Ղալիս գեօրասան նազլի եարին,
Ույան հէյ գիւլ իւզլի Ղարիբ:

Հայ. քստոգ.

Գլուխդ վերցուր սիրահար,
Զարթիր ո՞վ սիրելի Ղարիբ,
Ցաւովդ դարձայ խելագար,
Զարթիր ո՞վ սիրելի Ղարիբ:

Ոսկի ապարանջան թևին,
Մարգարիտ քամար կայ մէջքին,
Շահ—Սանամի աչքն է ճամբին,
Զարթիր ո՞վ սիրելի Ղարիբ:

Այսպէս ասաց Աղճա—Արզը,
Մի կարիւր դու խեղճի վեզը,
Վերկաց կը տեսնես շահնազը,
Զարթիր ո՞վ սիրելի Ղարիբ:

Շահ—Սանամը տեսնելով որ այս անգամ էլ չը զարթնեց
Ղարիբը, համբերութիւնը հատած, ծածկուած տեղից դուրս
գալով, ինքն է սազն առնում ձեռքը ու սկսում երգել.—

Իքի գեօզում Աղճա—գեալին,
Ղարիբ ույանմազ—ույանմազ,
Աշգ իլա օլտում դիվանա,
Ղարիբ ույանմազ ույանմազ:
Իչմիշամ զըրիւլար թասընտան,
Գէյմիշամ էշի լիպասընտան,
Սալվի աղած քեօլկեսարնտան,
Ղարիբ ույանմազ—ույանմազ:

Սանամ հէյտըր աչ գեօղիւնի,
Շիմտի օփարամ իւզիւնի,
Թարա դարիւ էթմիշ իւզիւնի,
Ղարիբ ուլանմազ — ուլանմազ:

Հայ. քարգ.

Աչքերիս լոյս դու, Աղճա—Ղըզ,
Հոգիս չի գարթի—չի գարթի,
Սիրոյ համար խելագարուայ,
Հոգիս չի գարթի—չի գարթի:

Խմեցի անմահ բաժակից,
Հագնուայ սիրոյ հանգերձից,
Նոճի ծառի գով ստուերից,
Հոգիս չի գարթի—չի գարթի:

Ես Սանամն եմ, բաց աչքերդ,
Բեր համբուրեմ լոյս երեսդ,
Ինձանից մի ծածկեր սէրդ,
Հոգիս չի գարթի—չի գարթի:

Այսպիսի գեղեցիկ խօսքերից, Ղարիբը դարձեալ չի գարթ-
նում: Աղճա—Ղըզը հարկադրուած զնում է մօտն ու ձայն
տալիս: Աչքերը բաց անելուն պէս, իսկոյն հարցնում է.—
»Սիրուհիս սուր է«:

Աղճա—Ղըզը խորհրդաւոր կերպով նրան նկատում է.—
»միթէ քեզ գարթեցնելու համար ես ու նա չը երգեցինք...
թէպէտ նա պարտեցումն էր. բայց որովհետեւ այդքան եր-
գելուց լետոյ էլ, որ դու չը գարթնեցիր, նա էլ թողեց՞նաց:

Այս տխուր պատասխանն առնելուն պէս, Ղարիբն
այլալիւում է, մտածմունքի ծովն է խորասուզվում ու սազը
ձեռքն առնելով, տեսնենք ինչ է ասում.—

Նա հէքմաթ տըր բան հայրաթտա դալմիշամ,
Եար եանըմա գեալմիշ նէճա տուլմատըմ,
Բիր աճայիպ դափլաթլարա տալմիշամ,
Եար եանըմա գեալմիշ նէճա տուլմատըմ:

Օնըն իչիւն բանըմ բուրտա դալտըղըմ,
Այըպլամա բանըմ Մաճնոււն օլտըղըմ,
Աշգ իլա դարեայա դամա տալտըղըմ,
Եար եանըմա գեալմիշ նէճա տուլմատըմ:

Բիր սալտա տըր դիւշտի դարիպ բաշըմա,
Նազար էլլա գեօզտան ախան եաշըմա,
Բու գիւն դալուշմիշամ նազլի էշիմա,
Եար եանըմա գեալմիշ նէճա տուլմատըմ:

Ղարիպ դէր քի դարգա չարա բուլայտըմ,
Եարըմ իլա բան թանհաճա դալայտըմ,
Ահտ ու ամանըմի իճրա ղըլայտըմ,
Եար եանըմա գեալմիշ նէճա տուլմատըմ:

Հայ. քարգ.

Ի՞նչ զարմանք է, ես ապշութեան մէջ ընկած,
Սիրուհիս մօտս գայ ու ես չիմանամ,
Մի տեսակ հոգսերի անձնատուր եղած,
Սիրուհիս մօտ գայ ու ես չիմանամ:

Նրա համար էր իմ այստեղ գալ մնալս,
Ի՞նչ միտք ունէր յատուկ Մաճնոււն դառնալս,
Կամ թէ սիրոյ հոգսի ծովում լողալս,
Սիրուհիս մօտս գայ ու ես չիմանամ:

Մի սէր էր որ եկաւ դիպաւ իմ գլխին,
Ափսոսա դու, իմ արտասուող աչերին,

Ե՞րբ կը տեսնեմ այլ ևս իմ սիրուհին,
Սիրուհիս մօտս գայ ու ես չիմանամ:

Խեղճ Ղարիբս իմ վերքերին ճար գտնեմ,
Սիրուհուս հետ հաստատուն դաշինք կապեմ,
Խորհուրդս—պայմանս ի կատար ածեմ,
Սիրուհիս մօտս գայ ու ես չիմանամ:

Երգն աւարտելուց յետ, սկսում է լաց լինել. Բայց
Շահ—Սանամը չը դիմանալով նրա լացին, յանկարծ թագ-
նուած տեղից դուրս է գալիս ու գնում մօտը կանգնում:
Միմեանց տեսնելով խիստ ուրախանում են ու գնում դէ-
պի Սանամի սենեակները: Մի փոքր նախաճաշելուց յետ,
Շահ—Սանամն հարցնում է.— «Սիրելիս լսել եմ որ օտարու-
թիւն ես գնում, պատճառն ի՞նչ է»:

«Քոյ ձեռքդ խնդրելու համար, մայրս ուղարկել էի
հօրդ մօտ: Թէպէտ նա տալու հաճութիւն էր տուել. բայց
հարսանիքի ծախքի համար քառասուն քեսա փող էր պա-
հանջել: Այդ փողը աշխատել—ձեռք բերելու համար վճռել
եմ գնալ օտարութիւն, պատասխանում է Ղարիբը:

Այս բանը լսելուն պէս, Շահ—Սանամը նոյն ըոպէին
տեղից վեր կենալով արկղը բաց է անում ու պահանջուած
ոսկիքը շաղ տալիս նրա առաջին:

«Ոչ, այդպէս բան չի լինի, ասում է Ղարիբը: Իմ սեփա-
կան աշխատանքով կուզեմ քեզ առնել, որ չը լինի թէ մի
օր նեղացած՝ ինձ երեսով տաս թէ, ինձ ուզելուդ ժամանակ
որքան փող ծախսեցիր: Այն ժամանակ այդ բանը ինձ համար
անտանելի ցաւ կը լինի... հէնց այդ պատճառով էլ չեմ ու-
զում քոյ տուած փողը»:

«Այդ ի՞նչ ես ասում, սիրելիս, իսկոյն վրայ է բերում
Շահ—Սանամը. միթէ այդպիսի բան ինձանից կսպասես. մի-
թէ ես այդպէս եմ ծնուած... Ներողամիտ եղիր և հաստատ
հաւատա, որ այդպիսի խոսք բնաւ չի լինի մեր մէջ, ասում է

ու կրկին թախանձում, որ ոսկիքը վեր առնի: Բայց Աշըղ—
Ղարիբը մերժելով մերժում է ու իւր կողմից առաջարկում,
թէ եկ մեր մէջ դաշն կապենք... որովհետեւ գնալ չը գալ
կլինի և գալ չը գտնել, ասում է ու սազը ձեռքն առնե-
լով, տեսնենք ինչ է ասում.—

Աշըղ—Ղարիբ

Բաշընա դօնտիւկիւմ գիւլ իւզլի Սանամ,
Գիտամ եար ղուրպաթա, բալքի դեալմայամ,
Բու ալըլըլիս բիգա Հախտան դայիլ մի,
Գիտամ եար ղուրպաթա, բալքի դեալմայամ:

Դօն բարի—դօն բարի իւզըն գեօրայիմ,
Ալ եանաղլարընա ղուրպան օլայիմ,
Բիր ամանաթըմ վար, սանա վերայիմ;
Գիտամ եար ղուրպաթա, բալքի դեալմայամ:

Չահ—Սանամ

Դէմամ իկիտլարտա օլմազ հաղիղաթ,
Վար Ղարիբըմ սաղլըղ իլա գեալասան,
Վար տըր բիլիրամ սանտա մուհապպաթ,
Վար Ղարիբըմ սաղլըղ իլա գեալասան:

Ղուրպանըն օլայիմ աման հէյ Ղարիբ,
Սան սըն բանըմ դարտի, սարըմա թապիպ,
Լայեղ մի տըր բանի բունտա բրախիպ,
Վար Ղարիբըմ սաղլըղ իլա գեալասան:

Աշըղ—Ղարիբ

Եագըլմիշ այնըմա էշիըն ազալի,
Ղըշ գեալանճա բաղլար թօքեար դազալի,

Բան ըուժմ դիարտա սանտան գիւզալի,
Սարամ դօստ ալլանամ, բալքի գեալմայամ:

Ղօրխմա Սանամ սանտան քեասմամ գիւմանի,
Ալա գեօզ իւթիւնա դաշի քեամանի,
Ետտի իլա քեաստըմ ահտ ու ամանի,
Սարամ դօստ ալլանամ, բալքի գեալմայամ:

Չահ—Սանամ

Ղարիբ բու սօզլարըն հախա եարամազ,
Սօզունտա տուրմեան իկիտ օլամազ,
Էլտա գիւզալ չօխ տուր սանա եարամազ,
Վար Ղարիբըմ սաղլըզ իլա գեալասան:

Գէթմա Ղարիբ, գէթմա, եօլլար չամուր տըր,
Սանըն զարա բաղըն տաշ տըր, դամուր տըր,
Ետտի իլ գէտիկին խէլի էօմիւր տըր,
Վար Ղարիբըմ սաղլըզ իլա գեալասան:

Աշըղ—Ղարիբ

Բաղտատ իմիշ զօշ իկիտըն վաթանի,
Արամազլար զարիբ երտա եաթանի,
Գիւլ երընա թախըլմա գեալ թիքեանի,
Սարամ դօստ ալլանամ, բալքի գեալմայամ:

Վար օթուր երընա զիլֆընի գիւզաթ,
Հիւմա զուշու կիսլի գեանտընի գիւզաթ,
Ետտի իլ գէյինճա եօլըմի գեօզաթ,
Սարամ դօստ ալլանամ, բալքի գեալմայամ:

Չահ—Սանամ

Երի Ղարիբ, երի, զալմա եօլընտան,
Իզին վէրտըմ, տիւրամատըմ գիւլընտան,
Բիր բարգիւզար վէրամ սաչի թէլըմտան,
Վար Ղարիբըմ սաղլըզ իլա գեալասան:

Բիւլբիւլըմ—Ղարիբըմ տուրմայըպ, գիտար,
Եափտըղըմ սարալլար օլտի հափ հատար,
Սանամըն սօզիւնտայ վօր մի տըր սէզար,
Վար Ղարիբըմ սաղլըզ իլա գեալասան:

Աշըղ—Ղարիբ

Ղարիբ գէր քի բանըմ հալըմ ետման տըր,
Իւճա տաղլար բաշի թօզ տըր զիւման տըր,
Բու ալըլըզ բիզա խէլի գաման տըր,
Գիտամ դօստ ալլանամ, բալքի գեալմայամ:

Հայ. թարգ.

Աշըղ—Ղարիբ

Կեանքիդ մատաղ լինիմ սիրելի Սանամ,
Գնամ օտարութիւն, գուցէ թէ չգամ,
Այս բաժանումն մթթէ Աստուածանից չէ,
Գնամ օտարութիւն, գուցէ թէ չգամ:

Դարձիւր, դարձիւր, լոյս երեսդ մի տեսնեմ,
Այդ կարմիր այտերիդ ես մատաղ լինեմ,
Մի պահուստ կայ մօտս, արի քեզ յանձնեմ,
Գնամ օտարութիւն, գուցէ թէ չգամ:

Չահ—Սանամ

Երիտասարդին հաւատալ չի լինի,
Գնա Ղարիբ, ողջութիւնով լետ արի,

Քեզանում կայ, գիտեմ, ճշմարիտ խոստմունք,
Գնահ Աարիբ, ողջութիւնով յետ արի:

Ես քեզ մատաղ լինիմ իմ սրտի սէրը,
Դու ես իսկ ցաւերիս ու գլխիս տէրը,
Արժան է որ ինձի գցես սարերը,
Գնահ Աարիբ, ողջութիւնով յետ արի:

Աշրդ—Ղարիբ

ձակատիս գրուած է սէրը ահագին,
Աշնանն այգու տերեւները կը թափին,
Յունաստանում եթէ քեզնից գեղեցկին
Գտայ, այնտեղ մնամ, գուցէ թէ չգամ:

Մի վախենար Սանամ, քեզնից անյոյս չեմ,
Ոչք ու ունքիդ վերայ ես երգում կանեմ,
Եթէր տարի ուխտ ու պայման կը դնեմ,
Գնամ օտարութիւն, գուցէ թէ չգամ:

Ղահ—Սանամ

Ղարիբ այդ խօսքերդ բնաւ չէ բարի,
Խօսքին չը կացողը, մարդ չէ անարի,
Օտար գեղեցիկը քեզ չի յարմարի,
Գնահ Աարիբ, ողջութիւնով յետ արի:

Մի գնահ Աարիբ մի գնահ, մեծ չարչարանք է,
Քոյ այդ մտածմունքդ ինձի տանջանք է,
Եթէր տարին բաւականին մեծ կեանք է,
Գնահ Աարիբ, ողջութիւնով յետ արի:

Աշրդ—Ղարիբ

Թէ Բաղտատ էլ լինի մարդի հայրենիք,
Օտար երկրում չի գտնի իրան տեղիք,

Փուշը չի ընդունէ որպէս վարդենիք,
Գնամ օտարութիւն, գուցէ թէ չգամ:

Նստիր տեղդ ու ծամերդ յարդարէ,
Փիւնիկ թռչունի պէս դու քեզ զարդարէ,
Եթէր տարի սպասելով դադարէ,
Գնամ օտարութիւն, գուցէ թէ չգամ:

Շահ—Սանամ

Գնահ Աարիբ, գնահ, էլ յետ մի մնայ,
Իրաւունք եմ տալիս, գնահ մի մնայ,
Մազերիցս մի յիշատակ տամ ընծայ,
Գնահ Աարիբ, ողջութիւնով յետ արի:

Իմ սոխակ Աարիբս գնաց—չը մնաց,
Շինած ապարանքս եղաւ տխրամած,
Սանամիս խօսքի մէջ մի՞թէ կայ կասկած,
Գնահ Աարիբ, ողջութիւնով յետ արի:

Աշրդ Ղարիբ

Ես Ղարիբն եմ, իմ գրութիւնս վատ է,
Լեռների գազաթը խիստ մթապատ է,
Այս բաժանումն իրաւ երկար ու շատ է,
Գնամ օտարութիւն, գուցէ թէ չգամ:

Ղարիբն այսպէս ասելով, Շահ—Սանամը նրա չը գնալու համար դարձեալ աղաչում պաղատում է, բայց գնալու նպատակից յետ կացնելու հնար չի լինում:

„Իհարկէ նպատակիցս յետ կանգնել չեմ կարող, ասում է Ղարիբը, որովհետեւ մեռնել կայ, բայց խօսքից յետ դառնալ ոչ երբէք“:

Այս վճռական խօսքը Ղարիբից լսելով, Շահ—Սանամը

արտից մի խոր ախ քաշելով ասում է.— „Հէյ վնխ... Լ
մտքումը կասկած է ընկնում, թէ այս երիտասարդը օտար
երկիր է գնում, այն կողմերում գուցէ ինձանից մի գեղեցիկը
պատահի ու նրան առնելով ինձանից ձեռք վերցնէ, այն ժա-
մանակ իմ գրուածիւնը թնշ կերպ կը լինի ասելով՝ ինքն
իրան կասկածանքի է ենթարկում... Այսպիսի մտածմունքնե-
րից Սանամը բարբոքուելով, դարձեալ սազն առնում է ձեռ-
քըն ու տեսնենք թէ ինչ է ասում.—

Ղուրպանըն օլայիմ, աման հէյ Ղարիբ,
Ջանըմ Ղարիբ գէթմա, սախըն ըումա սան,
Գեազտըղըն երլարտա ունութմա բանի,
Եարըմ Ղարիբ գէթմա, սախըն ըումա սան:

Աշըղ—Ղարիբ

Ակեար Մէվլա բանի էօմըր վերարսա,
Աղլամա սավտիւկիւմ գէնա գեալըրամ,
Աճալ շարպաթընի նուշ էլլամագսամ,
Աղլամա սավտիւկիւմ գէնա գեալըրամ:

Չահ—Սաւնաւ

Մէվլա երըշտըրա բիգի օ դամա,
Ղարիբ տաեանամամ բան բու սիթամա,
Ակեար մալ իսթարսան վերըրամ սանա,
Ջանըմ Ղարիբ գէթմա գիարի ըումա սան:

Աշըղ—Ղարիբ

Ղօրխմա Սանամ, գիտար գէնա գեալըրամ,
Գեալարտա սավտիւկիւմ սանի ալըրամ,
Ղըսմաթ իսա Հալապտա բան ղալըրամ,
Աղլամա սավտիւկիւմ գիտար գեալըրամ:

Չահ—Սաւնաւ

Գէտըպ ղուրպաթ էլա իւզիւմ սօլտուրմա,
Գիզլի սըրըրմ եատ էլլարա բիլտըրմա,
Գիւշմանլարի, սախըն, բանա գիւլտուրմա,
Ջանըմ Ղարիբ գէթմա գիարի ըումա սան:

Աշըղ—Ղարիբ

Թիֆլիզ շըհար ասըլ բիգըմ երըմըզ,
Սրտան ուչտուղ՝ վերան ղալտի երըմըզ,
Բան գիտարսամ Սանամ, նա օլուր հալըմըզ,
Աղլամա սավտիւկիւմ գէնա գեալըրամ:

Հայ. քարզ.

Չահ—Սաւնաւ

Ես մատաղդ լինիմ սիրելի Ղարիբ,
Հոգիս Ղարիբ, դու մի գնա յունաստան:
Ուր որ լինիս, ինձ չը մոռնաս անուշիկ,
Սիրուն Ղարիբ, դու մի գնա յունաստան,

Աշըղ—Ղարիբ

Եթէ Աստուած ինձի երկար կեանք տուեց,
Մի լար իմ անուշիկ, ես դարձեալ կգամ,
Թէ մահուան բաժակին չարժանացրեց,
Մի լար իմ անուշիկ, ես դարձեալ կգամ:

Չահ—Սաւնաւ

Աստուած թող հասցնէ մեզի այն ժամին,
Չեմ գիմանայ Ղարիբ ես այս զրկանքին,

Թէ փող կուզես, հոգիս, տամ քեզ ահագին,
Հոգիս Ղարիբ, դու մի գնա լունաստան:

Աշըղ—Ղարիբ

Մի վախենայ Սանամ, կերթամ լետ կգամ,
Գալիս՝ եմ սիրելի, հոգիս քեզ կտամ,
Հաւատացիր որ Հալապում կը մնամ,
Մի լար իմ անուշիկ, ես դարձեալ կգամ:

Շահ—Սանամ

Գնալով այլ երկիր, մի թեթեանայ,
Գաղտնիքներս օտարի մօտ մի բանայ,
Զգուշացիր որ թշնամին չը խնդայ,
Հոգիս Ղարիբ, դու մի գնա լունաստան:

Աշըղ—Ղարիբ

Թիֆլիզ քաղաքն է իսկապէս մեր տեղը,
Թէ հեռանամ կը հալուի սրտիս եղը,
Ես որ գնամ քեզի նման անմեղը—
Խեղճ կը մնայ, բայց գիտցիր դարձեալ կգամ:

Այսպէս ասելով Շահ—Սանամն սկսում է լաց լինել, և Ղարիբի համար աչքերից ծովի նման թափած արիւն արտասուքից ուժասպառ լինելով, այդ դրութեան մէջ դարձեալ սազը ձեռքն է առնում ու տեսնենք թէ ինչեր է ասում.—

Գիտանճա սավառակիւմ ղուրպաթ էլլարա,
Ճիրաղընլա բանի օլտուրմա, սախըն,
Զիւնքի գիտայօրսան՝ չափուզ գեալ էլ շուխ,
Գիւլըն բանկընի սօլտուրմա, սախըն:

Սանտան այրի դիւշտիւմ, հալըմ եաման տըր,
Եխըլաի խաթրըմըն, գեօնկիւմ վերան տըր,
Ղամա տայեանմագամ, զիրա բու ջան տըր,
Ահ իլա սաչըմնան եօլտուրմա, սախըն:

Սանսըզ բանա տար օլուրտի մաքեանըմ,
Սօլլամատան ղալըր բանըմ ղապանըմ,
Զանըմ Սանամի սան, էլ գիւլ ջիվանըմ,
Զօհրայի ղամինան տօլտուրմա, սախըն:

Հայ. քարգ.

Գնալով սիրելիս դու օտար երկիր,
Հոգսերով մի սպաներ, զգուշացիր,
Քանի որ գնում ես՝ շուտ էլ լետ արի,
Վարդիդ գօյնը մի թօթափեր, զգուշացիր:

Քեզնից բաժանուելով՝ վիճակս դառն է,
Կամքիս կոտորուելով՝ սրտիկս սառն է,
Ցաւի չեմ դիմանայ, հոգիս մի առնէ,
Ծամերովս ինձ մի կախեր, զգուշացիր:

Առանց քեզ նեղ կգայ ինձի աշխարհը,
Լուռ մնալով կը լրանայ իմ բանը,
Սանամի հոգին ես—իմ պահապանը,
Զօհրիս ցաւով մի լցներ, զգուշացիր:

Այնուհետև Աշըղ—Ղարիբը Սուրբ Սարգսի երազում տուած ոսկէ թասը հանում տալիս է Շահ—Սանամին ու ասում, — «Թող սա քեզ մօտ նշան ու լիշատակ մնայ»:

Իսկ Սանամը փոխադարձապէս իւր ոսկի սանտրն ու թաշկինակներից մէկն է տալիս նրան: Այս փոխանակութիւնից յետոյ միմեանց հետ համբուրուելով պայմանաւորվում են:

Այդտեղից դուրս գալով, Ղարիբն ուղղակի գնում է մօր մօտ, ձեռքերն համբուրում է ու աշխատում նրան մի կերպ զբաղեցնել, որ հանգիստ լինի... բայց զգացմունքն ու մայրական գորովը նրան խեղդում են:

Մայրը որդու շփոթուած դրութիւնը տեսնելով՝ հարցնում է.— „որդի՛ թնչ է պատահել, ինչո՞ւ ես այդպէս խոր զգածուած“:

Այժմ տեսնենք թէ որդին մօրը և մայրը որդուն ինչեր են ասում.—

Աշըղ—Ղարիբ

Ղուրպանըն օլտուղում աման եա նանամ,
Գիտիմ զուրպաթ էլըն գեալիմ բիր զաման,
Բիր գիւզալըն սավտասի վար բաշըմտա,
Գիտիմ զուրպաթ էլա գեազիմ բիր զաման:

Վաղիսասի

Սան իւրակըմ զամա տօլտուրտուն բանըմ,
Ղուրպաթա գէթմաքլա աղլաթտըն բիզի,
Ախլըմի բաշըմտան ալտըրտըն բանըմ:
Ղուրպաթա գէթմաքլա աղլաթտըն բիզի:

Աշըղ—Ղարիբ

Ջանըմ անա լութֆ էթ, աղլաթմա բանի,
էլլատըմ ման Հախա ամանաթ սանի,
Ղըզղարտաշըմ—գեօզըմ նուրընի հանի,
Չաղըրըն գեալսըն անըտա գեօրալիմ:

Վաղիսասի

Սանա օղլում էտան՝ բուլտուն Խիւտատան,
Ղարիպ, վալիտանըն բաղըի խուն օլտի,

Բիրազ բաքլա, օղլում, համշիրան գեալա,
Օնուենտա չէչմընի զան իլա տօլտի:

Աշըղ—Ղարիբ

Գեալ բանըմ համշիրամ աղլաթտըն բանի,
Գեօրիմ դունիա գեօզի իլա բան սանի,
Հըֆզ էտա քեատարտան Հախի բու թանի,
Համաշա զըլ դուա սան սապահ ախշամ:

Հայ. քարգ.

Աշըղ—Ղարիբ

Ես մատաղդ լինիմ ծնող թանկագին,
Գնամ օտար երկիր ման գամ մի միջոց,
Մի գեղեցկի սէրն է նստել իմ սրտին,
Գնամ օտար երկիր ման գամ մի միջոց:

Մայրը

Գու իմ սիրտս վշտով—ցաւերով լցիր,
Օտար տեղ գնալով մի լացներ մեզի,
Խելքս գլխէս առար տրտում թողեցիր,
Օտար տեղ գնալով մի լացներ մեզի:

Աշըղ—Ղարիբ

Մայրիկ ջան հերիք է, դու այդքան մի լար,
Քեզ Աստուծուն կտամ—մեր Հօրը արդար,
Անուշ քոյրս կանչէ տեսնելու համար,
Գնամ օտար երկիր ման գամ մի միջոց:

Մայրը

Քեզ պատճառ լինողին Տէրը թող դատէ,
 Օտար ծնողի գուժը խիստ աղքատ է,
 Քիչ սպասէ քոյրըդ էլ գայ նկատէ,
 Օտար տեղ գնալով մի լացներ մեզի:

Աշուղ—Ղարիք

Եկ անուշիկ քոյրս, եկ լաց դու ինձի,
 Պայծառ մնաս, որ աշխարհ քեզ նախանձի,
 Ես կարօտ եմ աղօթքի, ոչ թէ գանձի,
 Գնամ օտար երկիր ման գամ մի միջոց:

Երբ գալիս է քոյրն ու միասին ուխտ են անում և պատրաստվում է գնալու, քոյրը լաց լինելով հետևեալ սրբ-տամորմոք երգն է ասում.—

Ղուրպանըն օլտուղում գիւլ իւզլի դարտաշ,
 Գէտըպ զուրպաթ էլա՝ աղլաթմա բիզի,
 Ղամ իլա օլտի ալամ բաշըմա տար,
 Գէտըպ զուրպաթ էլա՝ աղլաթմա բիզի:

Բանի սանտան այլրան զահըր օլտուն,
 Գիլլարամ Աղճա—Ղըզ աթէշտա եանսըն,
 Սարայի Շահ—Սանամ երլարտա եաթսըն,
 Գէտըպ զուրպաթ էլա՝ աղլաթմա բիզի:

Նէչա բիր ալամ իչուն աղլէլիմ բան,
 Զիկեարըմ աշգ օտունա տաղլէլիմ բան,
 Բիրատարսըզ ջիհանի նէլլէլիմ բան,
 Գէտըպ զուրպաթ էլա՝ աղլաթմա բիզի:

Հայ. քարգ.

Ես քեզ մատաղ լինիմ սիրելի եղբայր,
 Հեռու տեղ գնալով մի լացներ մեզի,

Աշխարհը կը մթնէ իսկ ինձի համար,
 Հեռու տեղ գնալով մի լացներ մեզի:

Ինձ քեզանից բաժանողը թող զրկուի,
 Տեսնեմ Աղճա—Ղըզը կրակում այրուի,
 Շահ—Սանամի տունը հիմքից կործանուի,
 Հեռու տեղ գնալով մի լացներ մեզի:

Քանի մէկ լաց լինիմ աշխարհի համար,
 Լերդս ու սիրտս այրվում է քեզի համար,
 Պանդուխտ լինելդ թնչ օգուտ մեզի համար,
 Հեռու տեղ գնալով մի լացներ մեզի:

Ղարիբը իւր քրոջ, Շահ—Սանամին ու Աղճա—Ղըզին տուած անէծքներից անբաւական մնալով ու չը գիմանալով, նրան իբր պատասխան այս երկու խօսքն է ասում.—

Ինթիզար էլլամա էյ գեօզըմ բաճի,
 Սաղ օլտուն Սանամն սարայի, թաճի,
 Իւրակըմայ զօլտուն բիր ինճա աճի,
 Գիտիմ զուրպաթ էլա՝ գեազիմ բիր զաման:

Հայ. քարգ.

Իմ աչքի լոյս քոյրս անէծք մի կարգայ,
 Թող Սանամի տունն ու տեղը ողջ մնայ,
 Սրտիս վերայ մեծամեծ ցաւ մի բառնայ,
 Գնամ օտար երկիր ման գամ մի միջոց:

Այդ միջոցին սազը պատից քաշ է անում ու մօրն ասում է.— «մայրիկ, թէ որ այս իմ սազըս քաշ արած տեղից վայր ընկաւ ու թելի մէկը կտրուեց, իմացէք որ ես մեռած եմ»: Եւ այնուհետև մօրն ու քրոջը հրաժեշտ տալով, գնում է դէպի սրճարան:

Ղարիբը Սաքիա անունով մի վերին աստիճանի մտերիմ ու հաւատարիմ բարեկամ ունէր: Սրճարան գնալիս ճանապարհին նրան պատահելով, ճամբորդութեան մասին խօսք է բաց անում ու փորձելու համար ասում.— „Եթէ օտարութեան մէջ մեռայ կամ ինձ մի վնաս պատահեց...ի հարկէ յայտնի է թէ ինչ կանէք: Բայց զգուշացէք այդ աղջկայ հարսանիքին ներկայ լինելուց“:

„Աստուած ողորմած է... Աստուած ոչ անէ որ քեզ մի վտանգ պատահի, պատասխանում է Սաքիան... Եթէ այդպիսի բան պատահեց, քեզ համար քառասուն օր տանից չեմ դուրս գայ և անդադար սուգ պահելով լաց ու կոծ կանեմ“:

„Ապրիս, շնորհակալ եմ, ասում է Ղարիբն ու գնում սրճարան“:

Դալի Մահմուտը նրան տեսնելով,— „էյ Ղարիբ, ասում է, այսօր մեր բաժանման օրն է, մի բան երգէ ու նուագէ, գոնէ մի վերջին անգամ էլ քեզ լսենք“:

Ղարիբն այս հրահերձ ընդունելով, իսկոյն սազը ձեռքըն է առնում ու այս սրտառուչ երգը երգում,—

Ղուրպաթ էլտա բաշ եաստըղա գեալանտա,
 Ղաեաթտա եաման օլուր իշի ղարիբըն,
 Գեալան օլմազ, գիտան օլմազ եանընա,
 Սիեահ թօբրաղ իլա տաշի ղարիբըն:

Եագըղ օլտի շու ղարիբըն ատընա,
 Տօլմազ օլմազ լազաթընա—տատընա,
 Հար գեալտիքճա եարանլարի եանընա,
 Դինմազ ասլա չէշմի եաշի ղարիբըն:

Ղուրպաթ էլա ղարիբ գեթտի բիլանմազ,
 Աղլալինճա չէշմըն եաշի սիլինմազ,
 Ղարիբ նա տըր հալըն գէյի սօրուլմազ,
 Հէչ բուլունմազ եարի էշի ղարիբըն:

Ղանտա գէթսա գիւլմազ ղարիբըն իւզի:
 Բիրլի տըր եախասի, եաշլի տըր գեօզի,
 Աչամազ քիմսայա օ գիզլի սէօզի,
 Մուհապպաթ տըր հար սրտաշի ղարիբըն:

Ղարիբ էյ տէր, բան ղարիբա քիմ բախսըն,
 Անամ եօխ քի, գեալըպ գեօզ եաշի թօքսըն,
 Սանամ եօխ քի, մազարըմա տաշ թիքսըն,
 Բիր չալի տըր մազար տաշի ղարիբըն:

Հայ. թարգ.

Օտար երկրում թէ մէկը հիւանդանայ,
 Գրութիւնը վատ կը լինի պանդխտի,
 Իւր մօտը գնացող ու եկող չի ըլնի,
 Քարն ու հողն էլ շատ կը լինի պանդխտի:

Անէծք լինի պանդխտութեան անունին,
 Չի դիմացուի նրա հոտին ու համին,
 Երբոր ելնի մօտը գնայ ընկերին,
 Արցունքն էլ առատ կը լինի պանդխտի:

Օտար տեղը պանդխտին գիտցող չկայ,
 Լաց լինելիս արտասունքը սրբող չկայ,
 Պանդուխտն ո՞վ է բնաւ հարցանող չկայ,
 Վիճակը աղքատ կը լինի պանդխտի:

Ինչ էլ լինի՝ պանդուխտը չի ծիծաղի,
 Օձիքն աղտոտ կլնի, արտասունքն աղի,
 Գաղտնիքը մէկի մօտ բանալ կը վախի,
 Սիրտը անապատ կը լինի պանդխտի:

Ղարիպն ասաւ, պանդխտին ո՞վ կը նայէ,
 Մայր չկայ որ վերան արտասունք թափէ,

Սանամ չկայ որ գերեզման պատրաստէ,
Գերեզմանը աննկատ է պանդխտի:

Երգն աւարտելուց յետոյ, ընկերները քաղաքից դուրս, մինչև աղբիւրների գլուխը ճանապարհ գցելով, երկար տարիներ ու աջող վերադարձ բարեմաղթելով և աղ ու հաց հալալ անելով վերադառնում են տուն: Իսկ Ղարիբը ճանապարհը շարունակելով, մի օր գնում հասնում է Արզիւրիւմ ու մի սրճարանում հիւր լինում: Մի շաբաթի չափ այնտեղ երգել նուագելուց ու հանգստանալուց յետոյ, — „այստեղ մնալ չի լինի“ ասում է ինքն իրան ու պատրաստվում ճանապարհ ընկնելու: Այդ ժամանակ սրճապանը նրան ասում է. — „որդի, գոնէ մի քիչ Արզիւրումը գովէ— նկարագրէ, յետոյ Աստուած քեզ հետ գնա“:

Այս խօսքի վրայ Ղարիբը սազը ձեռքն առած երգում է. —

Դինկլէին աղալար թարիֆ էտայիմ,
Սօլլանըր ջըհանտա շանի Արզրումն,
Ետտի իխլամ չար քեօշատա բուլունմազ,
Սօլլանըր էլլարտա շանի Արզրումն:

Խօշ տըր հալա բիղայաթտա հավասի,
Դօրտ եանընտան դեալըր բիւլբիւլ սատասի,
Վարտըր օնտա արանլարըն դուասի,
Բանզար դիւլա հար եանի Արզրումըն....:

Հայ. քարգ. ¹⁾

Լսեցէք պարոններ գովասանքն անեմ,
Աշխարքում խօսվում է բերքը Արզրումի,
Ամեն կողմը եօթը բուրգեր կան, ասեմ,
Չունի ոչ մի քաղաք դիրքը Արզրումի:

1) Արզրումի մասին եղած երգը, ըստ երևութիւն— թուրքերէն ընդերի մէջ կիսատ է. ուստի լրացնելու նպատակով, մենք երեք տուն միայն հայերէնի մէջ մեզանից աւելացրինք. Ծան. քարգ.

Օգը հաճելի է ամեն ժամանակ,
Լսվում է սոխակի երգն ու աղաղակ,
Չի գտնուի նրա նման լաւ քաղաք,
Խիստ գոված են աղբերքը Արզրումի:

Ունի հմուտ արհեստաւոր դասակարգ,
Վաճառական, գիտնականներ բազմայարգ,
Որոնք ունին քաղաքական վարք ու բարք,
Միշտ լսվում է անուշ երգը Արզրումի:

Աշխատասէր երկրագործներ շատ ունի,
Սրա պէս ելումուտ մի երկիր չունի,
Իսկ գեղեցիկ սեռն է համեստ գեղունի,
Խիստ սիրով կապրին ընկերքը Արզրումի:

Ղարիբ, Արզիւրումին գովասանք տալով,
Ցաւդ չի մեղմանայ, կը մնաս լալով,
Բաղդիդ ետքից գնայ ճամբայ ընկնելով,
Միշտ անմոռաց լիշէ վերքը Արզրումի:

Արզրումի նկարագրութեան մասին խօսքը վերջացնելուց յետոյ, Աշըղ—Ղարիբն իսկոյն այդտեղից ճամբայ է ընկնում դէպի Ղալապ: Տեղ հասնելուց յետոյ, հիւր է լինում Ասլան Գատայի որդու սրճարանում ու սազը կողքին վեր գնելով, սկսում է սուրճ խմել ու նարկիլա ծխել: Մուրճը խմելուց յետոյ՝ ֆինճանի մէջ մի ոսկի է գցում: Այս բանը տեսնելով, ուրախութիւնից սրճապանի ոտքերը գետնից կտրվում է:

Ժամանակ անցնելուց յետոյ, մի օր Աշըղ—Ղարիբը սրճապանին առաջարկում է թէ, — „ինձ քեզ հետ ընկերացուր“:

„Այս սրճարանը որդիս, ասում է սրճապանը, ընդամենն իննը այցելող ունի, որոնցից չորսը առաւօտեան, իսկ հինգը երեկոյեան են գալիս“:

„Մարդիս օգուտ տուողն Սստուած է, ասում է Սշըղ—
Ղարիբը, այդ մասին շատ էլ մի մտածիր: Այնուհետև մի-
մեանց հետ համաձայնելով ու պայման դնելով ընկերանում են:

Գործը շարունակելուց մի քանի օր յետոյ փող վճարե-
լով.— „մի 4—5 լիտր սուրճ առ, ասում է Սշըղ—Ղարիբը
սրճապանին... Իսկ մութն ընկնելուց և ժամանակ անցնելուց
յետ, երբ բոլորը քաշվում գնում են—սրճարանը դատարկ-
վում է ու սրճապանն էլ տուն է գնում, Ղարիբը կանչում է
7—8 բանուորներ, ճրագները վառում են ու ինքն էլ նրանց
հետ միասին սկսում են մինչև լոյս սրճարանի կարկատան-
ներն անել—սպիտակացնել ու մաքրել: Բոլոր իրեղէններն ու
առարկաները գեղեցիկ կերպով սրբել—մաքրել և փայլուն
կերպով ամենը իւր տեղին կարգին դասաւորել... ու զար-
դարել: Առաւօտեան լոյսը բացուելուն մօտ, ինքը օճաղը
կրակ է գցում, գիւկիւմները վրայ դնում ու հանգստանալու
համար մի անկիւնում նստած սկսում է նարկիլա ծխել...:
Երբ սրճապանը լանկարձ գալիս ներս է մտնում ու այս ամենը
մի գիշերուայ մէջ կատարուած տեսնում, բերանը բաց
մնում է ապշած: Նրա զարմանքը տեսնելով,— „շատ մի մտածիր
հայրիկ, ասում է Սշըղ—Ղարիբն ու իւր ձեռքով մի մի սուրճ
է բերում խմում են: Նրանից յետոյ սիրտը լցուելով, Ղարի-
բը սազը ձեռքն է աւնում և տեսնենք թէ ինչ է ասում.—

Ձօշ էլլատի դալի գեօնուլ,
Սանա գեալտըմ Հալապ շահրի,
Սյրի գիւշտիւմ վաթանըմտան,
Սանա գեալտըմ Հալապ շահրի:

Սյրըլտըմ դօնչա գիւլըմտան,
Բու ջիհանտա բիւլբիւլըմտան,
Քեաքիւլլարի սիւմպիւլըմտան.
Սանա գեալտըմ Հալապ շահրի:

Սյրըլտըմ նազլի եարըմտան,
Իւզըմ գիւլմայուպ զարըմտան,
Գիւշըպ օլանճա մալըմտան,
Սանա գեալտըմ Հալապ շահրի:

Քիմի մօլլա, քիմի հաճի,
Ղարիբ օնլարա դուաճի,
Թարկ էլլատըմ անամ բաճի,
Սանա գեալտըմ Հալապ շահրի:

Հայ. քարգ.

Բորբոքուեց խռոված սիրտըս,
Գիւ պեգ եկայ Հալապ քաղաք,
Բաժանուեցայ հայրենքից,
Գիւ պեգ եկայ Հալապ քաղաք:

Անջատուեցայ սիրուն վարդից,
Այս աշխարհում իմ սոխակից,
Սէզի նման նուրբ ծամերից,
Գիւ պեգ եկայ Հալապ քաղաք:

Հեռացայ չքնաղ սիրուհուց,
Զրկուեցի քաղցր նայելուց,
Անցայ նրան ունենալուց,
Գիւ պեգ եկայ Հալապ քաղաք:

Որը հարուստ, որը գիտուն,
Ղարիբն է նրանց մօտ նկուն,
Անտէր թողի ես տեղ ու տուն,
Գիւ պեգ եկայ Հալապ քաղաք:

Երբ այսպէս շարունակում է երգն ու նուագը, սրճա-
րանում այլ ևս յաճախողներին նստելու տեղ չի լինում.

այնպէս որ, հազիւ թէ երկուսի փոխանակ չորս սրճապան կարողանում են նստողներին սուրճ հասցնել:

Երբ Ղարիբը երգն ու նուագը վերջացնում է և ունկնդիրները գնալիս, որը ոսկի, որը արծաթ լցնում են արկղը ու հեռանում, այն ժամանակ սրճապանը արկղը բաց է անում տեսնում է, որ ոսկով ու արծաթով լիքն է... Նոյն ժամայն մի երկու ոսկի վերցնում իջնում է փողոց ու մի ձեռք մաքուր և թանկագին անկողին գնում—բերում գցում է Ղարիբի տակը:

Մի օր էլ տեղական կառավարիչ փաշայի ծառայողներից մի աստիճանաւոր փողոց դուրս գալիս, մտնում է սրճարան ու տեսնում, որ մի երիտասարդ երգիչ անուշ ձայնով գեղեցիկ երգեր է երգում, շատ սիրում է ու գնալիս բաւականին ոսկի է տալիս նրան:

Փաշայի երկու երգիչները ճանապարհին պատահելով այդ աստիճանաւորին, հարցնում են— „որտեղից ես գալիս“:

Սրճարանից պատասխանում է: Աշըղ—Ղարիբ անունով մի նոր երգիչ է եկել և այնպէս անուշ ու գեղեցիկ է երգում, որ ձեզ պէս աշուղներին գրպանից կը հանէ“:

Երգիչները վիրաւորուելով այս խօսքերից և Աշըղ—Ղարիբին տեսնել ու ճանաչել ուզելու համար, այդտեղից ուղղակի դիմում են դէպի սրճարան:

Նրանց տեսնելուն պէս,—«համեցէք վարպետներ, քաղաքավարութեամբ ասում է Աշըղ—Ղարիբն ու խորին մտածմունքի մէջ ընկնում:

Այդ սրճարանում Դալի Սէլիմ անունով մի բարեկամ մարդ կար. Ղարիբի դրուժիւնը փոխուած տեսնելով՝ իսկոյն հարցնում է.— „ինչ ես մտածում“:

„Ինչ անեմ հոգիս, պատասխանում է Ղարիբը. սրանք ինձ փորձելու համար են եկել. թէպէտ սրանց մի երկու խօսքով զարմացնելն ու պապանձեցնելը ինձ համար մի մեծ բան չէ, բայց պիտի ասեն թէ, մի երեխայ եկաւ ու հալա-

պի փաշայի երգիչներին լռեցուց ու զարմացրեց: Այն ժամանակ փաշայի կողմից ինձ գալու կամ հասնելու վտանգներից եմ կասկածում ու խուսափում. եթէ ոչ՝ այլ ևս ուրիշ մտածմունք չկայ“:

Դալի Սէլիմն ու սրճարանում գտնուողները— „մի վախենար, որդի, ասում են. մենք քանի կենդանի ենք, քեզ ոչ մի վտանգ չի գայ: Դու եթէ շնորհք ունիս՝ ցոյց տուր ու յայտնի արա“:

Այս խօսքի վրայ Աշըղ—Ղարիբը նրանց հետ ծանօթանալուց յետոյ, դիտմամբ հրաւիրում է վարի կողմը նստելու: Այս վարմունքը ևս առաւել ծանր գալով նրանց, աւելի են վշտանում ու կատաղում: Իսկ սրճարան յաճախողներից ոմանք երբ տեսնում են Աշըղ—Ղարիբի այսպիսի լանդուզն վերաբերմունքը դէպի փաշայի երգիչներին, խելքները գլխներից թռչում է... սրանք էլ մի կողմից են սկսում նխնխալ ու հոտիլ:

Դալի Սէլիմն այս բանը նկատելով, բոլորին մի կերպ հանգստացնելու համար, խօսքն ուղղում է երգիչներին.— «տեսէք վարպետներ, ասում է. վաղուցուան խօսք է, թէ ձեռքը ձեռքից բարձր է... Սա տղամարդի տեղ է, թէ որ շնորհք ունիք՝ միմեանց դէմ մրցէք. այստեղ մէկ մէկուց վշտանալու ոչ մի առիթ չկայ: Ով յաղթող հանդիսացաւ խօսքը նրանն է“:

Այնուհետև միմեանց դէմ մի քիչ մեծաբանելուց յետոյ, երգիչներից մէկը հետևեալ ընդդիմախօսական երգն է երգում ու Աշըղ—Ղարիբն էլ նրան պատասխանում է.—

Նա տրը բունտա գեալտրն սան բու մէյտանա,
Բու մէյտանտա արքեան օլուր, եօլ օլուր:
Սանքի ման շահինամ սալսամ ալչաղա,
Բու խուսուստա դավղա օլուր, զօռ օլուր:

Աշրդ—Չարիք

Ուստանմ, բանլիք իլա գիրմա մէյտանա,
Բանլիք իտան սիզըն կիպի սարթ օլուր,
Աշուխուղ գէտիկըն զըլտան ինճա տըր,
Գեանտընա զուրթուրան բիլլահ մարտ օլուր:

Ծայիր

Զիքը էթմիշ կիպի սան գեալտըն ճօշա,
Նա տըր բու սանտաքի ահքեամ էնաիշա,
Բու աթէշտա այալլարըն տութուշա,
Զօխ աչըլմայ, սօլլայան թալլալ օլուր:

Աշրդ—Չարիք

Ուստանմ, քեամիլ իսան օթուր երջնա
Տարըլըրսան օթ թափարամ դարընա,
Ակեար աշըգ խոր բախարսա փիրընա,
Փիրընա խոր բախան աշըգ միւրտ օլուր:

Շայիր

Է՛ չօճուխ, սանմիսըն բիզա էլ գինկլայան,
Բիզա եարտըմճի տըր բիզի եարատան,
Սալամաթ բուլուր հըֆգի լիսանլա ինսան,
Խապար աղնա, հար շիչաքտան պալ օլուր:

Աշրդ—Չարիք

Գեալ հէյ ուստամ գիւճա գեանտընի սալմա,
Բիր մէճլիս խալխընի սանա գիւլտուրմա,
Բաշընի սալլայըպ՝ բուրնուն զաշըմա,
Ենար սորա իւրակընա դարտ օլուր:

Չայիր

Էրանլար ալընտսն տօլու իչտը՞ն մի,
Բուլանըք չալլարի ախըպ գէչտը՞ն մի,
Բու մէյտանա գիրիպ սարտան գէչտը՞ն մի,
Բու աշըգլըխ բաշխա—բաշխա հալ օլուր:

Աշրդ—Չարիք

Բան Ղարիբամ, չըխմամ տօղրի եօլընտան,
Քեամ քեալամ չխարմամ աօլա գիլըմտան,
Ղուշ օլսանըգ զուրթուլմագսըգ ալըմտան:
Ուչարսանըգ գեօգիւնիւզա դարտ օլուր:

Հայ. քարգ.

Երգիչ

Ի՞նչ միտք արիր եկար ընկար հրապարակ,
Ձը գիտես թէ այստեղ կարգ ու կանոն կայ,
Քեզ կուլ կտամ ես իբրև կակուղ կարագ,
Մի՛ թէ այդ չիտէիր անմիտ երեխայ:

Աշրդ—Չարիք

Վարպետ, ինձ հետ հրապարակ մի մտնի,
Ինձնից քեզի, գիտցիր, մեծ վնաս կգայ,
Երգչութիւն ասածդ մազից բարակ է,
Տղամարդ է, ով նրանից հասկանայ:

Երգիչ

Ի՞նչը քեզ բորբօքեց եռանդ ստացար,
Կամ ո՞վ խրախուսեց որ դու լրբացար,

Գեռ խմիչք չը խմած ինչո՞ւ արբեցար,
Լեզուդ քաշէ—շատ մի խօսիր անզգայ:

Աշըղ—Ղարիբ

Վարպետ թէ գիտուն ես նստիր քո տեղդ,
Թէ չէ քեզ մաշկելով կը հանեմ եղըդ,
Արհեստիդ լաւ նայէ, թէ չէ ուղեղդ
Վուրս քաշելով, կանեմ մի լաւ տապակայ:

Երգիչ

Ա՛յ երեխայ, դո՞ւ ինձ եղար վարժապետ,
Քեզ կը ձեռնադրեմ—կանեմ վարդապետ,
Զը գիտե՞ս որ քեզ համար ես դահճապետ
Այսօր պիտի դառնամ, ո՞վ անմիտ ծառայ:

Աշըղ—Ղարիբ

Արի վարպետ, դու փորձանքից հեռացիր,
Լեզուդ քեզ ժողովէ ու զգոյշ կացիր,
Ասածներըս ականջովդ լսեցիր,
Քեզ նմանին մարդիք կասեն անուղղայ:

Երգիչ

Արդեօք դու երկնային բաժակ խմել ես,
Պղտոր գետակներից երբէք անցել ես,
Քուցէ թէ գլխիցդ ձեռք վերցրել ես,
Որ համարձակ այստեղ եկար, այն աստ:

Աշըղ—Ղարիբ

Ես Ղարիբն եմ ուղիղ ճամբից չեմ դուրս գայ,
Վատ խօսք ասել լեզուիս բնաւ չեմ թող տայ,

Թռչուն լինիք, իմ ձեռնից պրծնել չկայ,
Իսկ թէ թռչիք, սրտերիդ ցաւ կը մնայ:

Այս ընդգրկմախօսութիւնն աւարտելուց լետոյ, Աշըղ—
Ղարիբն ասում է.—«տեսէք վարպետներ, մինչև հիմա առաջ
դուք էիք ասում, ես պատասխանում էի. իսկ այժմ հերթը
իմն է, մի քիչ էլ ես ասեմ, դուք պատասխանեցէք»:

Այս առաջարկութիւնն անելով, սազն առնում է ձեռքն
ու եռանդուն կերպով սկսում.—

Գինկլէին ուստալար ջուղապ սօրայիմ,
Բու աշըղըք քիմտան իճատ օլմիշ տըր,
Բաշընըզա օլմոզ իշլար դապլարըմ,
Օ քիմ տըր քի դամտան ազատ օլմիշ տըր:

Ուստամ, բիլթրմիսան իլմըն բաշընի,
Նա իշա քեասարլար դանտիլ տաշընի,
Օ քիմ տըր քի քեաստի գեանտի բաշընի,
Բունա բիլան աշըզ ուստատ օլմիշ տըր:

Հանկի շըհար բիր գիւն գիւնաշի գեօրան,
Օ քիմ տըր քի վուրուպ դարեայի եարան,
Ինճիլտան ինսանա նասիհաթ վէրան,
Իրֆան օլան բունա իրշատ օլմիշ տըր:

Բու Ղարիբ սօլլատի սիզա եմալի,
Ղուտրաթի ազտանլա բուլտըմ քեամալի,
Ավվալընտան իճատ իտի ազալի,
Գեօր քի դունեա նէճա ապատ օլմիշ տըր:

Հայ. քարգ.

Լսեցէք վարպետներ, ձեզնից հարցանեմ,
Երաժշտութիւնը ո՞ւմնից հնարուեց,

Գլխներիդ չեղած բաները կանեմ,
Հոգսերից ու ցաւից ո՛վ էր ազատուեց:

Վարպետ, իմաստութեան սկիզբը գիտե՛ս,
Ի՞նչ լապտեր է որ պայծառ լոյս կտայ մեզ,
Ո՞վ էր արդեօք մահ ճաշակեց խոնարհ հեզ,
Իր կամքովը քառաթեւ Խաչին խաչուեց:

Ի՞նչ քաղաք էր միայն մի օր լոյս տեսաւ,
Ո՞ւմ ձեռքովը ահեղ ծովը պատառուաւ,
Ո՞վ էր մարդին նախ սաստիկ պատուէր տուաւ,
Բայց նա օրինազանց եղաւ ու խաբուեց:

Ղարիբս այս բաները ձեզ համար ասաւ,
Վէրուստէն նա ձրի շնորհք ստացաւ,
Լաւ իմացէք վերջն սկզբից գոյացաւ,
Տեսէք թէ աշխարհը ինչ բանով շինուեց:

Խօսքն աւարտելով՝ Ղարիբը վարպետներին հրաւիրում է իւր ասածներին պատասխանել: Բայց նրանք մոլորուած՝ մնում են միմեանց երեսի նաչելով... և վերջն ասում են. — «պարոն երգիչ, մենք այնքան խոր կարգացողներից չենք, որ կարողանանք ասածներդ հեշտութեամբ լուծել.» ու իբրև յաղթուած, ձեռքերի սազերը յանձնում են Ղարիբին: Այնուհետև Ղարիբը ունկնդիրների խնդիրքին զիջանելով՝ իւր ասածները դարձեալ ինքն է լուծում ու բացատրում հետևեալ կերպով.—

Է՛յ ուստալար սուալըմըն ճավապի,
Աշըբլըք ատամտան իճատ օլմիշ տըր,
Գինկլան մուհապաթըմ էթման հիճապի,
Օ ետտի դամընտան ազատ օլմիշ տըր:

Իլմըն բաշի բու տըր էլլամաք սապըր,
Ղանտիլ տաշի քեասան օ իսմի Կաֆան,
Գեանտի բաշըն քեասան դեօկտա բուլուլթ տըր,
Ջիպրայիլ հար իլմա ուսթատ օլմիշ տըր:

Գարեա տըր բիր քեարա գիւնաշի գեօրան,
Սալի Մուսա տըր դարեայի եարան,
Օ դուշ Սուլէյմանա նասիհաթ վերան,
Իշտա բու ջումլայա իրշատ օլմիշ տըր:

Գենա Աշըղ—Ղարիբ աչտի սինալի,
Աշգ դարեասըն իչիպ բուլտի քեամալի,
Գիւրգ իլա դըլըճ տըր ասա ազալի,
Գիւնեա բոււնլար իլա ապստ օլմիշ տըր:

Հայ. քարգ.

Վարպետներ ձեզ ասեմ ես յայտնի կերպով,
Երաժշտութիւնն Յոբալից հնարուեց,
Մարդը այս աշխարհին հրաժեշտ տալով,
Հոգսերից ու ցաւից իսպառ ազատուեց:

Իմաստութեան սկիզբն ահա ասեմ ձեզ,
Տիրոջ վախն է... արևը լոյս կտայ մեզ,
Քրիստոսն էր մահ ճաշակեց խոնարհ հեզ,
Ու իւր կամքով քառաթեւ Խաչին խաչուեց:

Կարմիր ծովի յատակը մի օր լոյս տեսաւ,
Մովսէսի ձեռքովը ծովը պատառուաւ,
Տէրն Ա.դամին մի սաստիկ պատուէր տուաւ,
Բայց նա չը պահելով՝ Եւայից խաբուեց:

Ղարիբս այս բաները ձեզի պարզ ասաւ,
Եւ սուրբ Հոգուց ձրի շնորհք ստացաւ,

Նախ սկիզբը, վերջն ապագան գոյացաւ,
Այս բաներով մեր ողջ աշխարհը շինուեց:

Նրանք սրճարանում գեռ վիճաբանութեան մէջ էին, երբ հակառակի պէս, հէնց այդ միջոցին փաշայի սիրտը մի փոքր զուարճանալ է ուզում: Ուստի իւր ստորին պաշտօնեաներից մէկին հրամայում է, որ երգիչներին կանչեն:

Գալիս են երգիչները: Փաշան նրանց ասում է.— „այսօր դրութիւնս մի քիչ ուրիշ տեսակ է, մի քիչ երգեցէք սփոփուիմ, սիրտս բացուի: Բայց երգիչները տխուր, սկսում են քթների տակից տրտնջալ:

„Ինչո՞ւ էք տխուր, թէն է պատահել, հարցնում է փաշան:

Երգիչները խոնարհ գլուխ տալով.— „թէն պիտի պատահի, ձերդ գերազանցութիւն, ասում են նրանք. Ասլան Դատայի որդու սրճարանը մի նոր երգիչ էր եկել, այսօր նրան տեսնելու գնացինք: Բայց Գալի Սէլիմը.— „գուք իմ երգիչիս ճնշելու էք եկել“ ասելով սազերը ձեռներիցս խլեց— առաւ ու մեզ սրճարանից վռնտեց“:

Այս բանը լսելով կարծես փաշայի գլխին կրակ է վառվում ու փորձանքի է գալիս: Իսկայն հրամայում է ծառայողներին, որ Գալի Սէլիմին ու իւր նոր երգիչին բերեն ներկայացնեն իրան:

Ծառայողները գնում են սրճարան, Գալի Սէլիմին ու Աշըղ — Ղարիբին հետները վեր առած, տանում ներկայացնում են Փաշային:

Փաշան խոժոռուած նայում է Գալի Սէլիմի երեսին ու հարցնում.— „պատճառն թէն է որ դու իմ երգիչներին ձեռքից սազերը խլում ես ու իրանց էլ սրճարանից դուրս վռնտում:“

„Ձերդ գերազանցութիւն, պատասխանում է Գալի Սէլիմը, ձեր երգիչները եկան սրճարան այս երգիչի հետ վիճաբանելու ու մրցելու համար. բայց հարիւրաւոր մարդկանց ներկայութեամբ յաղթուեցան սրանից: Աշուղների սովորու-

թեան համաձայն այս տղան սազերը ձեռներիցն առաւ. հիմա դրանք „նօրսուղ“ են, (իրաւունքից ու արտօնութիւնից զրկուած): Ուրեմն էլ ես թէն մեղաւոր եմ, որ ինձ այդպէս չարաչար զրպարտել են“:

Այս բանը լսելով ու ստուգելով փաշան իւր երգիչների վերայ սաստիկ նեղանում է, որ սուտ խօսելով նրան խաբել են ու վիրաւորութեան պատճառ դարձել. և նրանց իւր երկրից աքսորում է: Եւ ապա դառնալով Ղարիբին, հարցնում է.— „ո՞րտեղացի ես“:

«Թավրիզցի եմ, պատասխանում է:

«Մի ժամանակ Թաւրիզում շրջագայել եմ, ասում է փաշան. նրա մասին մի բան ասա լսեմք“:

Ղարիբն իսկոյն սազը ձեռքն է առնում ու սկսում է երգել.—

Դինկլէին աղալար թարիֆ էտայիմ,
Եաման միւշքիւլ օլտի իշի Թավրիզըն,
Շօլլա գեօրտում գեօկտան աթէշլար եաղար,
Եախտի տաղլարընի—տաշի Թավրիզըն:

Թավրիզըն չավրասի բիր մաթին զալա,
Բիրիքիպ գիւլաշլար էտաճաք օլա,
Բիմի եսիր օլուպ, քիմիսի քեօլա,
Գեօրուլմթշ մի զարա տիւշի Թավրիզըն:

Նա բազիրկեան զալտի, վէ նա տա խօջա,
Ղարալար գէյտիլար զըրի գիւն զըրի գէճա,
Քեալլալար եափըլտի բատանլար իւճա,
Ղանլար գեօթիւրտիլար լաշի Թավրիզըն:

Աշըղ — Ղարիբ չեաքեար ահ իլա զարի,
Էլլա ճանկ օլմամիշ զիւնեասա տախի,
Վէ անըն բաք իլա կիլանի շահի,
Օնլարլա գեօրիւտի իշի Թաւրիզըն:

Հայ. թարգ.

Լսեցէք պարոններ, պատմութիւնն անեմ,
Շատ վատ եղաւ պատահարը Թավրիզի,
Տեսայ որ երկնքից կրակներ թափաւ,
Այրեց թողեց սար ու քարը Թավրիզի:

Թավրիզի բոլորը մի ամուր բերդ կար,
Կտրիչ կռուողները շուտ դարձան տկար,
Որը գերի եղաւ, որը ապիկար,
Ոչ ոք չեղաւ բարերարը Թավրիզի:

Ոչ գիտնական մնաց, ոչ վաճառական,
Քառասուն զօր գիշեր սև շորեր հագան,
Կտրած գլուխներից բերդեր շինուեցան,
Արիւնն առաւ դաշտ ու սարը Թավրիզի:

Ղարիբն եմ քաշում եմ այս սև օրերը,
Պատերազմի վայով լցուաւ ձորերը,
Շահը բէգերի հետ, ուրիշ նորերը,
Գտան փրկելու հնարը Թավրիզի:

Ղարիբի ասացուածքներին փաշան շատ հաւանում է ու մի և նոյն ժամանակ նրանից հարցնում.— «ձեր երկրում ծնողներ կամ սիրուհի ունի՞ս»:

«Ոչինչ չունիմ, պատասխանում է Ղարիբը:

«Մի ամաչիր, ազատ խօսիր, կրկնում է փաշան:

Գարձեալ „ոչինչ չունիմ“ ասում է Ղարիբն ու սազը ձեռքն առնելով սկսում է երգել.—

Արզուլայիպ չըխտըմ զուրպայթ էլլարա,
Աղլարամ սըզլարամ քիմսամ եօխ դէլի:
Եազըխ բանա դիւշտըմ դիլտան դիլլարա,
Աղլարամ սըզլարամ քիմսամ եօխ դէլի:

Գեանճ եաշըմտա թարկ էլլատըմ վաթանըմ,
Ղայաթընտա զայիֆ օլտի բու թանըմ,
Շիմտի բու բէլտատա օլտի մասքեանըմ,
Աղլարամ սըզլարամ քիմսամ եօխ դէլի:

Ղալմիշամ հայրաթտա դիւշմիշամ բուրտա,
Ջանըմ զուրպան օլսուն մարտ օղլի մարտա,
Աըվալ էլլար բանա վաթանըն նէրտա,
Աղլարամ սըզլարամ քիմսամ եօխ դէլի:

Ոշըղ—Ղարիբ եանըղ եանըղ սօլլասըն,
Ենըպ էշխըն դարեասընի բօլլասըն,
Հախ սանա դավլաթլի դայմա էլլասըն,
Աղլարամ սըզլարամ քիմսամ եօխ դէլի:

Հայ. թարգ.

Մեծ կարօտով օտարութեան դիմեցի,
Կուլամ կը մաղկըտիմ թէ ոչ ոք չունիմ,
Ափսոս, ինձի բերնէ բերան գցեցի,
Կուլամ կը մաղկտիմ թէ ոչ ոք չունիմ:

Փսքը հասակիս մէջ թողի հայրենիք,
Մտածելով սրտիս դրի սև կնիք,
Այժմ այստեղ է կացարանս գեղեցիկ,
Կուլամ կը մաղկտիմ թէ ոչ ոք չունիմ:

Ապշութեան մէջ ընկնիլս կարծեեմ զուր է,
Հօգիս մատաղ նրան, ով մտքով սուր է,
Ինձի հարցանում են հայրենիքդ ո՞ւր է,
Կուլամ կը մաղկըտիմ թէ ոչ ոք չունիմ:

Ոշըղ—Ղարիբըս բօրբօքուած եմ խօսում,
Սիրոյ ծովում ալիքները պատառում,

Տէրը ինձ միշտ ճսխութեան մէջ է պահում,
Կուլամ կը մաղկըտիմ թէ ոչ ոք չունիմ:

Փաշան Աշըղ—Ղարիբին շատ է սիրում ու իւր ապա-
րանքում մի առանձին սենեակ է յատկացնում նրան բնա-
կուելու համար: Բայց Գալի Սէլիմը դժկամակում է ու չի
յօժարանում: Վերջը որոշում են որ ցերեկը սրճարանում լի-
նի, իսկ գիշերները փաշայի մօտ:

Մենք այժմ դառնանք ուրիշ առարկայի: Խօջա Սինանը
Շահվալատ անունով մի հարուստ վաճառական հօրեղբօր
որդի ունէր: Նա մտադրվում է իւր դուստերը նրա վերայ
նշանադրելու. բայց պայման է առաջարկում թէ.— „իմ կա-
րողութեան չափ կարողութիւն որ ձեռք չը բերես, աղջիկս
քեզ չեմ տայ“:

Չահվալատը այս բանը լսելով, սկսում է վաճառակա-
նական գործերով գնալ պտտիլ Հնտստան, Եմէն, Շամ ու
գալիս հասնում է մինչև Հալապ և բեռ թափում „ղուպպա“
անուանեալ քարվանսարայում, ու ինքը գնում Ասլան Գատայի
որդու սրճարանը հանգստանալու:

Ղարիբը սրան յանկարծ տեսնելով՝ հարցնում է „որտե-
ղացի ես“:

„Թիֆլիզցի եմ, պատասխանում է Շահվալատը:

„Ե՞րբ էք գնալու, նորից հարցնում է Ղարիբը:

„Երեք օրից յետոյ ճանապարհ կընկնենք ասում է:

Ղարիբը մի նամակ պատրաստելով, հասցէն այսպէս է
գրում.— „Թիֆլիզ.— Խօջա Սինանի ապարանքում, Աշըղ—
Ղարիբի մօր ձեռքը հասնի“ . և եօթը տեղ կնքելով յանձ-
նում է Շահվալատ վաճառականին:

Շահվալատը երեք օրը լրանալուց յետ, բեռները բառ-
նում է ու ճանապարհ ընկնում: Օրեր անցնելուց յետոյ,
հասնում է Թիֆլիզի մօտ, ու մի տեղ վեր գալով վրան է
խփում: Իւր թղթապանակը խառնելու ժամանակ, Ղարիբի

տուած նամակը ձեռքն է ընկնում և բաց անելով կարդում
է, որ Շահ. Սանամին է գրած: Նամակի միջի հանգամանքն
ու եղելութիւնն իմանալով, Շահվալատի խելքը գլխից
գնում է: Նրանց նպատակը խանդարելու համար, սկսում է
հնարներ մտածել ու միջոցներ որոնել, որ արգելք դառ-
նայ նպատակի հասնելու:

Շահվալատի ստորագրեալների մէջ Քեալ—Օղլան անու-
նով մի ճարպիկ ու խորամանկ մարդ է լինում: Տեղեկանա-
լով թէ ինչու համար Շահվալատը շատ է տանջվում, մօ-
տենալով նրան ասում է.— „պարոնս, մի երգումով այդ
գործի փոխակերպելը մի մեծ բան չէ. այդ ծանրութիւնը
թող իմ վզիս“:

„Եթէ հեշտ փոխակերպելու հնարը գտար, քեզ հինգ
ջորի իրանց բեռներով կընծայեմ, ասում է Շահվալատը:

Քեալ—Օղլանն այս բանը լսելով, ևս առաւել տաք սըր-
տով է կալչում գործին: Մի շապիք թաթախում է արեան
մէջ, գալիս է Թիֆլիզ և բովանդակութիւնը փոխած նամա-
կը արիւնոտ շապիքի հետ միասին ուղղակի տանում տալիս
է Աշըղ—Ղարիբի մօրը:

Մայրը նամակը կարդալով՝ հարցնում է.— „որդիս թնչ-
պէս էր“:

«Մեր տեսած ժամանակը ողջ առողջ ու շատ լաւ էր ..
բայց մեզանից յետոյ լսեցինք, որ ճամբայ է ընկել տուն վե-
րադառնալու. միայն աւազակները վրայ են տուել սպանել
են... Իրա համար էլ յատուկ մարդ ուղարկեցինք, որ մեզ մի
ստույգ տեղեկութիւն բերէ .. բայց ցաւալի է ասել, որ մի-
այն այս արիւնաթաթախ շապիքը բերեց, ասում է ու շապի-
քը յանձնում նրան... Մայրն ու քոյրը տեսնելով արիւնոտ
շապիքը, այնքան լաց են լինում, որ թմրում — ապուշ են
դառնում... Այնուհետև սրտի սաստիկ կսկծից, մայր ու
դուստր սկսում են այսպէս ողբալ.—

Մայրը

Հարսաթի քեար էթտի ջանա օղլումըն,
Ֆիրղաթի քեար էթտի ջանա օղլումըն,
Ղայրու էօլտում համ գիրիֆթարի ալամ,
Րըխլաթի քեար էթտի ջանա օղլումըն:

Քոյրը

Էլլամիշ ըրխլաթ զարտաշըմ բանըմ,
Նարի հասրաթլա եանար ջիսմըմ ու թանըմ,
Տուտի ահըմ զափլատի ալամլարի,
Շիմտի սահրայի զամ օլտի մասքեանըմ:

Մայրը

Խաթրըմ էթտի իհաթա նար օղուլ,
Բանա շիմտան սօրա դունեա տար օղուլ,
Էխթիար էթտըն դիարի դուրպաթի,
Վար մի սանտան իւրիւքեար եւր օղուլ:

Քոյրը

Աղբթ սալտըն բեդի Ֆիրեատլարա,
Բախմազ օլտի ջիսմըմըզ դիւնէալարա,
Սանտան այրըմաղ ան զարտաշըմ,
Սալտի բեդի Լէլի կիպի սահրալարա:

Հայերեն թարգ.

Մայրը

Քոյ կարօտդ հոգոյս ազդեց իմ որդի,
Սրտիս վերքին պղպեղ ցանեց իմ որդի:

Այսուհետե աշխարհին ստրուկ դառայ,
Մահիդ լուրը ինձ սպանեց իմ որդի:

Քոյրը

Արդեօք ո՛ւր ես դու իմ եղբայր պատուական,
Քոյ փափազդ ինձ անու՛մ է հոգեհան,
Հառաչանքիս ձայնը բռնեց աշխարհը,
Այժմ ցաւի դաշտն է ինձի սեփական:

Մայրը

Դու ինձ վերայ էլ չունիս դու՛թ իմ որդեակ,
Այսուհետե աշխարհն է մու՛թ իմ որդեակ,
Միտքդ դիրը գնացիր օտարութիւն,
Յետ դառնալու էլ չունիս փոյ՛թ իմ որդեակ:

Քոյրը

Վերջապէս դու մեզ հոգսի մէջ գցեցիր,
Աշխարքումը անյիշատակ թողեցիր,
Բաժանուելով քեզնից անոյշ եղբայրս,
Լէլու նման մեզ լեռները փոխեցիր:

Այսպէս սգալուց լետոյ, մայրըն ասում է.— «գնա՛ աղջիկս, եղբօրդ պատահած անբաղդութիւնը Շահ—Սանամին հաղորդէ, որ չը լինի թէ այն թշուառի ոտքն էլ կապուած մնայ»:

Աղջիկը գնում է ու բոլոր եղելութիւնը մի առ մի Շահ—Սանամին պատմում է: Իսկ Շահ—Սանամը հարցնում է.— «այս լուրը ձեզ ո՞վ բերեց»:

«Շահվալատը, պատասխանում է աղջիկը:

«Գլուխը քարն է տուել անիծածը... ինձ առնելու համար այդպէս սուտ լուրեր է հնարել ու խարդախ միջոց է

ձեռնարկել... վերկաց միասին գնանք“:

Երբ մտնում է տուն ու ինքն էլ նամակը կարգում պրծնում է, Արիբի մօր հետ միասին գուրս գալով փողոց, կանգնում են մի առանձին անկիւն ու Եահվալատի ետեկից մարդ են ուղարկում կանչելու:

Եահվալատն ու Քեալ-Օլլանը միմեանց հետ գալիս են: „Բարով եկար խօջա, ասում է Եահ-Սանամը: Աշըղ— Աարիբն քնչպէս է... ողջ է թէ մեռած“:

Իեռ Եահվալատը ոչ մի խօսք չասած, Քեալ—Օլլանը իսկոյն վրայ է պրծնում թէ. — «չէ որ առաջուց ես ձեզ ասի... Աստուած ողորմի հոգուն...»:

Եահ—Սանամը նրա խօսքն ընդհատելով. — „Թէ որ ասածներդ սուտ են, աչքերդ քօռանան, ասում է:

Այս խօսքի վրայ Քեալ—Օլլանը կանգ առնելով մի քիչ մտածում է ու լետոյ շփոթուած կցկտուր ասում... „Ախար չէ որ... մի անգամ ձեզ ասինք... թէ մեռած է... էլ ինչ էք բանը նորից քրքրում...“:

Այս սրտասմիկ լուրը երկրորդ ամգամ լսելով, այդ խրճալիքը դարձեալ սկսում են իրանց լացն ու կոծը. —

Մայրը

Բաշընա դօնտիւկիւմ գիւլ իւզլի Սանամ,
Աղլա Սանամ, աղլա, նէճ օլտի Աարիբ,
Գէճա գիւնիւզ սավտասընա եանտըղըմ,
Աղլա Սանամ, աղլա, նէճ օլտի Աարիբ:

Եահ—Սանամ

Ղուրպանըն օլալիմ գիւլ իւզլի նանա,
Նէճա աղլամէլիմ, եարըմ գեալմատի,
Բան գիւշմիշամ բու աթէշա եանարամ,
Նէճա աղլամէլիմ, եարըմ գեալմատի:

Մայրը

Գեօր քի Ֆալաք բիգա նա իշ իշլատի,
 Վերաս շատ խօսեցին, չը մնաց ինձ խանդ,
 Մի՛ երգէք սոխակներ, սիրտս ուրախ չէ:

Այս երգն աւարտելուց լետոյ, ուղղակի դէպի Թիֆլիզ
 ճանապարհ է ընկնում և քաղաք մտնելով, իրանց դրան առ-
 աջ մի աղբիւր է լինում, երբ գալիս է այդ աղբրի մօտ,
 խուրջինը ուսից վեր բերելով, ջուր է խմում ու նստում է
 մի քիչ հանգստանալու, տեսնում է որ քոյրը սևեր հագած
 ու ձեռքին երկու գաւ բռնած, եկաւ ջուր տանելու:

Հէնց եղբօրը տեսնելուն պէս.— «վայ եղբայր ջան, դու
 բարով եկար, ասած չասած, մի քիչ սթափվում է... Մարդը
 մարդին կարող է նմանիլ, մտածում է ու ինքն իրան մի քիչ

ժողովում և սկսում հետաքրքրութեամբ անդադար նրա երեսին նայել: Ղարիբը նույնպէս իւր հետաքրքրութիւնը աւելացնում է: Աղբրի գլխին բաւականին ժամանակ ապշած միմեանց երեսի նայելով, վերջապէս աղջկայ համբերութիւնը հատնում է և դառնալով դէպի նրան ասում. — «Հոգիս, ինչ շատ մտիկ տուիր. մի քիչ սպասէ, մինչև ձեռքիս ամանները լցնեմ»:

«Նրա համար եմ մտիկ տալիս, պատասխանում է Ղարիբը, որ բոլոր մարդիքը լաւ հագնուած, զուգուած ու զարդարուած են ման գալիս, իսկ դու միայն սևերի մէջ փաթաթուած ես մնացել, պատճառն ինչ է... Մի գուցէ որ և է դժբախտութիւն է պատահել ձեզ... մթթէ նոր նընջեցեալ ունիք»:

Աղջիկը սրտից մի այնպիսի ախ է քաշում, որ երկինք գետինք սարսում—գողում են: Յետոյ աւելացնում է. — «ես Աշըղ—Ղարիբ անունով մի եղբայր ունէի. երկար ժամանակ է, որ օտարութիւն է գնացել: Անցեալները Շահվաթը նրա մեռնելու լուրն ու արիւնոտ շապիքը բերեց: Այժմ նրա նշանածին առել է ու պատրաստվում է պսակուել... շէնց այս գիշեր նրա հարսանիքի հինան տանելու գիշերն է: Եղբորս համար շատ լաց ու կոծ անելուց, մայրս էլ կուրացել է: Ահա այսքան վնաս ու դժբախտութիւն հանդիպելուց յետոյ, ես սևեր չը հագնիմ, ո՞վ հագնի»:

«Աշըղ—Ղարիբը կենդանի է, ասում է կեղծեալ օտարականը: Կամ այսօր, կամ վաղը կէսօրին նա անպատճառ այստեղ կը լինի... Այդ վատ լուրը ձեզ հաղորդողի աչքերը դուրս գալ»:

Այս խօսքերը լսելուն պէս, աղջիկը շնչասպառ վազում է դէպի տուն մօր մօտ ու ասում. — «մայրիկ, քեզ մեծ աւետիք կտամ... Աշըղ—Ղարիբ եղբայրս կենդանի է և այսօր կամ վաղը մեզ մօտ կը լինի... Աղբրի մօտ մի մարդ կայ, նա ինձ այս աւետիքը տուեց: Դեռ ևս այնտեղ է, բայց կեր-

պարանքը ելբօրս շատ է նման. կարծես իսկ ինքը լինի: Բայց նա էլ եղբորս է սպասում... Բեր այս գիշեր նրան հիւր ընդունենք, մայրիկ. թէ որ եղբայրս ինքն է, աւելի լաւ. թէ որ չէ, գոնէ հնարաւոր եղածի չափ, նրանից կողմնակի ստոյգ տեղեկութիւններ կառնենք եղբորս մասին... Բայց ես էլի կասկածումեմ, թէ նա իսկ եղբայրս է»:

«Այդպէս բան չի լինի, ախչի, ասում է մայրը. վախեցում եմ, թէ այս բանի մէջ մի խորամանկ գաղտնիք ունենաս և այս ծեր ու տրորուած ժամանակիս գլխիս մի փորձանք բերես... գնա կորի—հեռացիր ինձանից»:

Աղջիկը մօրը խնդրել աղաչելով ու համոզելով, մի կերպ նրա հաճութիւնն առնում իրան—հետ համաձայնեցնում է ու անմիջապէս գնում հրաւիրում տուն:

Ղարիբն իբրև հիւր գնում է ու դռնից ներս մտնելով, սանգուխքի գլխին կանգնում սպասում է, մինչև աղջիկը գնալներու մասին մօրը յայտնում է ու նրանից իրաւունք ստանում, թէ գնա ներս հրաւիրէ:

Աղջիկը նորից մօր հաճութիւնն ստանալով, իսկոյն վերադառնում է ու ներս հրաւիրում նորեկին:

Ղարիբը ներս մտնելով՝ փղձկած սրտով մօտենում է մօրն ու ձեռքը համբուրելով կշտին նստում:

«Բարով հազար բարի եկար թանկագին հիւր, ասում է մայրն ու լուում, մինչև սուրճ խմել վերջացնելը:

Այդ միջոցին Ղարիբը տեսնում է, որ իւր ձեռքով պատից քաշ տուած սազք, դեռ ևս բևեռածի նման կախ ու անշարժ մնում է: Նոյն րոպէին տեղից վեր է կենում ու սազը իջեցնելու ժամանակ, դիտմամբ թելի մէկը կամաց կտրում է ու «վայ, այս սազի թելի մէկը մըմտաբար կըտրուեց... փթած էր—ինչ էր» ասում է:

Այս բանը լսելով՝ պառակտ խելքը գլխից գնում է... — «այ որդի, մթ թէ սազի համար այստեղ եկար, ասում է, զա իմ որդու խիստ թանկագին սազն է, որը իւր ձեռքով

կախել գնացել է: Բայց այժմ դու եկար ու թելը կտրեցիր: ուրեմն որդուս վերադարձի ժամանակ, ես նրան ինչ պատասխան պիտի տամ“:

«Ես խօսմ գիտմամբ չը կտրեցի, մայրիկ, ասում է Ղարիբը, գուցէ առաջուց փթած կամ կտրուած էր»:

„Մենք այդ սագին ձեռք չը տալուց զատ, մօտն էլ չենք գնացել, ասում է պառաւը. անշուշտ դու կտրեցիր թելը...“: Բաւականին վշտանալուց ու մաղձոտելուց լետոյ, — „որդիս, դու իմ խօսքերից մի նեղանայ, շարունակում է պառաւը. ես քեզ նման մի որդի ունէի Աշըղ—Ղարիբ անունով, որը օտարութիւն գնացած միջոցին, սազը պատից քաշ անելով՝ ինձ ասաց թէ, մայրիկ, եթէ այս իմ սազը իւր կախ արած տեղից վայր ընկաւ, կամ թէ մի թելը կտրուեց, իմ մեռած կամ ողջ լինելը այդ բանից իմացիր: Այժմ դու եկար ու որդուս սագի թելը այսպէս կտրեցիր... Նրա եկած միջոցին, երբ որ սագի թելը կտրուած տեսնի՝ դուք էք կտրել պիտի ասէ ու մեզանից շատ նեղանայ... Այն ժամանակ դու էլ գիտես որ դրութիւններս խիստ վատ կը լինի: Մի կողմից քոյ սագի թել կտրելդ մեզ ցաւ ու պակասութիւն կը պատճառէ, միւս կողմից էլ որդուս համար աչքերիս տեսութիւնից զրկուելս“:

„Մայրիկ, այդ մասին շատ մի վշտանայ, յոյս ունիմ որ Աստուծով այսօր որդիդ կգայ... Բայց սիրելի մայրիկ, քեզանից խնդրումեմ, որ սիրական որդուդ այս սազը ինձ տաս մի քիչ ածեմ... թէ որ սագին մի վնաս կամ փորձութիւն հանդիպեց, այս իմ խուրջինիս մի աչքը լիքը ոսկի է, բոլորը տիրեցէք թող ձեզ լինի“:

Տիկինը անձանօթ մարդի այս սրտառուչ առաջարկութեանը չը գիմանալով՝ համաձայնում է սազը տալ ածելու համար:

Ղարիբը սագն ստանալով մի լաւ քօքելուց լետոյ, տեսնենք բերանից ինչ մարգարիտներ է թափում և մայրն ինչ պատասխանում նրան.—

Ղարիբ

Իշտա գեալտըմ ղօնաղ օլտում բան սանա,
Բան ղարիբամ, բան ղարիբամ, բան ղարիբ,
Բու գէճա բան սանա մէհման օլմիշամ,
Բան ղարիբամ, բան ղարիբամ, բան ղարիբ:

Վալիսասի

Եօլունա ղուրպան օլայիմ բան սանըն,
Աճապ գեալիբ մի Ղարիբըմ բանըմ,
Բան օնըն եօլունայ գիւլար դօշայիմ,
Աճապ գեալիբ մի օ Ղարիբըմ բանըմ:

Ղարիբ

Ետտի իլ գէչըրտըմ Հալապ եազընա,
Չալտըմ նէչա թամպուր իլա սազընա,
Բան չաքեարամ նազլի եարըն նազընա,
Բան ղարիբամ, բան ղարիբամ, բան ղարիբ:

Վալիսասի

Չօխ բաքլատըմ բու էլլարըն եազընի,
Շահէն օղլումըն ուչտուրտըմ եարընի,
Վէրմամ սանա Ղարիբըմըն սազընի,
Աճապ գեալիբ մի օ Ղարիբըմ բանըմ:

Ղարիբ

Խօշ տութարամ, նանս, ինճիթմամ թելըն,
Ետտի իլ տըր գեազարամ ղուրպաթ էլըն,
Բիւլբիւլի օլմիշամ բան հար մէճլիսըն,
Բան ղարիբամ, բան ղարիբամ, բան ղարիբ:

Վաղիսասի

Ղարիբըն զօղուսի շիմտի եայլլտի,
Ախլըմ գէտըպ, իւրաճիկըմ բայլլտի,
Օղլուժ Ղարիբ սանտան նէրտա այլլլտի,
Աճապ գեալիբ մի օ Ղարիբըմ բանըմ:

Ղարիբ

Փալաք բիգի նազլի եարտան այլլրտի,
Իշըմըգի զատըր Մէվլա զայլլրտի,
Ղարիբըն ուստասի զայաթ շաշըրտի,
Բան զարիբամ, բան զարիբամ, բան զարիբ:

Վաղիսասի

Ուլու սուլար դայմա տուրմատըպ, ախար,
Բանըմ ջիկեարճիկըմ օտլարա եախար,
Շահ—Սանամ բէչարա եօլլարա բախար,
Աճապ գեալիբ մի օ Ղարիբըմ բանըմ:

Ղարիբ

Անա, բան եօլլարտա չօխ սուլար գէչտըմ,
Թարկի դիար իլա ջիկեարըմ բիչտըմ,
Չիւքիւր օլա, Թիֆլիզ սուլարըն իչտըմ,
Բան զարիբամ, բան զարիբամ, բան զարիբ:

Վաղիսասի

Գեալմասի եախընմիշ Սանամ խընասի,
Բաշընա թախընսըն ինճա թանասի,
Օղուլ զահիրլատի Ղարիբ աննասի,
Աճապ գեալիբ մի օ Ղարիբըմ բանըմ:

Ղարիբ

Փամպա իփակըննան օլուր քեալապի,
Աշգ իլա տօլաշտըմ սամթի Հալապի,
Նանա, բանզամազ բանա Հար չալապի,
Բան զարիբամ, բան զարիբամ, բան զարիբ:

Այսքան երգելուց լետոյ, Ղարիբի քոյրը դարձեալ կաս-
կածուժ է... գուցէ սա իմ իսկական եղբայրս է: Սպասիր մի
քանի խօսք էլ ես ասեմ, կարելի է իւր խօսքերից կարողանամ
մի բան իմանալ, ասուժ է ու սկսուժ եղբօր հետ երգել.—

Համշիրասի

Գիւն գէճա վերըլտի Սանամ սաչըսի,
Իւրակըմա դիւշտի զարտաշ աճըսի,
Ղարիբ զարտաշըմ տըր, բանտա բաճըսի,
Գեօրիւնմատի զարտաշ—նէճ օլտի Ղարիբ:

Ղարիբ

Ղուրպաթ էլլարտա տօլաշմաղտա Ղարիբ,
Արամագտա հալեա դարտընա թապիպ,
Եարընի գեօրմաք օնա օլսա նասիպ,
Բան զարիբամ, բան զարիբամ, բան զարիբ:

Համշիրասի

Փալաք բիր տաշ վուրտի՝ եառտի բաշըմի,
Շաշխուն ատամ քիմի բիլմամ իշըմի,
Ղուրպաթտա գեօրմիշըն էօզ զարտաշըմի,
Գեալմատի զարտաշըմ—նէճ օլտի Ղարիբ:

Ղարիբ

Օղրատըմ Փալակըն բանտա զաթընա,
Բախմալի քիշինըն ասլա զաթընա,

Խըզըր գեալըպ ալտի բանա աթընա,
Ես գեալտի էօզ Ղարիբ, ես գեալաճաք աըր:

Հայերեն քարգ.

Ղարիք

Ահա եկայ ու ես քեզի հիւր եղայ,
Ես զարիբ եմ, ես զարիբ եմ, ես զարիբ,
Սյս գիշեր ես մօտդ մի ստրուկ դառայ,
Ես զարիբ եմ, ես զարիբ եմ, ես զարիբ:

Մայրը

Եկած ճանապարհիդ ես մատաղ լինիմ,
Արդեօք էրբ պիտի գայ որդիս Ղարիբը,
Նրա եկած ճամբէքին վարդեր սփռեմ,
Արդեօք էրբ պիտի գայ որդիս Ղարիբը:

Ղարիք

Հալապի մէջ անցուցի եօթը տարի,
Աճեցի տաւիղի վերայ քնարի,
Քաշեցի կարօտը ես սիրահարի,
Ես զարիբ եմ, ես զարիբ եմ, ես զարիբ:

Մայրը

Մեր այս երկրի ամռանը շատ սպասի,
Բայց ափսոս որ նպատակի չը հասի,
Որդուս սազը չեմ տայ, ոչինչ մի ասի,
Արդեօք էրբ պիտի գայ որդիս Ղարիբը:

Ղարիք

Խնամքով կը բռնեմ, չեմ դիպչի թելին,
Եօթ տարի ման եկայ մէջ օտար երկրին,

Սոխակն էի ես ամեն մի խնջոյքին,
Ես զարիբ եմ, ես զարիբ եմ, ես զարիբ:

Մայրը

Ղարիբիս անուշ հոտը այժմ բուրեց,
Խելքս թռաւ ու իմ սրտիկս բացուեց,
Ղարիբ որդիս քեզնից ո՛ւրտեղ բաժանուեց,
Արդեօք էրբ պիտի գայ որդիս Ղարիբը:

Ղարիք

Բաղդը ինձի քնքոյշ սիրուհուց բաժնեց,
Բայց ողորմած Տէրը ձեռքից չը թողեց,
Ղարիբին վարպետը շատ սխալցրեց,
Ես զարիբ եմ, ես զարիբ եմ, ես զարիբ:

Մայրը

Արտասուքս միշտ հանապազ հոսում է,
Սիրտս անշէջ կրակներում այրում է,
Շահ—Սանամը ճանապարհն սպասում է,
Արդեօք էրբ պիտի գայ որդիս Ղարիբը:

Ղարիք

Մայրիկ, ճանապարհին շատ ջրեր անցի,
Օտար երկրում լերդ ու թոքս այրեցի,
Փառք Աստուծոյ, Թիֆլիզի ջուր խմեցի,
Ես զարիբ եմ, ես զարիբ եմ, ես զարիբ:

Մայրը

Չեկած, Շահ—Սանամին հինա են տանում,
Մարգարտէ պսակը գլուխը դնում,

Ամեն կերպով ինձի են թուճաւորում,
Արդեօք երբ պիտի գայ որդիս Ղարիբը:

Ղարիբ

Բամբակի թելերից գործում են շատ բան,
Հալապում չը գտայ ինձ մի սիրական,
Մայրիկ, հաւանում էր ինձ ամեն իշխան,
Ես ղարիբ եմ, ես ղարիբ եմ, ես ղարիբ:

Քոյրը

Երեկ տուին Սանամի բաժինքն ու խոյրը,
Միտքս ընկաւ եղբօրս անոյշ համբոյրը,
Ղարիբն իմ եղբայրս է, ես նրա քոյրը,
Ո՛ւր է չի երևում Ղարիբ եղբայրս:

Ղարիբ

Օտար երկրում թէ և ման գալ չէր պատկանեմ,
Բայց իւր ցաւին գուցէ գտաւ մի դարման,
Սիրուհուն տեսնելու Տէրն անէ արժան,
Ես ղարիբ եմ, ես ղարիբ եմ, ես ղարիբ:

Քոյրը

Բաղդը մի քար խփեց գլուխս ճղեց,
Գժուած մարդի նման սարերը գցեց,
Օտար երկիր խեղճ եղբօրս հալածեց,
Ո՛ւր է չի երևում Ղարիբ եղբայրս:

Ղարիբ

Էս էլ բաղդի հարուածին պատահեցայ,
Պէտքէ մարդիս վերջը միշտ բարի գառնայ:

Սուրբ Սարգիսի ձիու գաւակին հեծայ,
Կամ եկել է, կամ պիտի գայ Ղարիբը:

Ղարիբը տեսնելով որ այս խօսքերից էլ մայրը իւր ով
լինելը չը հասկացաւ, դարձեալ սկսում է երգել.—

Վալիտամ, ղուրպաթտան գեալտըմ,
Սօյլա՛—տուրմա՛ բանըմ սազըմ,
Սշգ իլա բաղըմի գէլտամ,
Սօյլա՛—տուրմա՛ բանըմ սազըմ:

Հանի տըր թագտըղըմ թէլլար,
Եալան օլտի հափ օ գիւնլար,
Ղուրուլմիշ էլան դիւլիւնլար,
Սօյլա՛—տուրմա՛ բանըմ սազըմ:

Հայերէն բարգ.

Մայր իմ օտար երկրից եկայ,
Խօսա՛, մի լռեր իմ սազըս,
Սիրոյ համար ձեռքս առայ,
Խօսա՛, մի լռեր իմ սազըս:

Ո՛ւր են իմ թողած թելերը,
Սուտ դուրս եկան այն օրերը,
Հարսանիքում իմ անցքերը—
Պատմէ, մի լռեր իմ սազըս:

Սշըղ—Ղարիբն իրան դարձեալ մօրը ծանօթացնելու
համար, այս երգերն ասած միջոցին, հարսանիքի ուրախու-
թեան ձայներն ականջին հասնելով, խելքը գլխից գնում է,
քիչ է մնում որ գժուի.— „Սիրելի քոյրիկ, հարսանեաց
թմբուկի ձայն ականջիս հասաւ... շատ ուրախ հարսանիք է
երևում. թէ որ մօտ է, խեղճութիւն ու կարիք ունիմ...“

եղբորդ սազի համար մօրդ խնդրէ համողէ, առ ինձ տուր, զնամ այդ հարսանիքատունը մի փոքր երգեմ ու նուագեմ:»

Աղջիկը զիջանելով Ղարիբի առաջարկութեանը, մօրը աղաչում — պաղատում և վերջապէս խնդիրը լսել է տալիս ու մօրից սազն ստանալով յանձնում է Ղարիբին և նրա առաջն ընկած տանում է հարսանիքատունը ցոյց տալիս ու ինքը կրկին վերադառնում է իրանց տուն...: «Ինչ ուզում էք ասէք, այս մարդն իմ եղբայրս է, ասում է մօրն և պնդում ու յամառում է իւր ասածի վերայ:

«Քեզ նման լիբը անզգամը, բարկացած ասում է մայրը, իմ կուրուժիւնից օգտուելով, սրտիդ ուզածի պէս՝ գիտեցածը մարդին ներս առնել կուզես... Ծանր նստիր տեղդ, եթէ ոչ՝ ինչ օյին որ ասես գլխիդ կը բերեմ»:

«Ի՞նչ գիտես մայրիկ, ինչ ուզում ես ասա, բայց տես թէ վերջն իմ ասածս ինչպէս դուրս կգայ, ասում է աղջիկն ու կտուրից կտուր գնալով հասնում է Ծահ—Սանամի տան կտուրը ու մտնում ներս և սկսում մի անկիւնից հարսանիքի տան անցքերը նկատել, թէ ինչեր են կատարվում:

Իսկ Ղարիբը հարսանեաց տունը մտնելով, տեսնում է որ հարուստ ու շնորհալի մարդիքը մի կողմն են նստած, իսկ աղքատ ու խաժամուժ ամբոխը միւս կողմը...: Ղարիբը մտածում է. — «Իմ գործս հոգացողն ու կատարողները հազիւ թէ այս բաց սրունք ամբոխը լինի, իսկ այդ հարուստներից ինձ ոչ մի օգնութիւն չի գայ» ասելով՝ դառնում է դէպի ամբոխի կողմն ու բարև տալիս...: Նրանք էլ բարևն առնելով՝ սեղանի վերի ծայրը տեղ են ցոյց տալիս ու նստեցնում:

Այրուած Ղարիբը տեսնում է, որ Ծահ—Սանամը նուրբ բեհեզներից պատրաստած վարագոյրի ետևից խեղկատակութիւններին է մտիկ տալիս... իսկ մի ուրիշ վարագոյրի ետևից էլ Ծահվալատը զաւեշտութիւններին է նայում... Սակայն Ղարիբը բարև տուած միջոցին, Ծահ—Սանամը մի

անգամ վարագոյրի կողքից ծածուկ դուրս է նայում ու Ղարիբին նկատելով, թէ և կարծիքաւորվում է... բայց— «Աստուծով դարձեալ Ղարիբին կը տեսնեմ ու նրան կարծանանամ» ասելով՝ իւր մտքում շատ խնդրուածքներ է անում:

Եստ չը երկարենք բանը... Սեղանի գլխին նստողները հարց ու բարև անելուց յետոյ, Ղարիբին հարցնում են. — «Պրտեղից է գալիս և ո՞ւր է գնում»:

Ղարիբը նրանց պատասխանում է. — «Ես թղթատար եմ (սայի—թաթար) ու Թավրիզի կողմերից եմ գալիս. տեսայ որ այստեղ հարսանիքի տուն է՝ ներս մտայ, բայց զղջացի... որովհետև խեղճութիւնն ինձ հարկադրեց այդ բանն անելու... մանաւանդ որ տեսայ թէ այստեղ մեծամասնութիւնը հարուստ ու ազնուական դասակարգի մարդիք են ու ինձ անյարմար է այսպիսի տեղ մնալը... հէնց այն է երբ ուզում էի դուրս գնալ... բայց լետ դառնալուս միջոցին ձեզ որ նկատեցի, եկայ այստեղ ձեր մօտը»:

Այնուհետև մի քիչ ժամանակ անցնելով, Ղարիբը ծածուկ մի կերպ ճնկացնելով սազի թելի ձայնը հանում է... Յանկարծ սազի ձայնը այդ հասարակ ամբոխի ականջին հասնելով — «հոգուդ մատաղ, օտարական եղբայր, սազդ հանէ մի քիչ աճա ուրախանանք»:

«Ես ձեր ասած լաւ վտրպետներից չեմ, լաւ ածել չը գիտեմ, պատասխանում է. գուցէ մի անախորժութիւն պատճառեմ ձեզ... Արովհետև, ինչպէս տեսնումեմ, այստեղ ազնուական ու հարուստ մարդիք էլ շատ կան, որոնք կարող են դժգոհ ու անբաւական մնալ ինձանից»:

«Անխելք մարդ, համարձակութեամբ ասում է այդ խաժամուժ ամբոխը. նրանց բերնին է ընկել, որ մեզ մի խօսք անգամ ասեն... դու ինչ շնորհք որ ունիս՝ ցոյց տուր և ասա, բնաւ մի կոսկածիր»:

«Ես ձեզանից հէնց այդ էի ուզում լսել, ասում է Ղարիբը: Սազը մի լաւ քօքում պատրաստում է ու սրտից մի ան թաշելով՝ այս սրտաշարժ երգը երգում. —

Բահրի դամտա զայտըմ էյ զաշի հիւալըմ գեալ եթըշ,
Ղարմատի դարտընլա բու թանտա մաճալըմ գեալ եթըշ,
Հասրաթըն քեար էյլամիշ տըր ջանա էյ միւհհրի սանըն,
Բուլաթ էտամ նուրի վէճհին մահ ջամալըն գեալ եթըշ:

Աթէշի աշգընլա վիճուտըմ եանմատա սուպհու մասա,
Գեանտի դաստինլա եթըշտըր բանտան գիրեապ ու սաֆա,
Աշգըն իլա չաքմիշամ բահմի մուհապաթտա ջաֆա,
Ջանա քեար էթտի Ֆիրաղըն, բուլի ալամ գեալ եթըշ:

Հասրաթի բուլիլա գիւշտիւմ բան բու բահրի ֆըրղաթա,
Բահմ զըլ անտիշայի հիճրինլա տալտըմ մէհնաթա,
Ղարմիշամ իշթա խալալ աշգըն իլա հայրաթա,
Միւշքիւլ օլտի հասըլի ալամտա հալըմ գեալ եթըշ:

Աշգըն Աշգ—Ղարիբ իտար իւզըն գեօրմաք միւտամ,
Արզի հիւսնիւնլա անի ալամտա էյլա շատիկեամ,
Լութֆու իհասն էյլէլիպ աղաթմա արթըղ սիւպհուշամ,
Սալվի դատտըմ, գիւլիգարըմ, աղզի պալըմ գեալ եթըշ:

Հայ. քարգ.

Ծանր հոգսերի մէջ ընկայ, ազատարար եկ հասիր,
Այս ցաւերից ազատելու, դու փրկարար եկ հասիր,
Կարօտդ վերաս ծանրացաւ, ո՛վ աննման գեղանի,
Աղաչումեմ քեզ լուսատիպ իմ սիրահար եկ հասիր:

Քոյ սիրոյդ կրակովը դու ինձ մի այրեր յարաժամ,
Քո ձեռքով մօտեցուր վերքիս սպեղանի, տա՛ր խնամ,
Սիրոյդ համար ես քաշել եմ շատ չարչարանք ամէ ամ,
Կեանքիս վերայ ազդել է ցաւդ, հոգատար եկ հասիր:

Կարօտի ծովումն եմ ընկած ես միշտ ցաւդ քաշելով,
Խնամք արա՛—մի թողուր ինձ մաղձերի մէջ աշելով,

Ընկել եմ ցնորքների մէջ սիրտս ու հոգիս խաշելով,
Տխուր է իմ գրութիւնս, ո՛վ կենարար եկ հասիր:

Քոյ սիրահար խեղճ Ղարիբը գէմքդ տեսնել կը ցանկայ,
Այդ թախծալի սուրբ երեսդ ուրիշի մօտ մի բանայ,
Ողորմութիւն արա՛ ինձ կեանքիս հատորը դու մի լայ,
Բարձրահասակ, գեղատեսիլ, ժիր յուշարար եկ հասիր:

Ղարիբն այդ բոպէին իւր սաստիկ մաղձոտելուց ու սրտնեղութիւնից է դուրս ժայթքում— „Քոյ սիրահար խեղճ Ղարիբը գէմքդ տեսնել կը ցանկայ“ խօսքերը:

Երգն աւարտելուց լետոյ, Շահ—Սանամը հետաքրքրութեամբ վարագոյլի լետեից ծածուկ նրա երեսին է նայում: Նոյնպէս և հանդիսականներն են հետաքրքրվում ու խլրտում... և իսկոյն սատանի պէս հասկանում են նրա Աշըղ—Ղարիբ լինելը... Իսկ Ղարիբը նկատելով նրանց այլալուծութիւնը՝— „ես առաջուց չասացի թէ, գուցէ մի անախորժութիւն պատճառեմ ձեզ նկատում է, միանգամայն աշխատելով ցոյց տալ ու կեղծել, որ ինքն իբր թէ Ղարիբը չէ, այլ յարմարութիւնն է ստիպել ու հարկադրել իրան, որ այդ ձևով արտասանէ երգի խօսքերը:

Սակայն հանդիսականներն ասում են.— „Սիրելիս, մի նեղանար ու վշտանար, մանաւանդ թէ մեզ մի տխրեցնի, մի փոքր խնայիր մեզ և ուրախացուր, սազը ձեռքիցդ վայր մի դնիր, դեռ մի փոքր էլ երգէ, շատ ենք խնդրում քեզ“ սրտաշահ խօսքերով սիրտը գրավում են:

Աշըղ—Ղարիբը դարձեալ ղիջանելով նրանց խնդիրքին, սազը ձեռքն է առնում ու տեսնենք թէ ինչեր է ասում.—

Դիւն գէճա—գիւն գէճա Հալապ շահրընտա,
Աշգըն տօլուսընի իչտըմ տա գեալտըմ,
Մալըմ—մալալըմի վարըպ եօլունտա,
Սարըմտան, ջանըմտան գէչտըմ տա գեալտըմ:

Հայերէն քարգ.

Մի քանի օր առաջ Հալապ քաղաքում,
Ես սիրոյ բաժակը խմեցի եկայ,
Իմ եղած—չեղածս ծախսեցի ճամբում,
Կեանքիցս ու գլխիցս անցայ ու եկայ:

Այսպէս ասած միջոցին, Շահ—Սանամը իւր մօտ գտնուած նաժիշտների ուշադրութիւնը դարձնում է գէպի իրան: — „Աղջիկներ, ասում է, լսում էք, այս ձայնը Աշըղ—Ղարիբի ձայնը չէ՞ մի թէ“:

Աղջիկները— „այո՛, ասում են, նրա ձայնն է“:

Այդ ժամանակ Աշըղ—Ղարիբը մի քիչ լռելուց լետոյ դարձեալ շարունակում է.—

Արգիւրումտա էթորմ այլանի էտա,
Գըսմաթ օլտի Ղարստա իքինտի բանա,
Թիֆլիզտա օ ախշամ էլլատըմ դուա,
Խըզըրըն աթընա բինաըմ տա գեալտըմ:

Հայերէն քարգ.

Նախաճաշին ես Կարինում ոտ դրի,
Վերջալոյսին մօտիկ Ղարսում ճաշ արի,
Իսկ այդ երեկոյ Թիֆլիզ աղօթեցի.
Սուրբ Սարգիսի օձիուն հեծայ ու եկայ:

Այսպէս ասած ժամանակին Շահվալատը խիստ թրթվում է ու տխրում... Եւ գալով գէպի Գալի—Մահմուտի կողմը՝ — „Իմ գլխիս էք պտտում... մի թէ իմ տան տէրը ես չեմ... վերկաց երգիչդ ա՛ռ ու այստեղից հեռացիր— ուր որ ուզուած էք գնացէք, ասում է ու մի քանի դուրուշ սեղմում Գալի—Մահմուտի բուռը:

Այդ խօսքերից Գալի—Մահմուտը կայծակնահար է լի-

նում ու կրակ կտրում: — „Վայ դու անամօթ. այդ անպատիւ առաջարկութիւնը դու ո՛ւմ ես անում... մի թէ դունիցդ մուրացկանի՞ ես հեռացնում“ ասելով՝ թուրը քաշում է ու „այս րոպէիս տուն ու տեղդ տակն ու վրայ կանեմ“ դուռալով՝ ընկնում է Շահվալատի ետեւից:

Երկիւղից Չահվալատի խելքը գլխից գնում է... Երկմտելուց ու կասկածանքից փախչում մի ծածուկ տեղ պահ է մտնում: Իսկ Գալի—Մահմուտը գալով Ղարիբի մօտ, — „այսօր կամ Աստուած մեզ կտայ կամ նրան“ ասում է ու սազը կըրկին նրա ձեռքն է տալիս որ երգէ: Ղարիբը իւր կիսատ թողած երգը դարձեալ շարունակում է.—

Ախշամ նամազընտա գեալտըմ խանամա,
Տուլուրմատըմ սըրըրըմ բաճըմ, անամա,
Խանչալի աշգընա վուրտում Սանամա,
Թիւրլի եարալարըմ աչտըմ տա գեալտըմ,

Հայ. քարգ

Երեկոյին մեր տունն հասայ շտապով,
Մօրս, քրոջըս չտսի յայտնի կերպով,
Սանամին խփեցի սիրոյ դաշոյնով,
Իմ կերպ—կերպ վերքերս բացի ու եկայ,

Այդ միջոցին Շահ—Սանամն իւր շրջապատող աղջկերանցն ասում է. — „տեսէք աղջիկներ, — օտարութիւնից եկած միջոցին թէ և մեր տունը գնացի, ասաց երգիչը, բայց իմ ով լինելը ոչ ոքի չը յայտնեցի“:

Ղարիբի քօյրը որ այդ ժամին Շահ—Սանամի մօտն էր, նա էլ այս խօսքերը լսելով, ինքն իրան ուրախանում է. — „Ես դրա եղբայրս լինելը, թէ և սատանի պէս հէնց եկած գիշերն հասկացայ, բայց մօրս չը կարացի խօսք հասկացնել“ ինքն իրան ասելով՝ այդտեղից վեր է կենում և ուղղակի

մօր մօտ գալով— „մայրիկ, ասում է, անցեալ գիշերուայ
 հիւրի համար, որ ես ասում էի թէ եղբայրս Ղարիբն է, դու
 յամառվում էիր, ինձ դատափետում ու մի տեսակ կարծիք
 էիր տանում իմ մասին, որ իբր թէ ես քեզ խաբուրեմ ու
 ընդ նպատակով... Միայն այժմ ես հարսանիքի տանիցն եմ
 գալիս... իմ ականջով լսեցի, որ նա պարզապէս յայտնեց
 իւր ով լինելը... Միրելի մայրիկ, քեզ մեծ աւետիք. այն
 հիւրն իսկապէս քոյ հարազատ որդին և իմ եղբայր Ղարիբն
 է եղել“ ասում է ու լռում:

Բայց Ղարիբը հարսանիքի տանը կիսատ թողած երգը
 դարձեալ սկսում է հետևեալ կերպով շարունակել.—

Բանա սավտիւկիմըն խապարի գեալտի,
 Սէօղի Ֆիրաղընի բաղրըմի տալտի,
 Եօլարտա բանա բիւմամ քի նա օլտի,
 Ախան սուլար քիմի ճօշտըմ տա գեալտըմ,

Հափ աղալար—բաղլար բանա գիւլիւշտի,
 Դիարի ղուրպաթտա ջիկեարըմ փիշտի,
 Խըզըր բանըմ իմտատըմա երըշտի,
 Ղըռ աթըն իւսթիւնա գիւշտըմ տա գեալտըմ:

Ակեար սաչի Լէլլամ բանի արարսա,
 Թեւ թեւ էտըպ սիյահ գիլֆըն թարարսա,
 Աշալար տօղրուսի բանա սօրարսա,
 Արգիւրում տաղլարի աշտըմ տա գեալտըմ:

Եարանլարըն դաստի բանի տութմիշլար,
 Եշլէր դօստլար բանի հափ ունութմիշլար,
 Եշըթտըմ Սանամի գեալին էթմիշլար,
 Դիւլիւնըն հալապտա տուլտըմ տա գեալտըմ:

Ալամ դէր քի բաքլար ղաշի քեամանըմ,
 Քեասըլմատի ասլա ահտ ու ֆիղանըմ,

Ետտի սանա իտի ահտ ու ամանըմ,
 Ահտ ու ամանըմտա տուրտըմ տա գեալտըմ:

Ղուրպան օլիմ աթվարընա խուլունա,
 Ջանըմ բատա օլսուն Սանամ եօլունա,
 Բու ալամտա սանըն սալվի բօյունա,
 Թիւրլի լիպսլարըն բիշտըմ տա գեալտըմ:

Հայերէն քարգ.

Ինձի իմ սիրուհուցը լուրեր հասաւ,
 Խօսքը ու տրտունջը եկաւ ինձ գիպաւ,
 Ճանապարհին չը գիտեմ ինչ պատահաւ,
 Սրընթաց գետի պէս փրփրայ եկայ:

Մեծամեծ մարդիքդ գիտէք ամեն բան,
 Օտար երկրում սիրտս ու լերդս չորացան,
 Սուրբ Սարգիսը ինքն եղաւ ինձի պաշտպան,
 Նրա սիպտակ ձիուն նստայ ու եկայ:

Եթէ իմ սիրուհին ինձի որոնէ,
 Թուխ ծամերը ուսին փռած ծածանէ,
 Պարօններից մէկը թէ ինձ հարցանէ,
 Կարինի լեռներից թռայ ու եկայ:

Ընկերների խումբը ինձի բռնել են,
 Ցաւակից, բարեկամ ողջ մոռացել են,
 Լսեցի որ Սանամին հարս արել են,
 Հարսանիքն հալապում իմացայ եկայ:

Աշխարհք կասէր կսպասէ սիրականս,
 Յոյսը չը կտրելով պահեց նշանս,
 Մինչ եօթը տարի էր ուխտ ու պայմանս,
 Ես այդ ուխտին հաստատ կացայ ու եկայ:

Մատաղ լինիմ ես քոյ վարքիդ ու բարքիդ,
 Հոգիս փոխարէն տամ, Սանամ, քոյ կեանքիդ,

Աշխարհք թող մտիկ տայ նոճի հասակիդ,
Թանկագին հանդերձներդ առայ ու եկայ:

Այս բերկրառիթ խօսքերից ամեն տեսակ կասկած փա-
րատվում է... Ծախ—Սանամի ներքին կողմն սկսում է այրու-
ել... այլ ևս համբերել ու տանել չի կարողանում... Իրան
ծածկող եօթը ծալ վարագույրները մի կույմ թողած, բաց-
արձակապէս առաջ գալով, հրապարակօրէն հանդիսական-
ներին,— „տեսէք, ասում է, ո՛վ հանդիսականներ և վկայ
եղէք, որ այս Աշըղ—Ղարիբը ճակատագրից վիճակուած իմ
խոյ սիրականն է ու ես էլ նրա սիրուհին եմ... Իսկ այդ
Ծախվալատի հետ բնաւ յարաբերութիւն չեմ ունեցել...“
ասելուն պէս, Ծախվալատը ծածկուած տեղից հրապարակ է
դուրս գալիս... — „Ես այդ բանից իսպառ տեղեակ չեմ եղել
պարոններ, ինձ մի մեղադրէք, ասում է... Նստեցէք և ու-
րախուժիւններդ արէք... Աստուած եղածն օրհնէ...“:

Ծախվալատի այս խոստովանութեան և զղջողական խօս-
քերի վերայ, հանդիսականները հանդարտվում և շարունա-
կում են իրանց ուրախութիւնը... Իսկ Ծախվալատը իւր
արածների համար մի քիչ աղօթելուց ու զղջալուց յետոյ,
Ծախ—Սանամին հրապարակապէս ասում է.— „զնձ այսու-
հետեւ հանգիստ կաց սիրելիս... Աստուած բարի վայելում
տայ, միասին ծերանաք... Տէրը ձեզ երկուսիդ միմեանց բաշ-
խէ ու երկար տարիք ուրախ սրտով ապրիք...“:

Այս բարեմաղթութիւնից յետոյ, Ծախ—Սանամը դար-
ձեալ մանում է վարագույրի ետեւը... Իսկ Աշըղ—Ղարիբը
մտածմունքի ծովից դուրս գալով, սրտի չափազանց ուրա-
խութիւնից սազն առնում է ձեռքն ու կրակուած երգում.—

Հիւսնիւնա նատանտան սաթըր իթմայա,
Զիլֆի սիյահըն քիմի նիխապ օլմագ,
Իւֆթատինա բու զիւլգարի ջիհանտա,
Հիւսնի անըն քիմի աֆիթսպ օլմագ:

Աշըլմատան ղոնչա զիւլըն տիւրմիշամ,
Իւսուֆ զալեահատան դարսլար ալմիշամ,
Բան Ֆալաք այնասի գեօկտա գեօրմիշամ,
Երտա հիւսնի քիմի մահիթսպ օլմագ:

Սանըն վէճհին արգուլալիպ գեալանլար,
Ղուրպաթ էլտա ղիմաթընի բիլանլար,
Դիւնեա գեօղի իլա սանի գեօրանլար,
Բիթար օլուր գեօգուտա ջալսպ օլմագ:

Բան Ղարիբամ արթար ահ իլա գարըմ,
Մեհնաթի դարտընա համ գերիֆթարըմ,
Թաք սան էօլմա բանըմ զիւլ իւլլի եարըմ,
Ղուրպանըն օլսամ Թիֆլիզ խարապ օլմագ:

Հայերեւն քարգ.

Չքնաղ դէմքդ արգեօք սլմնից ես ծածկում,
Թուխ ծամերդ երեսիդ քօղ չի լինի,
Անկանելով այս վարդենեաց աշխարհում,
Ինձ նմանն արեգակ ու հող չի լինի:

Կարմիր վարդը գեռ չը բացուած եմ հասել,
Յովսէփ գեղեցիկից եմ դասերս առել,
Ես բաղդի հայելին երկինքն եմ տեսել,
Երկրում լուսնի նման մի օղ չի լինի:

Քոյ սուրբ սէրդ միտք բերողը—եկողը,
Օտար երկրում թանկ յարգըդ ճանաչողը,
Աշխարհքի աչքերով քեզի տեսնողը,
Միշտ անտրտում, աչքերին ցօղ չի լինի:

Ես Ղարիբն եմ, ախուվախս շատացաւ,
Հագս անելով վիշտ ու ցաւս բազմացաւ,
Դու մի տխրիր, իմ սիրուհի, կաց անցաւ,
Զոհ որ լինիմ, վերաս լացող չի լինի:

Իսկ այնուհետև Ղարիբը Շահ—Սանամին մի քանի
երգիծական խօսքեր է ուղղում.—

Բաշխա դօսթ իսթատի փէլտա էթմայա,
Նարըն բանա էհթիպարի եօխ իմիշ,
Բաշլամիշ եօլսուզ իշլար տութմաղա,
Նարըն բանա էհթիպարի եօխ իմիշ:

Բազիրկեանտան բան խապարընի ալտըմ,
Աշքըն գեամըսընի իւմմանա սալտըմ,
Սանամի Թիֆլիզտա բան սատրխ սանտըմ,
Նարըն բանա էհթիպարի եօխ իմիշ:

Հայերէն թարգ.

Կամենում էր մի նոր բարեկամ ճարել,
Սիրուհիս ինձ հաւատարիմ չէ եղել,
Սկսել է անկանոն գործ ձեռնարկել,
Սիրուհիս ինձ հաւատարիմ չէ եղել:

Տեղեկութիւն առայ վաճառականից,
Ուզեցել է դառնալ իրայ պայմանից,
Թիֆլիզ մարդ է ճարել գաղտնի ինձանից,
Սիրուհիս ինձ հաւատարիմ չէ եղել:

Մի քիչ շունչ առնել հագստանալուց յետոյ, դարձեալ
Սանամին վիրաւորական խօսքեր է ուղղում.—

Երի վար երի իւզա գիւլիւճի,
Նէշուն ըսմարլատըն գեալ դէյի—դէյի,
Նտտի իլ տըր զուրպաթ էլա բաքլարամ,
Գիյմատըմ աննըմա շալ—դէյի դէյի:

.
. 1)

Գեալտըմ բուլտում սանի գեալին օլմիշսան,
Ելլար իշուն բանի ալ դէյի—դէյի:

Բիր գիւլ տուբա բիլսամ դօստըն բաղընտան,
Բիր փուսասի ալսամ ալ եանաղընտան,
Ղարիբ դէր քի աշտըմ Թիֆլիզ տաղընտան,
Ամսամ տօտաղընա պալ դէյի—դէյի:

Հայերէն թարգ.

Գնա՛, գնա՛, առ երեսս խնդացող,
Ինչո՞ւ ստիպեցիր թէ արի՛ արի՛,
Եօթ տարի քեզ համար եղել եմ լացող,
Ե՛ր հարկադրեցիր թէ արի՛ արի՛:

Եկայ տեսայ հարս ես եղել սիրական,
Երեսիդ ես առել քօղը հարսնութեան,
Ոտնատակ ես տուել ուխտդ անպայման,
Ել ո՛ւր ասացիր թէ շուտ արի՛ արի՛:

Վարդեր պիտի քաղեմ ձեր այգիներից,
Մի համբոյր ստանամ կարմիր այտերից,
Ղարիբս եկայ անցայ բարձր լեռներից,
Ինձ զուր յորդորեցիր թէ արի՛ արի՛:

Աշքը—Ղարիբի այս վիրաւորական խօսքերին Շահ—Սա-
նամը չը դիմանալով, և իւր վերայ բարգաճ այդ մեղադրան-
քը վերացնելու համար, որպէս զի աշխարհքի առաջին չը
խայտառակուի, Աղճա—Ղըզին ուղտրկում է Ղարիբի մօտ,
որ իւր միտքն ու նպատակը նրան հասկացնէ: Եւ այդ իսկ
պատճառով էլ Աղճա - Ղըզը հետևեալ սրտաշարժ ու գրաւիչ
երգն է երգում.—

1) Բնագրի մէջ երկու տողը պակաս էր, բայց մենք երգի բովանդա-
կութիւնն է նկատի ունենալով Հայերէնի մէջ լրացրինք:

Ղուբապանըն օլայիմ աման էլ Ղարիբ,
Եար սանըն գեալտըղըն շիմտի աղնատի,
Սիահլարի չըխար, գէյտի ալլարի,
Եար սանըն գեալտըղըն շիմտի աղնատի:

Սանի օնա էօլտի գէյու գէչտիլար,
Ջիկարճիկըն գիլիմ գիլիմ բիչտիլար,
Գարունընտա նէճա եարա աչտիլար,
Եար սանըն գեալտըղըն շիմտի աղնատի:

Տուլթուղի սանն իչուն բինլարճա եասի,
Աղլայընճա ալամ տուլթար սատասի,
Միւթտան սիլտի հափ գեօնկլիւմըղըն փասի,
Եար սանըն գեալտըղըն շիմտի աղնատի:

Շահ-Սանամա էթմա, Ղարիբ, դահրի սան,
Էլլարամ ըիճա սանա բունի բան,
Ջահիր իչար սօրա օ ալթուն բատան,
Եար սանըն գեալտըղի շիմտի աղնատի:

Անան բաճին, Ղարիբ, ղօյտուն տա գէթտըն,
Թիֆլիզի անմայըպ ունուլթուուն գէթտըն,
Շահ—Սանամի շիմտի հալա շազ էթտըն,
Եար սանըն գեալտըղըն շիմտի աղնատի,

Բաշըն օլմիշ իտի գընտան ղօնաղի,
Աթմազ իտի բիր թարաֆա այաղի,
Հազըր իտի ալտա ղահիր չանաղի,
Եար սանըն գեալտըղըն շիմտի աղնատի:

Հայ. քարզ.

Ես մատաղդ լինիմ ո՛վ սիրուն Ղարիբ,
Սիրունհիդ քոյ գալդ հիմա իմացաւ,

Սեւերը հանելով հագաւ կարմիրը,
Սիրունհիդ քոյ գալդ հիմա իմացաւ:

Եկան նրան քոյ մահդ իմաց տուին,
Լերդ ու թոքը կարծես թէ մաս մաս արին,
Սրտի խորքում քանի վերքեր բաց արին,
Սիրունհիդ քոյ գալդ հիմա իմացաւ:

Քեզ համար սուգ անելով հոգին ելաւ,
Լաց լինելով ձայնը երկինք բարձրացաւ,
Երբ աւետիք տուին քիչ հանդստացաւ,
Սիրունհիդ քոյ գալդ հիմա իմացաւ:

Ղարիբ, Շահ—Սանամին մի անի զրկանք,
Խնդրումեմ պատճառես նրան սփոփանք,
Թոյն խմելով չի ունենայ առողջ կեանք,
Սիրունհիդ քոյ գալդ հիմա իմացաւ:

Մայրդ, քոյրդ, Ղարիբ, թողիր գնացիր,
Թիֆլիզը մոռնալով այլ տեղ մնացիր,
Հազիւ թէ Սանամին քիչ խնդացուցիր,
Սիրունհիդ քոյ գալդ հիմա իմացաւ:

Գլուխը դառել էր լատուկ բռնատուն,
Նստած տեղից չէր շարժվում օրն իբուն,
Ձեռքը պատրաստ ունէր բաժակով լի թոյն,
Սիրունհիդ քոյ գալդ հիմա իմացաւ:

Աղճա-Ղըզի առածներին իբրև պատասխան, Աշըղ—Ղա-
րիբը հետեւեալ մի տուն երգն է ասում և Աղճա—Ղըզի
ձեռքով գրաւօր ուղարկում Շահ—Սանամին.—

Լաթիֆա տըր բիթիւն սօղլարմ օնա,
Գիւճանմասըն սախըն սավտիկիմ բանա,

Ավֆ էլլասըն խաթամ օ զուճրի ջանա,
Գիւճանմասըն սախըն սավտիկիմ բանա:

Հայերէն թարգ.

Կատակ էր իմ բոլոր խօսքերս նրան,
Չը վշտանայ իմ սիրուհիս, չկայ բան,
Տատրակս թող ներէ սխալս իսկական,
Չը վշտանայ իմ սիրուհիս, չկայ բան:

Ղարիբի դրուժեան մասին տեղեկութիւն առնելուց
յետոյ, Շահ—Սանամը նոյնպէս Աղճա—Ղըզի ձեռքով նրան
գրուոր այս պատասխանն է ուղարկում.—

Է՛յ Ղարիբ գեօղլար իտի դիլտայիմ սանի,
Ետտի իլ լայեղ տըր թարկ էթտըն բանի,
Ահուզար էլլար Սանամ Լէլի նիհարի,
Աթէշի աշգընտա եանմիշ տըր թանի:

Հայերէն թարգ.

Ղարիբ, սպասելով թողիր հեռացար,
Եօթ տարի արժան էր որ ինձ մոռացար,
Ախ վախով է անցել օրըս հասկացար,
Սիրոյ կրակով է այրուել ողջ մարմինս:

Աշըղ—Ղարիբը Շահ—Սանամի այս ասածին դարձեալ
գրաւոր պատասխան է ուղարկում.—

Նա միւրվաթ տըր քի սանըրսըն ստն բանի,
Ետտի իլ տըր հէջ ունուժմատըմ սանի,
Դայմա էլլարտի Ղարիբ ահ ու Ֆիղանի,
Իթմիշ իտի հասրաթինլա զուրպաթի:

Հայերէն թարգ.

Ի՛նչ խիղճ է քոյ կողմից ինձի կշտամբել,
Եօթ տարի է բնաւ քեզ չեմ մոռացել,

Ղարիբիս օրը միշտ ախով է անցել,
Պանդխտութիւնս կարօտիդ մէջ կորել է:

Մէրը Ղարիբի խանդն ու եռանդը գրգռում—զարթեց-
նում է: Շահ—Սանամի փափուկ դրուժիւնը աչքի առաջ բե-
րելով, սազը դարձեալ քօքում է ու նրա սիրտը շահելու
համար, որ իրանից չը վշտանայ, դէմ առ դէմ սկսում են
հետեւեալ կերպով երգել.—

Ղարիբ

Արատըմտա բուլտում սանի բու երտա,
Ղալտըր նիգապընի տուրմասըն երտա,
Ձանըմ զուրպան օլսուն մարա օղլի մարտա,
Ուզանտըմտա Սանամ բան սանա գեալտըմ:

Շահ—Սանամ

Պարմաղըմտա իքեան ջալահիր խաթամ,
Մայիլ օլտում գեագտըմ, չօխ չաքտըմ մաթամ,
Գեալ աֆանտըմ էօլտիւր, էլլամա սիթամ,
Մարհասլա սավտիկիմ սան սաֆա գեալտըն:

Ղարիբ

Իւտիւմըզա զատըր Մէվլա նազըր տըր,
Ղըրխլար բիզըմ իլա շիմտի հազըր տըր,
Բու իշլարի էտան ջիւմլա Խըզըր տըր,
Արզուլատըմ սանի, բան սանա գեալտըմ:

Շահ—Սանամ

Ղատըր Մէվլամ իւտիւմըզա նայիպ տըր,
Գիզլի սըրըմըզի աչմա, այիպ տըր,
Շահ—Սանամըն եարի Աշըղ—Ղարիբ տըր,
Մարհասլա սավտիկիմ սան սաֆա գեալտըն:

Հայերեն քարգ.

Ղարիք

Որոնելիս գտայ ես քեզի այստեղ,
Վեր առ քօղը երեսիցդ ո՛վ շքեղ,
Մատաղ լինիմ քոյ հասակիդ փառահեղ,
Վեր կենալով, Սանամ, ես քեզի եկայ:

Շահ—Սանամ

Մինչ մօտս էիր, ես խիտ էի թանկագին,
Սիրում էի քեզի սրտով կաթոգին,
Մի սպանիր, արժան եմ քո խնամքին,
Բարով իմ սիրելի, դու բարով եկար:

Ղարիք

Վերաներս մեծ ստեղծողը հսկեց,
Սիրոյ կթխան մեզի համար պատրաստեց,
Սուրբ Սարգիսը մեր գործերը կատարեց,
Կարօտնալով, Սանամ, ես քեզի եկայ:

Շահ—Սանամ

Մեզ վերայ հսկողը Արարիչ Տէրն է,
Մեր ունեցած սէրը Նրա նուէրն է,
Շահ—Սանամը իսկ Ղարիբի ընկերն է,
Բարով իմ սիրելի, դու բարով եկար:

Երբն աւարտելուց լետոյ, դէմ լանդիման գալով, իսկոյն Ղարիբը պահարանը բաց անելով հետը բերած հանդերձները Շահ—Սանամին ցոյց է տալիս: Բայց այդ ժամանակ Չահ—Սանամի դժուարը գալիս է. — «ես էլ, փառք Աստուծոյ, հանդերձներ ու ակնեղէններ շատ ունիմ... ես միայն

Քոյ կարօտդ էի քաշում և սևերի մէջ անցկացրի օրերս: Իսկ դու այժմ ինձի զարդ ու զարդարանքով ես ուզում գրաւել՝ ասելով՝ սկսում է լաց լինել. ու տեսնենք թէ Ղարիբին երգով ինչեր է ասում.—

Դիւկլա, գեալ սօղիւմի աման հէյ Ղարիբ,
Բահաթ իզն գեօրմատըմ եար սան գիտալի,
Թիքտըմ լիպաս, ամմա գէյտըմ ղարալար,
Գէյընըպ սալընմատըմ եար սան գիտալի:

Ավլարըմըն էօնի իւքսաք թափալար,
Անտա եաղմիւր եաղար բոււնտա սարփալար,
Սանտըղըմտա տուրտի ալմաս քիւփալար,
Թախընըպ գեազանմատըմ եար սան գիտալի:

Ավլարըմըն էօնի իւքսաք ղալալար,
Սանա խըզմաթ էտար ղուլլար թալալար,
Սանտըղտա քիւփլանտի չիֆթա սալալար,
Գէյընըպ ղուշանմատըմ եար սան գիտալի:

Սանամ հէյ տըր մահ ջամալըմ աչալի,
Զիւլֆի սիահըմլա իւզըմ փաչալի,
Ետտի իլտա օնդ օրտ բայրամ գէչալի,
Խընա եախընմատըմ եար սան գիտալի:

Հայ. քարգ

Լսէ Ղարիբ ու իմ խօսքիս դու արի,
Մի օր չուրախացայ ինչ դու գնացիր,
Հանդերձ կարել տուի, բայց սևեր հագայ,
Հագած չը նազկըտայ ինչ դու գնացիր:

Օր արև չը տեսայ, իմ արեգակս,
Ամպի տակ ծածկուեց պայծառ լուսնակս,

Պահարանում մնաց անգին մանեակս,
Ման գալու դուրս չեկայ ինչ դու գնացիր:

Տանս դուռը սև քարերով շարեցին,
Ամեն կողմից ինձ անխնայ քարեցին,
Պահարանում զոյգ կապէքս փթեցին,
Ոչ մի օր չը հագայ ինչ դու գնացիր,

Սանամիս սիրտը բնաւ չը բացուեցաւ,
Մազերս սիպտակեց, դէմքս թուռմեցաւ,
Եօթ տարում տասնուչորս մեծ տօն անցկացաւ,
Ես չը դրի հինայ ինչ դու գնացիր:

Երգը վերջանալուց յետ՝ հանդիսականները հաւաքվում էն Ղարիբի մօտ ու ասում.— „դու բարով հազար բարի եկար, ո՞վ Աշըղ—Ղարիբ... Մենք քոյ գալուդ համար շատ ուրախ ենք ու գոհ. բայց տեսնում ես որ այս միջոցիս Շահ-վալատին մեծ զրկանք եղաւ... Այս հարսանիքի պատճառով շատ փողեր ծախսեց. իւր բոլոր ձգտումներն ապարդիւն անցաւ... Մեր պատուի ու նրա սրտաշահութեան համար, Աստուծոյ սուրբ կամքով ու կամեցողութեամբ, բեր քոյրդ էլ նրան տանք... խնդրում ենք որ մեր այս մտքին ու խորհրդին համաձայն լինիս ու մեր խօսքը գետին չը ձգես...“ ասելուն պէս՝ կտրիճ Աշըղ—Ղարիբը նրանց.— „մի քոյր է՝ թող ձեզ մատաղ լինի... ձեր թանկագին պատուի համար, շատ լաւ կը լինի, ուրախութեամբ կտամ“ ասում է: Այդ ժամին սկսում են Շահվալատին որոնել, բայց չեն գտնում: Մի քանի վայրկենից յետոյ՝ յանկարծ ինքն իրան գալիս է խնջոյքի մէջ: Հանդիսականներն եղածը նրան յայտնում են... նա էլ ընդունում է ու եղածից խիստ գոհ մնում... Այս մասին Աշըղ—Ղարիբը մօրը հաղորդելով, նա էլ իւր համաձայնութիւնն է տալիս: Նոյնպէս եղբօր կամքին ուրախութեամբ հպատակում է և նրա քոյրը՝ ու այդ մասին ամեն ինչ վարջացած են համարում...: Այժմ դառնանք Ղարիբի

մօր աչքերը բացուելուն, որի մասին եղած խօսքերը Ղարիբը սազ ածելով է արտայայտում և մայրն էլ հանդէպը ընդդիմախօսում է.—

Դօն բարի—դօն բարի իւզըն գեօրայիմ,
Դինկլան նանամ, դինկլան, Ղարիբըն սօզի,
Սօլլան նանամ, սօլլան, դարտըն բիլայիմ,
Նան օլտի նանամ սանըն շու իքի գեօզի:

Վաղիսասի

Օղնուլ, բանըմ Հախա տօղրի տըր էօզըմ,
Դինկլան օղուլ, դինկլան, բու շիրին սէօզըմ,
Սանըն հասրաթինլա գեօրմիյօր գեօզըմ,
Գեօզտան օլտում օղուլ օղուլ դիարաք:

Ղարիբ

Ձանըմ նանան, բան մուրատա արայիմ,
Սանըն գեօզլարընի գեօրիւր գեօրայիմ,
Բիր իլլաճըմ վար տըր օնի սուրայիմ,
Ղօրխման նանա, ղօրխմա, Մէվլա քեարիմ տըր:

Վաղիսասի

Օղնուլ, եախտըն բանի հիճրան տա նարա,
Լրակընա վուրտուն սատ հազար փարա,
Գեօզսիւզլարա, օղնուլ, օղնուլմի չարա,
Գեօզտան օլտում օղուլ օղուլ դիարաք:

Ղարիբ

Իւստիւմըզա բիգիմ Մէվլա տըր հազըր,
Իւչլար տա ետտիլար Ղըրիլար տըր նազըր,
Բու իլլաճի վերան Խըզըր տըր, Խըզըր,
Հէչ խավֆ էթմա, նանան, Մէվլա քեարիմ տըր:

Վաղիսասի

Փաջ զհատա եարալի տըր իւրալիմ,
Էօլմատան սանի բիր քեարա գեօրայիմ,
Գեաթըր իլլաճընի համան սիւրայիմ,
Ումարըմ աչըլար ան օղուլ գեօղըմ:

Ղարիբ

Ումարըմ բիզլարա բահմաթ սաչըլըր,
Մէվլա զըսմաթ էտար զամգամ իչըլըր,
Սըթիւն բիւթիւն էլլա գեօղըն աչըլըր,
Խըզըր վէրտի բունի Մէվլա քեարիմ տըր:

Վաղիսասի

Բիզըմ Մէվլայա տօղրի տըր էօղիւմըզ,
Խալիս եանընտա զըզարմանըն իւզըմըզ,
Բու միւլտանա եօխտուր օլլում սէօզիւմըզ,
Բու գեօղլարլա սանի ջանըմ գեօրա իմ:

Հայերէն քարգ.

Ղարիբ

Մէկ դարձիր դէպի ինձ երեսդ տեսնեմ,
Լսիր մայրիկ, լսիր, որդուդ ասածը,
Արդեօք թնչ պատահեց, մի ասն լսեմ,
Սոս մայրիկ, մի մերժեր իմ խնդրածը:

Մայրը

Գիտէ Աստուած որ ճշմարիտն եմ ասում,
Լսիր որդի, լսիր, խեղճ մօրդ խօսքը,
Կարօտդ քաշելով՝ աչքս չի տեսնում,
Լսիր որդի, լսիր, խեղճ մօրդ խօսքը:

Ղարիբ

Անուշ մայրիկ, բազդ էր որոնում որդիդ,
Մի վհատիր, հաստատուն լոյս դիր սրտիդ,
Մօտս մի դեղ կալ բեր քսեմ աչքերիդ,
Մի վախենար մայրս Տէրն ողորմած է:

Մայրը

Որդի, ինձ այրեցիր էլ օգուտ չունի,
Կտարած սիրտս ջանք արա նորից շինի,
Կուրցածներին մի թէ հնար կը լինի,
Լսիր որդի, լսիր, խեղճ մօրդ խօսքը:

Ղարիբ

Գլխներիս ունինք Տէր և բարերար,
Մեր ամեն ցաւերին նա է հոգատար,
Գեղը ինձ տուել է Սուրբ Սարգիսն արգար,
Մի կասկածիր մայրիկ, Տէրն ողորմած է:

Մայրը

Սրտիս մէջը անբօլ վէրքեր կը կրեմ,
Չը մեռած, բաց աչքով, երբ քեզ կը տեսնեմ,
Բեր այն դեղը որ ես աչքերիս քսեմ,
Հաւատումեմ որդի, որ կրկին բացուի:

Ղարիբ

Հաւատան, Տիրոջ կամքը չի իմացուի,
Նրա տուած դեղովը դու լուացուի,
Յոյս ունիմ որ աչքերդ իսկոյն կը բացուի,
Մի կասկածիր մայրիկ Տէրն ողորմած է:

Մայրը

Տէրը արարիչ է երկրի և երկնի,
 Այլոց մօտը մեզ սևերիս չի թողնի,
 Սասճիս մէջ բնաւ կասկած չի մտնի,
 Այս աչքերով, հոգիս, քեզ պիտի տեսնեմ:

Վերուստէն յայտնուած Սուրբ Սարգսի ձիու ոտի տակի
 հողը Ղարիբը խուրճինից հանելով լցնում է մի բաժակ ջրի
 մէջ, խառնում ու քաշում է մօր աչքերը թէ չէ, Աստուծ
 հրամանով իսկոյն բացվում են ու առաջուանից աւել
 պայծառ—լուսաւոր են լինում ու լաւ տեսնում... նոյն
 ժամայն Ղարիբը սազը ձեռքն է առնում ու տեսնենք թէ
 մօրն ինչեր է ասում.—

Գեօղլարըն աչքլտի, օլսուն միւպարաք,
 Հար նա քի եաշմիշ տըր հախի թապարաք,
 Վէրտի բու իլլաճի բիր ու միւպարաք,
 Սըթիս իլա գեաթըրտըմ նանա բան սանա:

Վաչիսաւի

Եիւքը օլսուն, բիգա ըահմաթ սաչըլտի,
 Իւսթիւմըգա հիւլլա ղօնի բիչըլտի,
 Եաշն ուզուն օլսուն գեօղըմ աչըլտի,
 Եիւքը գեօրտիւմ, շիւքը, Ղարիբըմ սանի:

Խալաս օլտուղ շիւքիւր ղամտան եարատան,
 Ոքսիկ օլմա Ղարիբ, չըխմա բուրատան,
 Դարման վէրտի բիգա բիզըմ Եարատան,
 Չիւքը էլլա Մէվլայա աչըլտի գեօղիւմ

Հայերեն բարձր.

Աչքերդ բացուեցան, փառք տուր Արարչին,
 Ինչ որ դու քաշեցիր՝ չը տեսնես կրկին,

Այս գեղը շնորհեց Տէրը երկնային,
 Ես՝ հաւատով բերի մայր իմ քեզ համար:

Մայրը

Փառք Աստուծոյ, խնամքը տեսնուեցաւ,
 Այս հրաշքը մեզ վերայ կատարուեցաւ,
 Կեանքդ երկար լինի, աչքերս բացուեցաւ,
 Փառք որ տեսայ, փառք, իմ Ղարիբս քեզի:
 Փառք որ ազատուեցանք հոգսից ու ցաւից,
 Այսուհետեւ մի հեռանար մեր տանից,
 Մեզ օգնութիւն հասաւ Տէր Աստուածանից,
 Փառք լինի Արարչին աչքերս բացուեց:

Ղարիբի մօր աչքերը բացուելով, որ մի մեծ աւետիք
 էլ այդ էր, այնուհետեւ բարեկամները մի տեղ հաւաքուած
 եօթը զօր եօթը գիշեր Եահվալատի հարսանիքն են անում...
 Սահայն հրաւիրեալները դեռ չը հեռացած, Աշըղ—Ղարիբի
 և Եահ—Սանամի համար էլ են կենաց բաժակներ նուիրում
 ու մի և նոյն ժամանակ ցանկանում ու առաջարկում Ղա-
 րիբին, որ Եահ—Սանամի համար բերած նոր հանդերձները
 կուզեն տեսնել:

»Որովհետեւ ես ձեզ առաջուց յայտնեցի, ասում է Ղա-
 րիբը, ինչն էլ, եթէ արժան ու յարմար էք համարում, հա-
 մեցէք դուք էլ տեսէք ու շնորհաւորէք«:

»Շատ գեղեցիկ բան կըլինի ատելուն պէս, Ղարիբը
 հանդերձները բերելով՝ մի առ մի ցոյց է տալիս հանդիսա-
 կաններին: Այնուհետեւ շնորհաւորելուց յետոյ, Ղարիբի յա-
 տուկ ցանկութեամբ հանդիսականներն սկսում են իւր և
 Եահ—Սանամի հարսանիքն անել, որ տեսում է քառասուն
 զօր ու գիշեր: Այսպիսի շքեղ ու փառաւոր հարսանիք ոչ ե-
 դել է և ոչ էլ պիտի լինի: Հարսանիքը վերջանալուց յետոյ,
 հրաւիրեալները նոր զոյգերի համար ջերմ բարեմաղթութիւն-
 ներ անելով՝ գնում են իրանց տները՝ հազարաւոր առասպե-

լական պատմուածքներ անելով հարցասէր ժողովրդին այդ հարսանիքի մասին:

Ղարիբը բերած հանդեպներն ու թանկագին իրեղենները սիրուհու առաջը լցնելով — «աչքիս լոյս ու հոգոյս հատոր աննման Սանամ, այս բոլորը քեզ համար եմ բերել. եկ հագիր որ աչքս փո տեսնեմ» ասում է ու սազը ձեռքն առնելով տեսնենք թէ Սանամի առաջն ինչ լեզու է թափում. —

Ղուրբանքն օլալիմ աման եար Սանամ,
Նազլի-նազլի գեալ դարչըմտա տուր Սանամ,
Բիր-բիր լիպասլարի թարիֆ էտալիմ,
Գէլըն գուշան վէր գեօյնուճա նուր Սանամ:
Սանամ, սանա բան էլլարամ դիլակի,
Բինա ալարմ շու բիւրիւնճիւք քեօհնակի,
Ետտի իւզա ալարմ իշբու ելակի,
Սալվի բօյա լալեազ օլտի դէլ Սանամ:
Բէշ բինա տըր անթարիլա շալուարի,
Օն բինա տըր օ ջափահիր քեամարի,
Իւշ բինա տըր բիր Փաս իլա չամպարի,
Ինճուլարի գիզտըրմիշամ գէլ Սանամ:
Բին գուրուշա Հալապըն չիշաքլիսի,
Բէշ իւզա ալընտի Զամըն դութնուսի,
Գօրա բինա տըր Հինտն բու Լահօռիսի,
Սանա բունլար փաք եաղըշըր գէլ Սանամ:
Բան գեօրմատըմ սանըն քիմի նազիկի,
Բէշ բինա տըր իշբու գեօվհար իւզիւկի,
Իւշ բինա տըր դօլունըն բիլազիւկի,
Աղիս դօլլարա լալազ օլտի թախ Սանամ:
Նա խօշ օլուր շու Թափրիզըն լալասի,
Իւզ գուրուշա բիր սաշընըն սըրմասի,
Էար սանա գեաթըրտըմ Հալապ խնասի,
Աղիս ալլարա եաղըշըր դօլ էլ Սանամ:

Սանամ, գեաթըրմիշամ բինլիք գուշաղի,
Բին գուրուշա Փարաճա վէ եաշմաղի,
Իւշ իւզա տըր աղիս թօփուղըն բաշմաղի,
Բալազ պալտըրլարա փաք եաղըշըր գէլ Սանամ:
Փաք խօշ օլուր շու Ղարիբըն գեազմասի,
Շաքեար իլա բատամինան ազմասի,
Իքի իւզա տըր նալընըն ջըզմասի,
Աղիս թօփուղա օլտի սէզանի Սանամ:
Սանի բանա վէրտի ջանապըն դանի,
Ղըրիս քեսալի ալարմ օ գեարտանլըղի,
Գիմսալարա էլլամա նատանլըղի,
Գիւլաշալիմ օյնաշալիմ էլ Սանամ:

Հայերեն քարզ.

Ես մատաղգ լինիմ ո՞վ իմ գեղանի,
Նագելով մօտս արի պատուական Սանամ.
Հանդերձներդ մէկ մէկ դովեմ աղաւնի,
Հագիր կապիր սրտիս սիրական Սանամ:
Գիտցիր Սանամ, քեզ մօտ է իմ խնդիրքը,
Հազար դահեկանի առայ շապիքը,
Եօթ հարիւրի է սիրուն բաճկոնիկը,
Քոյ նոճի հասակիդ է արժան Սանամ,
Հինգ հազարի անդրավարտիքդ թանկագին,
Տասն հազարի ակնազարգ գօտիդ անգին,
Երեք հազար տուի ֆատին, լաչակին,
Իմ կողմից ընդունիր այս ընձան Սանամ:
Հազարի է Հալապի ծաղկեալ քօղը,
Հինգ հարիւրի Շամալ գութնի կտորը,
Չօրս հազարի այս չինտու շալ լահօռը,
Իսկ քեզ կըյարմարի աննման Սանամ:
Ես չեմ տեսել քեզ նման մի գեղանի,
Հինգ հազարի առայ մի հատ մատանի,
Երեք հազար ապարանջանքդ ոսկի,
Քոյ սիւլտակ թուերիդ է պատկան Սանամ:

ԳՍԽ 9854

Թաղբիղի կակաչը լաւ է դուրս եկել,
 Հարիւրի է վարսակալըդ ոսկեթել,
 Քեզ համար Հալաղից հինայ եմ բերել,
 Դիր ձեռքերըդ, է հաճոյական Սանամ:

Հագարի եմ առել կերպաս գօտիկը,
 Սի հագարի է գընչկալն ու լօգիկը,
 Երեք հարիւրի է այս գոյգ կօշիկը,
 Սիպտակ ոտքերիդ յարմար կգան Սանամ:

Խիստ հաճոյ է Ղարիբիս շորորալդ,
 Եաքարախառ նռան հատիկ կուլ տալդ,
 Երկհագարնոց մուճակներով ման գալդ,
 Սիրականիդ խիստ է դուրական Սանամ:

Քեզ ինձ բաշխեց երկնային մեծ էակը,
 Քառսուն հագարի է այս մի մանեակը,
 Հարիւր հագար է ճակդիդ գարդմանակը,
 Ղարիբիս է շատ ուրախական Սանամ:

Ղարիբը բերածները գովաբանելով հագցնելուց լե՛վերան նայելուց այլ ևս չի կշտանում: Երկու սիրահսոտքի կանգնելով աղօթում են առ Աստուած ու թիւն մատուցանում Սրան, որ իրանց սղջ առօղջ անգամ միմեանց արժանացնելով ուրախացուց և այս աշխհի մէջ փափագներն ու նպատակներն անկատար չը թողեց:

Այնուհետև միմեանց ձեռք բռնած մտնում են նընջարան, անուշ քնի հանգստութիւնը վայելելու:

Հեքեաթաբանների ասելով, հեքեաթների հերոսների միայն Աշրղ—Ղարիբն ու Եազ—Սանամն են իրանց մուրագներին հասել և մինչև խորին ծերութիւն միմեանց հետ ուրախ ու երջանիկ ապրել... Տայ Աստուած որ ամեն մաքուր սիրահար սրտեր սրանց նման իրանց նպատակին հասնին ու արժանանան վայելելու: Ամէն:

